



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ռեադմիսիոն (հետընդունման) գործերի վարույթը

Ուղեցույց և ուսուցողական նյութեր
հետընդունման գործընթացում ներառված
պետական մարմինների պաշտոնյաների համար



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐԱՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանում ռեստիտուցիոն (հետընդունման)
գործերի վարույթը*

*Ուղեցույց և ուսուցողական նյութեր հետընդունման
գործընթացում ներառված պետական մարմինների
պաշտոնյաների համար*

Ուղեցույցն ու ուսուցողական նյութերը մշակվել ու հրատարակվել են Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) հետևյալ ծրագրերի շրջանակներում. «Տեխնիկական աջակցություն ՀՀ Կառավարությանը աշխատանքային միգրացիայի սխեմաների նախաձեռնման գործում» (Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող), «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» (Եվրոպական Միության և ՄՄԿ Զարգացման Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող), «Միգրացիայի կառավարման ոլորտի օրենսդրությանը՝ ԵՄ ընդհանուր օրենսդրությանը հնարավոր մոտարկման նպատակով իրազեկվածության բարձրացում» (ՄՄԿ զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող), «Աջակցություն՝ Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմների ստեղծմանը» (Եվրոպական հանձնաժողովի և ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող) և «Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում հետընդունման և վերադարձի գործընթացի արդյունավետ կառավարման կարողությունների զորացում» (ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող):

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և, պարտադիր չէ, որ արտացոլեն Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տեսակետները: Հրատարակությունում օգտագործվող տեղանունները և նյութերի ներկայացումները չեն ենթադրում ՄՄԿ-ի կողմից որևէ տեսակետի արտահայտում՝ կապված որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ վայրի կամ դրանց իշխանությունների իրավական կարգավիճակի, կամ դրանց սահմանների հետ:

ՄՄԿ-ն հավատարիմ է այն սկզբունքին, որ քաղաքակիրթ ու կանոնակարգված միգրացիան շահավետ է միգրանտների և հասարակության համար: ՄՄԿ-ի՝ որպես միջկառավարական մարմնի փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ ուղղված է միգրացիայի ոլորտում առկա մարտահրավերների լուծմանը, միգրացիայի հետ կապված հարցերի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանը, միգրացիայի միջոցով սոցիալ-տնտեսական զարգացման խթանմանը, ինչպես նաև միգրանտների մարդկային արժանապատվության արժեքների ու բարեկեցության ապահովմանը:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելություն
Պետրոս Ադամյանի փողոց 14, ՄՄԿ-ի գրասենյակ, 1-ին հարկ
Երևան 0010, Հայաստան
Հեռախոս՝ (+374 10) 58 56 92
Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
<http://www.iom.int>

© 2013 ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄՄԿ)

Բոլոր իրավունքները պահպանված են: Սույն հրատարակման ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական-որոնողական համակարգում, կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, լուսապատճենահանման, գրառման կամ այլ կերպ՝ առանց հրատարակչի նախնական գրավոր համաձայնության:



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐԱՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ռեստիտուցիոն (հետընդունման) գործերի վարույթը

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

*Հետընդունման գործընթացում ներառված մարմինների՝
ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության
ծառայության սահմանապահ ծառայության,
ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության,
ՀՀ արտաքին գործերի նախարարության,
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն
պետական ծառայության աշխատակիցների համար*

Երևան
2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
1. ՌԵԱԴՄԻՍԻՈՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ	8
1.1 Համառոտ պատմական ակնարկ	8
1.2 Ռեադմիսիոն համաձայնագրերի նպատակները	9
1.3 Ռեադմիսիոն համաձայնագրերի միջոցով լուծվող խնդիրները	9
2. ՀՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՌԵԱԴՄԻՍԻՈՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ	10
2.1 Երկկողմ համաձայնագրեր	10
2.2 Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև.....	11
3. ՍԵՓԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ: ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ	13
3.1 Ո՞ր դեպքերում է Հայաստանը պարտավորվում հետ ընդունել սեփական քաղաքացիներին.....	13
3.2 Անձի՝ ՀՀ քաղաքացիություն ունենալու հանգամանքի հաստատումը	15
ա/ ՀՀ քաղաքացիությունը ապացուցված լինելը	15
բ. ՀՀ քաղաքացիություն ունենալու մասով առերևույթ (prima facie) փաստարկները	17
գ. ՀՀ քաղաքացիության հանգամանքի հաստատումը՝ փաստաթղթերի բացակայություն դեպքում	18
4. ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՈՒՄԸ: ԱՅԴ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ	20
4.1 Ո՞ր դեպքերում է Հայաստանը պարտավորվում հետ ընդունել երրորդ երկրների քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց	20
4.2 Ինչպե՞ս է ապացուցվում հետ ընդունման պայմանների առկայությունը	21
4.3 Որ դեպքերում է «հիմնավորված ձևով ենթադրվում» ռեժիմը կիրառվում.....	22
4.4 Մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինական բնույթի հաստատումը	24
5. ՍԻԱԼՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԸՆԴՈՒՆՈՒՄԸ.....	24
6. ՏԱՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	26
6.1 Տարանցման սկզբունքները	26
6.2 Տարանցման ընթացակարգը.....	28
7. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ ..	29
7.1 ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից ռեադմիսիայի ենթակա անձին ՀՀ վերադարձի վկայականի տրամադրումը	29



7.2 ՀՀ կողմից հետընդունման կամ տարանցման ենթակա անձանց տեղափոխման երթուղու և օրվա մասին իրավասու մարմնին տեղեկացնելը	34
7.3 ԵՄ-ի՝ վտարման նպատակով տրվող ստանդարտ ճամփորդական փաստաթուղթը:	35
7.4 Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման մոնիթորինգը	36
8. ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ	37
8.1 ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-՝ N 1360-Ն որոշումը	37
8.2 ՀՀ Վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 1228-Ա որոշումը	38
8.3 ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի N 300 -Ն որոշումը	38
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	42
ՀԱՎԵԼՎԱԾ 1 Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին	42
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 19-ի N 300-Ն որոշում	66
ՀԱՎԵԼՎԱԾ 3 ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 297-Ն որոշում	72
ՀԱՎԵԼՎԱԾ 4 ԵՄ-ի՝ վտարման նպատակով տրվող ստանդարտ ճամփորդական փաստաթուղթ	81
ՀԱՎԵԼՎԱԾ 5 ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N 1360-Ն որոշում	82
ՀԱՎԵԼՎԱԾ 6 ՀՀ վարչապետի 2012 թ. դեկտեմբերի 12 -ի N 1228 - Ա որոշման	85
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	90



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը սկսած 2002թ.-ից ակտիվորեն ներգրավվել է ռեադմիսիոն՝ վերադարձի համաձայնագրերի կնքման գործընթացում, այն դիտարկելով որպես անօրինական միգրացիայի դեմ պայքարի գործիքներից մեկը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարությունը նմանատիպ 11 համաձայնագրեր է ստորագրել 13 պետությունների հետ, որոնցից 12-ը եվրոպական երկրներ են: ԱՊՀ երկրներից այդպիսի համաձայնագիր է կնքվել Ռուսաստանի Դաշնության հետ:

ՀՀ կողմից ստորագրված ռեադմիսիոն համաձայնագրերի կիրակումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են համապատասխան որոշումներ, որոնցով սահմանվել են ինչպես համաձայնագրերի համար ՀՀ կողմից իրավասու մարմինը, այնպես էլ այդ գործընթացում ներառված պետական մարմիններից յուրաքանչյուրի կողմից իրականացվելիք գործառնությունները և դրանց ժամկետները՝ համաձայնագրերի շրջանակներում վերադարձի ենթակա անձանց վերաբերյալ դիմումները ստանալիս:

2013թ.-ի ապրիլի 19-ին Հայաստանի Հանրապետությունը առանց թուլտվության բնակվող անձանց մասին ռեադմիսիոն համաձայնագիր է ստորագրել Եվրոպական Միության հետ, որն ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից:

Այս համաձայնագիրը, հնարավորություն է տալիս ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ սահմանել և իրականացնել միասնական ընթացակարգեր՝ Կողմերի տարածքներում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման հարցերում: Համաձայնագրում սահմանված են նաև նոր դրույթներ, որոնք առկա չեն ՀՀ-ի կողմից նախկինում ստորագրված երկկողմ համաձայնագրերում, ինչպես օրինակ հետընդունման հայցերին արագացված ընթացակարգով պատասխանելը:

Համաձայնագրի կիրակումը պատշաճ մակարդակով ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են որոշումներ, որոնցով մի շարք հարցերի թվում նշված է նաև հետընդունման գործընթացում ներառված պետական մարմինների (ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ ծառայություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն) աշխատակիցների ուսուցման կազմակերպումը:

2013թ.-ի հուլիս-օգոստոս ամիսներին, Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, 3 կյոռ սեղան քննարկումների ձևաչափով կազմակերպվեց հիշատակված ուսուցումը: Այդ հանդիպումների ընթացքում, մանրամասն, կոնկրետ օրինակների հիման վրա ներկայացվեցին



Եվրոպական Միության հետ կնքված համաձայնագրի յուրաքանչյուր հոդվածի կիրարկման առանձնահատկությունները:

Վերոհիշյալ կյոբ սեղան քննարկումների արդյունքներով՝ ուսուցման ընթացքում հնչած կարծիքների հաշվառմամբ փորձագետների կողմից մշակվեցին 3 տարբեր ուսուցողական նյութեր՝ նվիրված համաձայնագրի տարբեր հոդվածների կիրարկմանը: Այնուհետև Միգրացիայի Միջազգային Կազմակերպության հայաստանյան գրասենյակը ձեռնարկեց նշված ուսուցողական նյութերը մեկ ձեռնարկի մեջ ամփոփելու և հրապարակելու գործը, ինչի արդյունքում կազմվեց սույն աշխատությունը:

Դրանում համակարգված ձևով օգտակար տեղեկություններ են զետեղված ռեադմիսիոն գործընթացների մասին, մանրամասն անդրադարձ է կատարված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև 2013թ. ապրիլի 19-ին ստորագրված Համաձայնագրին, այդ թվում դետալացված ձևով քննարկված են ինչպես համաձայնագրի առանձին հոդվածները, այնպես էլ համաձայնագրի կիրարկման և մոնիթորինգի հետ կապված հարցերը: Վերլուծված են նաև ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում ստացվող դիմումների քննարկմանն ապահովմանն ուղղված ՀՀ ենթաօրենսդրական ակտերը:

Հատուկ ուշադրություն է դարձված այն հարցերին որոնք կարող են խնդրահարույց լինել համաձայնագրի կիրարկման ընթացքում և բերված են դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Սույն աշխատությունը օգտակար կլինի ինչպես ռեադմիսիոն գործընթացում ներառված ՀՀ համապատասխան պետական մարմինների աշխատակիցների, այնպես էլ խնդրով հետաքրքրվող հասարակական կազմակերպությունների, ուսանողների և հետազոտողների համար:

ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆ
ՀՀ ՏԿՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ



1. ՌԵԱԴՄԻՍԻՈՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1 Համառոտ պատմական ակնարկ

«Ռեադմիսիա» եզրույթը համեմատաբար նոր է ներառվել միջազգային իրավունքում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ անհրաժեշտ էր վերականգնել պատերազմի հետևանքով ավերված տնտեսությունները, եվրոպական պետությունները աշխատանքային միգրացիայի ոլորտում որդեգրեցին բավականին ազատական մոտեցում: Դրա հետևանքով անհրաժեշտություն առաջացավ կանոնակարգել անօրինական միգրանտների հետ կապված խնդիրները: Արդյունքում արևմտաեվրոպական երկրները սկսեցին միմյանց միջև կնքել սահմանների վերահսկողության և երկիր անօրինական ներթափանցած անձանց վերաբերյալ համաձայնագրեր, որոնցով Կողմերը պատասխանատվություն էին ստանձնում մյուս Կողմի տարածք իրենց քաղաքացիների անօրինական մուտքի կամ կացության դեպքերում:

Այսպիսով առաջին ռեադմիսիոն համաձայնագրերը տարածվում էին միայն սեփական քաղաքացիների վրա:

Այդ համաձայնագրերում երրորդ երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ներառումը անհրաժեշտ դարձավ միայն 70-90-ական թվականներին, հետևյալ երկու պատճառներով՝

1. նավթային ճգնաժամի և դրա արդյունքում՝ տնտեսությունների կտրուկ անկման պայմաններում սառեցվեցին Եվրոպայում նախկինում գործող մուտքի հիմնական ծրագրերը,
2. Եվրոպայում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների հետևանքով հետխորհրդային տարածքից դեպի եվրոպական երկրներ սկսեցին ուղղվել միգրացիոն մեծածավալ հոսքեր: Այս պայմաններում կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրները միգրանտներ «մատակարարող» երկրներից դրաձան «տարանցիկ միջանցքներ» անօրինական միգրանտների համար:

Ռեադմիսիոն համաձայնագրերի անհրաժեշտությունն էլ ավելի մեծացավ այն ժամանակ, երբ ԵՄ-ի ներսում վերացան ներքին սահմանները: Ազատ տեղաշարժ ԵՄ-ի ներսում, սակայն խիստ հսկողություն ԵՄ արտաքին սահմանների վրա – այս գաղափարը կյանքի կոչվեց Ամստերդամի պայմանագրի (1997թ.) ընդունման հետ մեկտեղ, երբ արտոնագրերի, ապաստանի, իմմիգրացիայի և մի շարք այլ՝ անձանց ազատ տեղաշարժի հետ կապված հարցեր, անցան ԵՄ-ի իրավասության տակ:

Արդյունքում, ռեադմիսիոն համաձայնագրերը սկսեցին դիտվել որպես կարևոր գործիք անօրինական միգրացիայի դեմ պայքարում:

ԵՄ անդամ պետությունները ամենամեծ թվով համաձայնագրերը՝ 124 համաձայնագիր, կնքել են 1990-2000թթ.-երին: 1999թ.-ից սկսած ԵՄ-ն իրավասություն ստացավ ռեադմիսիոն համաձայնագրեր կնքելու երրորդ երկրների հետ: Նախկին ԽՍՀՄ պետությունների հետ այս գործընթացը սկսվեց 2008թ.-ին, երբ ԵՄ-ն համաձայնագրեր ստորագրեց Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի հետ: 2010թ.-ին ռեադմիսիոն համաձայնագիր ստորագրվեց Վրաստանի, իսկ 2013թ.-ին Հայաստանի հետ:

Մինչ ԵՄ-ի հետ ռեադմիսիոն համաձայնագրի ստորագրումը ՀՀ-ն երրկողմ ռեադմիսիոն համաձայնագրեր է ստորագրել 11 պետությունների հետ, որոնցից 10-ը եվրոպական պետություններ են և միայն մեկը՝ Ռուսաստանը ԱՊՀ անդամ պետություն է:



1.2 Ռեադմիսիոն համաձայնագրերի նպատակները

Ռեադմիսիոն համաձայնագրերի բուն նպատակն է **հեշտացնել** պայմանավորվող կողմերի պետությունների տարածքում օրինական գտնվելու հիմքեր չունեցող անձանց վերադարձը իրենց ծագման, կամ իրենց վերջին բնակության երկիր:

Վերադարձի գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով համաձայնագրում հստակ սահմանվում են պայմանավորվող կողմերի պարտավորությունները, ինչպես նաև անձանց վերադարձի և տարանցման հեշտացմանն ուղղված կազմակերպչական և աշխատանքային ընթացակարգերը, ինչպես օրինակ ծախսերի փոխահատուցումը, անհատական տվյալների պաշտպանությունը և այլն:

Ո՞րն է պայմանավորվող Կողմերի հիմնական պարտավորությունը

Կողմերը փոխադարձաբար պարտավորվում են **հետ ընդունել** այն անձանց, որոնց կարգավիճակը անօրինական է ճանաչվել մյուս պայմանավորվող պետության կողմից:

Ընդ որում, հետընդունման պարտավորությունը տարածվում է հետևյալ 3 խումբ անձանց վրա.

- սեփական քաղաքացիներ
- օտարերկրյա քաղաքացիներ
- քաղաքացիություն չունեցող անձինք

Իսկ նրանց կարգավիճակի անօրինական լինելը տարածվում է հետևյալ 3 դեպքերի վրա.

- անձը անօրինական է մուտք գործել տվյալ երկիր
- անձը անօրինական է գտնվել տվյալ երկրում
- անձը անօրինական է բնակվել տվյալ երկրում

1.3 Ռեադմիսիոն համաձայնագրերի միջոցով լուծվող խնդիրները

Ակնհայտ է որ անօրինական կարգավիճակ ունեցող անձանց վերադարձը իրականացվում է նաև առանց ռեադմիսիոն համաձայնագրերի օգնության: Ընդ որում կամավոր վերադարձը այստեղ չի դիտարկվում, քանի որ ռեադմիսիան այդ անձանց չի վերաբերում:

Ինչպե՞ս է իրականացվում անձանց վերադարձը առանց ռեդմիսիայի: Այդ դեպքում անձի վերաբերյալ կայացվում է կամ վարչական վտարման, կամ արտաքսման որոշում, ինչն էլ հիմք է հանդիսանում նրանց վերադարձման համար: Իսկ նման որոշման կայացումը բավականին ժամանակատար է: Բացի այդ, երկրից վարչական վտարման սովորական ընթացակարգը կարող է դժվար իրագործելի լինել եթե վտարման ենթակա անձի ծագման երկրի հետ համագործակցություն չկա: Ռեադմիսիոն համաձայնագիրը հնարավորություն է տալիս պայմանավորվել միգրանտի ծագման երկրի հետ ոչ միայն ընդհանուր համագործակցության շուրջ, այլ համաձայնեցնել ռեդմիսիոն գործընթացի ժամկետները, նախանշել այն մարմինները որոնք պատասխանատու են կոնկրետ գործողությունների իրականացման համար: Ծագման երկիրը նաև պարտավորվում է ապահովել վերադարձվող անձին անհրաժեշտ փաստաթղթերով, որի արդյունքում հետ վերադարձը կատարվում է ավելի կարճ ժամկետներում: Վերջին հանգամանքը կարևոր է, եթե հաշվի առնվի այն փաստը, որ վարչական վտարման կամ արտաքսման դեպքում, եթե երկրների միջև ռեադմիսիոն համաձայնագիր չկա, ծագման երկրի հյուպատոսությունը որևէ ժամկետային սահմանափակում չունի վերադարձվող անձանց փաստաթղթերի տրամադրման հարցում:

Ռեադմիսիոն համաձայնագրերը բավականաչափ հեշտացնում են նաև օտարերկրյա քաղաքացիների, կամ երրորդ երկրների քաղաքացիներ վերադարձի հարցը: Այսպես կողմերը պարտավորվում են հետ ընդունել անօրինական կարգավիճակ ունեցող այն



օտարերկրյա քաղաքացիներին, որոնց իրենք տրամադրել են արտոնագիր, կամ կացության կարգավիճակ, կամ էլ որոնք մյուս Կողմի պետության տարածք են մուտք գործել անմիջականորեն իրենց երկրից: Սա շատ կարևոր հանգամանք է երկու տեսանկյունից:

Նախ սրանով բարձրացվում է հարցում ստացած պետության պատասխանատվությունը իր երկրից այլ երկիր մեկնող օտարերկրացիների տեղաշարժի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու առումով, բացի դրանից հարցում ներկայացրած պետությունը հնարավորություն է ստանում այդ անձանց վերադարձնել ոչ թե իրենց ծագման պետություն (այդ պետության հետ համագործակցության բացակայության դեպքում) այլ այն երկիր, որտեղից այդ անձինք ուղղակիորեն մուտք են գործել իր երկիր: Ավելին, ռադիոսիոն համաձայնագրի առկայության դեպքում ընդունող պետությունը պարտավոր չէ նույնականացնել օտարերկրյա քաղաքացուն, ինչպես դա արվում է սեփական քաղաքացիների դեպքում: Բավարար է միայն ապացուցել որ տվյալ անձը եկել է մյուս Կողմի պետության տարածքից: Տվյալ անձի նույնականացման և նրան իր ծագման երկիր ուղարկելու պարտավորությունը (եթե դա հնարավոր է) ընկած է հարցում ստացած պետության վրա:

2. ՀՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՌԵԱԴՄԻՍԻՈՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ

2.1 Երկկողմ համաձայնագրեր

2002թ.-ից ի վեր Հայաստանն ակտիվորեն ներգրավվել է ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման գործընթացում, դա դիտարկելով որպես անօրինական միգրացիայի դեմ պայքարի գործիքներից մեկը: Այդ համաձայնագրերի իրականացման հիմնական մարմինը հանդիսանում է ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայությունը, որը ներգրավված է այդ գործընթացում սկսած՝ համաձայնագրերի տեքստերի մշակման, եզրակացությունների կազմման, և վերջացրած դրանց իրականացման աշխատանքներում:

Այսօրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 11 համաձայնագրեր է ստորագրել 13 պետությունների հետ, որոնցից 12-ը եվրոպական երկրների, և մեկը՝ ԱՊՀ երկրի (Ռուսաստանի Դաշնություն) հետ:

ՀՀ-ի կողմից կնքված ռեադմիսիոն համաձայնագրերի ցանկը

Հ/հ	Համաձայնագրի անվանումը	Ստորագրման ամսաթիվը	Ուժի մեջ է մտել
	Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լատվիայի Հանրապետության Կառավարության միջև անձանց հանձնման և ընդունման մասին	2002թ. հունիսի 26	2003թ. մայիսի 17-ին
	Հայաստանի Հանրապետության Կառավարության և Դանիայի Թագավորության Կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու մասին	2003թ. ապրիլի 30	2004թ. հունվարի 1-ին
	Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լիտվայի Հանրապետության Կառավարության միջև առանց թույլտվության ապրող անձանց հետ ընդունման /ռեադմիսիայի/ մասին	2003թ. սեպտեմբերի 15	2004թ. մայիսի 22-ին
	Հայաստանի Հանրապետության Կառավարության և Շվեյցարիայի Դաշնային Խորհրդի Կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունման մասին	2003թ. հոկտեմբերի 30	2005թ. մարտի 1-ին



	Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու և տարանցիկ փոխադրելու մասին	2006թ. նոյեմբերի 16	2008թ. ապրիլի 20-ին
	Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունման մասին	2007թ. նոյեմբերի 13	2008թ. հուլիսի 1-ին
	Հայաստանի Հանրապետության կառավարության և Շվեդիայի թագավորության կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց մասին	2008թ. նոյեմբերի 7	2009թ. ապրիլի 19-ին
	Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների /Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության/ միջև անօրինական բնակություն հաստատած անձանց վերադառնալու մասին	2009թ. հունիսի 3	2010թ հունիսի 7-ին վավերացվել է ՀՀ-ի կողմից
	Հայաստանի Հանրապետության կառավարության և Նորվեգիայի Թագավորության կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունման մասին	2010թ. հունվարի 29-ին	2010թ. հունիսի 26-ին
	Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետ ընդունման մասին	2010թ. մայիսի 17-ին	2001թ. ապրիլի 1-ին
	Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ռեադմիսիայի մասին	2010թ. օգոստոսի 20-ին	2011թ. մայիսի 31

Վերոհիշյալ համաձայնագրերի շրջանակներում, ընդհանուր առմամբ, 2014թ.-ի ապրիլի դրությամբ ստացվել և համապատասխան կարգով ընթացք են ստացել 70 ռեադմիսիոն հայցեր՝ 118 անձանց վերաբերյալ: Հայցերը ստացվել են Շվեդիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի, Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններից:

Եվս երեք պետությունների՝ Ուկրաինայի, Մոլդովայի և Վրաստանի հետ բանակացություններ են վարվում ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման ուղղությամբ:

2.2 Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց մասին հետընդունման /ռեադմիսիայի/ մասին համաձայնագիրը (Հավելված 1) ստորագրվել է Բրյուսելում 2013թ.-ի ապրիլի 19-ին՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի կողմից:

Համաձայնագրի նախաբանում հստակ արձանագրված է որ Պայմանավորվող կողմերի հիմնական նպատակն է ամրապնդել իրենց համագործակցությունը անօրինական միգրացիայի դեմ առավել արդյունավետ պայքար ծավալելու համար:

Համաձայնագրի միջոցով Պայմանավորվող կողմերը նախատեսում են փոխադարձության հիման վրա ստեղծել արագ և արդյունավետ իրավական ընթացակարգեր այն անձանց



հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում, կամ այլևս չեն բավարարում Հյաստանի կամ Եվրոպական միության անդամ պետություններից մեկի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար պահանջներին, և դյուրացնելու այդպիսի անձանց տարանցումը՝ համագործակցության ոգով: Ինչպես վերը նշեցինք մինչ այսօր, Հայաստանի Հանրապետությունը ռեադմիսիայի վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր է ստորագրել Եվրոպական միության անդամ 10 պետությունների հետ: Այս համաձայնագիրը, հնարավորություն է տալիս ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ սահմանել և իրականացնել միասնական ընթացակարգեր՝ Կողմերի տարածքներում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման հարցերում:

Իբրև հիմնարար և առանցքային սկզբունք՝ Համաձայնագիրը որոշակի սահմանում է, որ դրա գործողության ընթացքում անհրաժեշտ է ապահովել մարդու իրավունքների և պարտավորությունների ու պարտականությունների նկատմամբ հարգանքը, իրականացնել հետընդունված անձանց իրավունքների պաշտպանությունը, որոնք բխում են նրանց վերաբերյալ կիրառելի միջազգային փաստաթղթերից, մասնավորապես 1948թ.-ի դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, 1950թ. նոյեմբերի 4-ի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայից և այլն:

Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 24 հոդվածներից և դրա անբաժանելի մասը հանդիսացող 6 հավելվածներից:

Համաձայնագրի առաջին հոդվածում տրված են դրա տեքստում օգտագործվող հասկացությունների (եզրույթների) սահմանումները և դրանց իրավակիրառ նշանակությունը:

Համաձայնագրի «հիմնարար սկզբունքները» վերտառությամբ 2-րդ հոդվածում առանձնակի շեշտված է, որ անկանոն միգրացիայի դեմ համագործակցելիս, հարցում ներկայացրած պետությունը պետք է նախապատվություն տա կամավոր, այլ ոչ թե պարտադրված վերադարձին, եթե պատճառներ չկան հավատալու որ այն կխոչընդոտի անձի վերադարձին հարցում ստացած պետություն:

Համաձայնագրի 1-ին և 2-րդ բաժիններն ամրագրում են հետընդունման մասով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության պարտավորությունները, իսկ 3-րդ բաժինը նվիրված է հետընդունման իրավական ընթացակարգերին: Նախատեսված են այն անձանց շրջանակները, որոնք ենթակա են սահմանված կարգով հետընդունման, ինչպես նաև հետընդունման պազորոշ պայմանները և համապատասխան կառուցակարգերը:

Սահմանված է, որ հետընդունվող անձի ցանկացած փոխանցման համար պահանջվում է հետընդունման դիմումի ներկայացում՝ հարցում ստացած պետության իրավասու մարմնին:

Համաձայնագրի 8-րդ հոդվածում շարադրված են հետընդունման դիմումին ներկայացվող հիմնական պահանջները, իսկ հետընդունման դիմումի համար կիրառելի ընդհանուր ձևը ներկայացված է Համաձայնագրի 5-րդ հավելվածում:

Հետընդունման դիմումը կարող է ներկայացվել կապի ցանակացմ միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով:

Քաղաքացիության մասով ապացուցման միջոցները թվարկված են Համաձայնագրի 9-րդ հոդվածում և համապատասխանաբար դրա՝ 1-ին և 2-րդ հավելվածներում, իսկ 3-րդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ապացուցման միջոցները՝ Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հավելվածներում:

Համաձայնագրին համապատասխան՝ հետընդունման ենթակա անձինք կարող են տեղափոխվել ցանակացմ միջոցով, այդ թվում և օդային ուղիներով: Միալմամբ իրականացված հետընդունման իրավական հետևանքները նախատեսված են Համաձայնագրի 13-րդ հոդվածում:



Համաձայնագրում հատկապես մատնանաշված են անձնաց անձնական տվյալների պաշտպանության հանգամանքը և այդ կապակցությամբ Կողմերի որոշակի պարտավորությունները:

Հետագա գլուխներում առավել մանրամասն կանգ կառնենք Համաձայնագրի տարբեր հոդվածների և դրանցում տեղ գտած դրույթների պարզաբանման վրա:

ՀՀ- ԵՄ ռեադմիսիոն համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից: 2014թ. ապրիլի դրությամբ, այս համաձայնագրի շրջանակներում ստացվել է 6 հայց 20 անձանց վերաբերյալ: Բոլոր հայցերը ներկայացվել են Շվեդիայի կողմից:

3. ՍԵՓԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ: ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3.1 Ո՞ր դեպքերում է Հայաստանը պարտավորվում հետ ընդունել սեփական քաղաքացիներին

«ՀՀ-ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «Հայաստանը հետ է ընդունում, անդամ պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական (ֆորմալ) պահանջների, բացառությամբ այն պահանջների, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով, բոլոր անձանց, ովքեր չեն բավարարում կամ ալևս չեն բավարարում հարցում ներկայացրած անդամ պետության տարածք մուտք գործելու, ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝ պայմանով, որ ապացուցված է կամ կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, ներկայացված առերևույթ (prima facie) փաստարկների հիման վրա, որ նրանք Հայաստանի քաղաքացիներ են»:

Հիշեցնենք, որ Հայաստանի քաղաքացին կարող է խախտած լինել հարցում ներկայացրած պետությունում գործող պայմանները հետևյալ 3 գործողության վերաբերյալ՝

- հարցում ներկայացրած պետության տարածք մուտք գործելը,
- հարցում ներկայացրած պետությունում ներկա գտնվելը,
- հարցում ներկայացրած պետությունում բնակվելը:

Հարց է առաջանում, արդյոք այլ տեսակի խախտում (միգրացիոն օրենսդրության հետ չկապված) կատարելը հիմք է ռեադմիսիոն հայց ներկայացնելու համար: Օրինակ, ՀՀ քաղաքացին որն ունեցել է կացության իրավունք առանց աշխատանքի իրավունքի, սակայն աշխատանքի է անցել: Կամ, ՀՀ քաղաքացին որը դատապարտվել է այդ երկրում, կրել է իր պատիժը և ազատ է արձակվել և այլն:

Համաձայնագրում հստակ նշված է որ ռեադմիսիայի սուբյեկտ է համարվում ԵՄ անդամ պետության միգրացիոն օրենսդրությունը խախտած անձը, իսկ օրենսդրական այլ պահանջները խախտողներին (օրինակ օդատրեկրացիների զբաղվածության) այն չի վերաբերում:

Բացի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանցից, Համաձայնագրում նշվում են ևս 3 խումբ անձինք, որոնց Հայաստանը պարտավորվում է հետ ընդունել: Դրանք են՝

1. համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց **անչափահաս չամուսնացած երեխաները**, անկախ նրանց ծննդյան վայրից կամ քաղաքացիությունից՝ բացի այն դեպքերից, երբ նրանք ունեն հարցում ներկայացրած պետությունում բնակության անկախ իրավունք կամ ունեն այլ անդամ պետության կողմից տրված վավեր բնակության թույլտվություն,



2. համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց **ամուսինները**, ովքեր ունեն այլ քաղաքացիություն կամ չունեն քաղաքացիություն՝ պայմանով, որ նրանք ունենան Հայաստանի տարածք մուտք գործելու և այնտեղ գտնվելու իրավունք կամ ստանալու մուտք գործելու և այնտեղ գտնվելու իրավունք՝ բացի այն դեպքերից, երբ նրանք ունեն հարցում ներկայացրած պետությունում բնակության անկախ իրավունք կամ ունեն այլ անդամ պետության կողմից տրված վավեր բնակության թույլտվություն,
3. անձինք, ովքեր **հրաժարվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից անդամ պետության տարածք մուտք գործելուց հետո՝** բացի այն դեպքերից, երբ այդ անձանց առնվազն խոստացվել է հպատակագրում (նատուրալիզացիա) անդամ պետության կողմից:

Առաջին երկու խմբերում ըստ էության ներառված են անօրինական միգրանտի ընտանիքի անդամները:

Երեխաների դեպքում ռեադմիսիայի են ենթակա միայն վերադարձի ենթակա անձի անչափահաս և չամուսնացած երեխաները: Ենթադրվում է, որ եթե նրանք չափահաս են, կամ էլ ընտանիք ունեն, նրանց հարցը դիտարկվում է առանձին և չի կապվում «հայրական» ընտանիքի հետ: Հատկանշական է որ ծննդյան վայրը կամ քաղաքացիությունը հաշվի չեն առնվում, բացառություն է արվում միայն այն դեպքի համար, եթե երեխան ունի կամ այդ երկրում բնակվելու անկախ իրավունք, կամ էլ ԵՄ անդամ այլ պետության կողմից տրված վավեր բնակության թույլտվություն:

Նմանատիպ կարգ է գործում նաև ամուսինների (կանանց) վերաբերյալ: Այս դեպքում ռեադմիսիայի ենթակա լինելու հարցը կախված է նրանից թե արդյոք ամուսինը կամ կինը, որն այլ քաղաքացիություն ունի, միաժամանակ ունի, կամ էլ կարող է ունենալ Հայաստանի տարածք մուտք գործելու և այնտեղ մնալու իրավունք, թե ոչ:

Երրորդ դեպքը վերաբերում է այն ՀՀ քաղաքացիներին ովքեր հրաժարվել են ՀՀ քաղաքացիությունից տվյալ պետության տարածք մուտք գործելուց հետո: Դա չի տարածվում միայն այն անձանց վրա ում համաձայնագրի Կողմ հանդիսացող՝ վերադարձի հայց ներկայացրած պետությունը խոստացել է հպատակագրում:

Եթե Հայաստանը դրական է արձագանքում հետընդունման դիմումին, Հայաստանի իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը, անկախ հետընդունվող անձի ցանկությունից, միանգամից, անվճար և ոչ ավելի, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է տրամադրի հետընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթը՝ 120 օր վավերականությամբ:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ եթե Հայաստանը երեք օրվա ընթացքում չի տրամադրում փաստաթուղթ, ապա ենթադրվում է, որ Հայաստանը ընդունում է ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը:

Եթե իրավական կամ փաստացի պատճառներով համապատասխան անձը չի կարող փոխադրվել սկզբնապես տրված ճամփորդական փաստաթղթի վավերականության ընթացքում, Հայաստանի իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը երեք օրվա ընթացքում և անվճար պետք է տրամադրի նոր ճամփորդական փաստաթուղթ միննույն վավերականության ժամանակահատվածով: Եթե Հայաստանը երեք օրվա ընթացքում չտրամադրի նոր ճամփորդական փաստաթուղթ, ապա կենթադրվի, որ Հայաստանն ընդունում է ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը:



3.2 Անձի՝ ՀՀ քաղաքացիություն ունենալու հանգամանքի հաստատումը

Ռեադմիսիոն համաձայնագրերի կիրարկման ընթացքում ամենակարևոր և դժվար գործընթացը համարվում է անձի քաղաքացիության ապացուցումը, կամ էլ դրա վերաբերյալ առևերևույթ փաստարկների ներկայացումը: Սովորաբար ռեադմիսիոն համաձայնագրերը ներառում են անձի քաղաքացիության ապացուցման, կամ դրա վերաբերյալ ենթադրություն կատարելու համար անհրաժեշտ հիմքերը՝ ի դեմս անձը հաստատող, կամ անձի քաղաքացիության վերաբերյալ որպես առևերևույթ փաստարկ հանդիսացող փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև այլ միջոցներ, որոնք կարող են օգնել կողմնորոշվելու անձի քաղաքացիության հարցում, ինչպես օրինակ՝ լեզուն, որով խոսում է տվյալ անձը, կամ էլ վկաների ցուցումները:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում, քաղաքացիության մասով ապացուցման միջոցները բերված են **համաձայնագրի 9-րդ հոդվածում**: Այստեղ ըստ էության դիտարկվում են 3 դեպքեր:

Առաջին դեպքում խոսքը գնում է այն անձանց մասին, ովքեր ունեն անձը հաստատող փաստաթղթեր, հետևաբար նրանց քաղաքացիությունը կարելի է ապացուցված համարել:

Երկրորդ դեպքը վերաբերում է նրանց, ում քաղաքացիության վերաբերյալ հնարավոր է ենթադրություն կատարել ելնելով առևերևույթ փաստարկներից:

Իսկ երրորդ դեպքում որևէ հիմք չկա ոչ ենթադրություն կատարելու և ոչ էլ առավել ևս քաղաքացիությունը ապացուցելու համար, քանի որ անձը որևէ փաստաթուղթ չի ներկայացնում:

Դիտարկենք այս դեպքերից յուրաքանչյուրն ավելի մանրամասնորեն:

ա/ ՀՀ քաղաքացիությունը ապացուցված լինելը

Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է՝ «քաղաքացիության մասով ապացույցը կարող է ներկայացվել մասնավորապես սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում թվարկված փաստաթղթերի միջոցով՝ ներառյալ այնպիսի փաստաթղթերով, որոնց վավերականության ժամկետն ավարտվել է մինչև վեց ամիս: Եթե ներկայացվում են այդպիսի փաստաթղթեր, ապա անդամ պետությունները և Հայաստանը փոխադարձաբար ճանաչում են քաղաքացիությունը՝ առանց հետագա քննության պահանջի: Քաղաքացիության մասով ապացույցը չի կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով»:

Այսինքն, սա վերևում հիշատակված առաջին դեպքն է, երբ խոսքը գնում է քաղաքացիությունը ապացուցված լինելու մասին: Ինչը նշանակում է, որ եթե ներկայացվում են Համաձայնագրի Հավելված 1-ում թվարկված քաղաքացիությունը ապացուցող փաստաթղթերը՝

- ցանկացած տեսակի անձնագիր (ազգային անձնագրեր, դիվանագիտական անձնագրեր, ծառայողական անձնագրեր, հավաքական անձնագրեր, փոխարինող անձնագրեր՝ ներառյալ երեխաների անձնագրերը),
- ցանկացած տեսակի նույնականացման քարտ (ներառյալ ժամանակավոր և պայմանական),
- քաղաքացիության հավաստագրեր և այլ պաշտոնական փաստաթղթեր, որոնք նշում կամ հստակ մատնանշում են քաղաքացիությունը,
- ապա Կողմերը փոխադարձաբար ճանաչում են քաղաքացիությունը՝ առանց հետագա քննության պահանջի:



Անհրաժեշտ է նկատի ունենալ որ բերված ցանկն **ընդհանուր է Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների համար**, այդ իսկ պատճառով այնտեղ կարող են նշված լինել փաստաթղթեր, որոնք Հայաստանում ընդհանրապես գոյություն չունեն:

Կարևոր է հիշել, որ քաղաքացիությունն ապացուցված է համարվում նաև այն դեպքերում եթե ներկայացված փաստաթղթերի **վավերականության ժամկետն ավարտվել է մինչև 6 ամիս առաջ**:

Քաղաքացիության մասով ապացույցը չի կարող ներկայացվել **կեղծ փաստաթղթերի** միջոցով:

9-րդ հոդվածի 1-ին կետում առանձին ուշադրության է արժանի այն միտքը որ քաղաքացիությունը ճանաչվում է **«առանց հետագա քննության պահանջի»**, ինչը նշանակում է որ ընդունող կողմը (տվյալ դեպքում Հայաստանը), առանց կասկածի տակ դնելու և ստուգումներ իրականացնելու, ընդունում է իր քաղաքացիներին ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Ինչն էլ իր հերթին նշանակում է, որ հետ ընդունվող անձի փոխանցման համար հետընդունման դիմումի ներկայացումը պարտադիր չէ: Այդ մասին ասվում է համաձայնագրի **7-րդ հոդվածի 2-րդ կետում**՝ «Եթե հետ ընդունվող անձն ունի վավեր ճամփորդական փաստաթուղթ կամ անձը հաստատող փաստաթուղթ, իսկ երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ հարցում ստացած պետության վավեր վիզա կամ բնակության թույլտվություն, ապա տվյալ անձի փոխադրումը կարելի է իրականացնել առանց հարցում ներկայացրած պետության կողմից հարցում ստացած պետության իրավասու մարմնին հասցեագրված՝ 12(1) հոդվածում նշված հետընդունման դիմում կամ գրավոր ծանուցում ներկայացնելու պահանջի»:

Սակայն կարող է թվալ, որ նման մոտեցումը հակասում է Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված հետևյալ մտքին՝ «քաղաքացիության մասով ապացույցը չի կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով»:

Հարց է առաջանում, ինչպե՞ս է հնարավոր հավաստիանալ, որ ներկայացվող փաստաթղթերը կեղծ չեն, եթե որևէ քննություն չի տարվում:

Կարծում ենք դա կարելի է անել հետևյալ ճանապարհներով՝

1. Երբ անձը հետ է վերադառնում առանց հետընդունման դիմումի կամ գրավոր ծանուցման, նրա փաստաթղթերի ստուգման իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ սահմանափակում՝ սահմանային վերահսկողություն իրականացնող մարմնի աշխատակցի կողմից: Կեղծ փաստաթուղթ հայտնաբերելու դեպքում, հետագա գործողությունները նույնպես իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարզապես այս դեպքում կարևոր է նկատի ունենալ, որ եթե ստուգումներից պարզվի որ հետ վերադարձած անձը մեր քաղաքացին չէ, Համաձայնագիրը հնարավորություն է տալիս նրան հետ վերադարձնել այն երկիր, որտեղից նա ժամանել է:
- Երբ անձը հետ է վերադառնում հետ ընդունման դիմումի հիման վրա, արդեն գործում է անձի փաստաթղթերի ստուգման Համաձայնագրով սահմանված ընդհանուր կարգը: Նույնիսկ 1.1 կետում թվարկված փաստաթղթերի առկայության դեպքում անձի հետընդունման վերաբերյալ դիմումի ներկայացման հնարավորությունը բացառված չէ, քանի որ վերը նշված 7-րդ հոդվածի 2-րդ կետից հետևում է, որ անձի փոխադրման վերաբերյալ դիմումի ներկայացումը կախված է նրան հետ ուղարկող պետության հայեցողությունից: Այս դեպքում, ինչպես արդեն նշեցինք, հարցում ներկայացրած պետության կողմից հարցում ստացած պետության իրավասու մարմնին հասցեագրված հետընդունման դիմումը հիմք է դիմումում նշված փաստաթղթերի իսկությունը ստուգելու համար:



բ. ՀՀ քաղաքացիություն ունենալու մասով առերևույթ (prima facie) փաստարկները

Քաղաքացիության ապացուցման երկրորդ դեպքը վերաբերում է այն դեպքին երբ քաղաքացիության վերաբերյալ հնարավոր է ենթադրություն կատարել ելնելով առերևույթ փաստարկներից:

Դիտարկենք համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետում բերված մյուս դեպքը՝ «3(1) և 5(1) հոդվածների համաձայն քաղաքացիության մասով առերևույթ փաստարկները կարող են տրամադրվել մասնավորապես սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածում թվարկված փաստաթղթերի միջոցով, անգամ եթե դրանց վավերականության ժամկետն ավարտվել է: Եթե ներկայացվում են այդպիսի փաստաթղթեր, ապա անդամ պետությունները և Հայաստանը քաղաքացիությունը փոխադարձաբար հաստատված են համարում, եթե հակառակը չեն կարող ապացուցել: Քաղաքացիության մասով առերևույթ փաստարկները չեն կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով»:

Այսինքն, եթե ներկայացվում են Համաձայնագրի Հավելված 2-ում թվարկված՝ քաղաքացիության մասով առերևույթ փաստարկ հանդիսացող ստորև բերված փաստաթղթերը՝

- 3.2 կետում թվարկված փաստաթղթերը, որոնց վավերականության ժամկետը ավարտվել է 6 ամսից ավելի,
- 3.2 կետում թվարկված փաստաթղթերից որևէ մեկի պատճենները,
- վարորդական իրավունքի վկայականներ կամ դրանց պատճենները,
- ծննդյան վկայականներ կամ դրանց պատճենները,
- կազմակերպության նույնականացման քարտեր կամ դրանց պատճենները,
- վկաների հայտարարություններ,
- համապատասխան անձի հայտարարություններ, լեզուն, որով նա խոսում է, ինչպես նաև պաշտոնական քննության արդյունքներ,
- ցանկացած այլ փաստաթուղթ, որը կարող է օգնել հաստատել տվյալ անձի քաղաքացիությունը,
- մատնահետքեր,
- հարցում ստացած պետության կողմից տրված անցագիր (laissez passer),
- ծառայողական գրքույկ և նույնականացման ռազմական քարտեր,
- նավագնացության հաշվառման քարտեր և հրամանատարական ծառայության քարտեր,
- վիզայի տեղեկատվական համակարգում կատարված որոնման արդյունքում ինքնության հաստատում,
- վիզայի տեղեկատվական համակարգ չկիրառող անդամ պետությունների դեպքում՝ այդ անդամ պետությունների վիզայի համար դիմումների գրառումների միջոցով ինքնության դրական հաստատում:

Վերոհիշյալից հետևում է որ քաղաքացիության մասով առերևույթ փաստարկներ են համարվում **վավերականության ժամկետն ավարտված փաստաթղթերը, կամ փաստաթղթերի պատճենները, կամ այլ տարաբնույթ անուղղակի փաստարկները**, որոնք կարող են հիմք տալ անձի քաղաքացիության վերաբերյալ ենթադրություններ անելու համար:

Եթե ներկայացվում են այդպիսի փաստաթղթեր, ապա անդամ պետությունները և Հայաստանը քաղաքացիությունը փոխադարձաբար հաստատված են համարում, **եթե հակառակը չեն կարող ապացուցել:**



Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա որ **հակառակը ապացուցելու պարտավորությունը դրված է հարցում ստացած պետության վրա:**

Ամենակարևոր հարցը որն առաջանում է այս դեպքի հետ կապված այն է թե ինչպե՞ս պետք է ստուգվեն ներկայացված առերևույթ փաստարկները, և ո՞րն է հակառակը ապացուցելու մեխանիզմը:

Դիտարկենք հնարավոր դեպքերն ըստ Համաձայնագրի Հավելված 2-ում բերված փաստաթղթերի.

1. Եթե հարցում ներկայացրած պետության կողմից ներկայացվում են անձը հաստատող փաստաթղթեր (նաև վավերականության ժամկետն ավարտված), կամ դրանց պատճեններ, վարորդական իրավունքի կամ ծննդյան վկայականներ, կամ դրանց պատճեններ, կազմակերպության նույնականացման քարտեր, հարցում ստացած պետության կողմից տրված անցագիր (laissez-passer), ծառայողական գրքույկ և նույնականացման ռազմական քարտեր, ապա դրանցում նշված տվյալներով անձը պետք է փնտրվի ՀՀ քաղաքացիների անձնագրային տեղեկատվական համակարգում: Սակայն այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ որ անձը լինելով ՀՀ քաղաքացի, կարող է չհայտնաբերվել այդ համակարգում, քանի որ կարող է տարբեր պատճառներով անձնագրավորված չլինել ՀՀ քաղաքացու անձնագրով: Նման դեպքերում ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը պետք է փորձի անձի քաղաքացիության մասին ապացույցներ գտնել իրեն հասանելի այլ ճանապարհներով:
2. Եթե ներկայացվում են վկաների կամ այլ անձանց հայտարարություններ, պաշտոնական քննության արդյունքներ, ապա վերոհիշյալ վկայություններում բերված տվյալներով անձը կարող է որոնվել միայն ՀՀ քաղաքացիների անձնագրային տեղեկատվական համակարգում:
3. Անձի մատնահետքերը ներկայացնելու դեպքում, հնարավոր կլինի նույնականացնել միայն այն ՀՀ քաղաքացիներին, ովքեր կենսաչափական անձանցիկ են ստացել, ինչպես նաև նրանց, ովքեր նախկինում հանցագործություն են կատարել և նրանց մատնահետքերն առկա են ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում:
4. Եթե ներկայացվի միայն տեղեկատվություն լեզվի մասին որով խոսում է տվյալ անձը, սա կարող է հիմք հանդիսանալ միայն նրա հետ հարցազրույց կազմակերպելու համար, քանի որ միայն այս տեղեկատվությամբ անհնար է պարզել անձի քաղաքացիությունը:

գ. ՀՀ քաղաքացիության հանգամանքի հաստատումը՝ փաստաթղթերի բացակայություն դեպքում

Սա արդեն վերը նշված երրորդ դեպքն է: Եթե 3.2 և 3.3 կետերում թվարկված փաստաթղթերից ոչ մեկը առկա չէ, ապա անձի նույնականացումը դառնում է բավականին դժվար լուծելի հարց: Ընդհանրապես համարվում է որ ռեադմիսիոն գործընթացի ամենախրթին խնդիրը դա անձանց նույնականացման խնդիրն է: Կարծիք կա նաև, որ հատկապես այս խումբ անձանց են ավելի հաճախ փորձում հետ ուղարկել ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում:

Ի՞նչ լուծում է տալիս այս խնդիրն Համաձայնագիրը:

Այս դեպքում պարտավորություն է դրվում հարցում ստացած պետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների վրա, հարցում ներկայացրած պետության դիմումի հիման վրա, կազմակերպել հարցազրույց անձի հետ, նրա քաղաքացիությունը հաստատելու համար: Դիտարկենք այս դեպքն առավել մանրամասնորեն:



Համաձայնագրի 9-րդ հոդվածի երրորդ կետում ասվում է՝ «Եթե 1-ին և 2-րդ հավելվածում թվարկված փաստաթղթերից ոչ մեկը չի կարող ներկայացվել, ապա հարցում ստացած պետության իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները, հարցում ներկայացրած պետության դիմումի հիման վրա, որը ներառվում է հետընդունման դիմումի մեջ, հարցազրույց են անցկացնում այն անձի հետ, ում հետընդունումը պետք է իրականացվի առանց անհիմն ձգձգումների՝ 11(2) հոդվածին համապատասխան հետընդունման դիմումը ստանալուց հետո ամենաուշը հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ նրա քաղաքացիությունը հաստատելու համար: Նման հարցազրույցների կազմակերպման կարգը կարող է սահմանվել սույն Համաձայնագրի 20-րդ հոդվածում նշված կիրարկման արձանագրություններով»:

Նախկինում Հայաստանի կողմից ստորագրված և գործող ռեադմիսիոն համաձայնագրերի փորձը ցույց է տալիս որ սա մի կողմից ամենադժվար, մյուս կողմից էլ բավականին հաճախ հանդիպող դեպք է: Այն դժվար է համարվում այն պատճառով, որ անձը ակնհայտորեն չի ցանկանում ճիշտ տեղեկություններ հայտնել իր մասին և հրաժարվում է որևէ փաստաթուղթ ներկայացնել, և հետևաբար համագործակցել ընդունող երկրի իշխանությունների հետ: Նման իրավիճակում վերջիններիս համար բավականին դժվար է, եթե չասենք անհնար է որևէ փաստարկ գտնել, որը հիմք կտար ռեադմիսիոն հայց ներկայացնել այդ անձի կարծեցյալ քաղաքացիության երկրին:

Սա է պատճառը, որ Համաձայնագրով սահմանվում է մի մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս ընդունող պետությանը դիմել իրենց երկրում Հայաստանի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը՝ այդ անձի հետ հարցազրույց կազմակերպելու խնդրանք-պահանջով, որի նպատակն է հաստատել տվյալ անձի քաղաքացիությունը:

Պետք է նկատել որ հարցազրույցի կազմակերպման և իրականացման գործընթացն իր մեջ բավական դժվարություններ, եթե չասենք ռիսկեր է պարունակում:

Հնարավոր ռիսկերը կապված են այն իրողության հետ, որ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները կամ հյուպատոսական հիմնարկները հաճախ փոքրաթիվ աշխատակազմ ունեն և նաև այդ պատճառով, խիստ ծանրաբեռնված են աշխատում: Միևնույն ժամանակ, առանձին դեպքերում մի երկրում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունը սպասարկում է մի քանի երկրների: Այս պարագայում, հարցազրույցի կազմակերպման համար ազատ ժամ, կամ աշխատկից չունենալու հնարավոր ռիսկին, կարող են գումարվել զուտ տեխնիկական խնդիրներ ևս, կապված հարցում ներկայացրած երկիր գործուղման կազմակերպման դժվարությունների հետ:

Համաձայնագրով ՀՀ-ի կողմից ստանձնած պարտավորությունը չխախտելու՝ սահմանված ժամկետներում հարցազրույցի կազմակերպումն ապահովելու նպատակով առաջարկում ենք մեկ անգամ ևս քննարկել այս հարցերը դրանց հնարավոր լուծումներ տալու և համաձայնագրի կիրարկման ընթացքում ծագելիք դժվարություններից խուսափելու նպատակով:

Հաջորդ առաջարկը կապված է հարցազրույցի վերաբերյալ հայցի ներկայացման հետ: Բանն այն է, որ Համաձայնագրի 5-րդ հավելվածի համաձայն, հարցազրույց անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ նշումը ներառվում է հետընդունման դիմումի մեջ: Իսկ հետընդունման դիմումն ուղարկվում է Համաձայնագրի կիրարկման համար իրավասու մարմնին, տվյալ դեպքում ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը: Համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, հարցազրույցը պետք է իրականացվի դիմումը ստանալուց հետո ամենաուշը 5 աշխատանքային օրվա ընթացքում: **Այդ առանց այն էլ կարճ ժամկետը արդյունավետ**



օգտագործելու նպատակով առաջարկում ենք Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, երբ սկսվեն քննարկումները ԵՄ-ի կողմից համաձայնագիրը ստորագրած երկրների հետ՝ երկկողմ կիրարկման արձանագրությունների ստորագրման շուրջ, դրանցում նախատեսել այնպիսի մեխանիզմ որը հնարավորություն կտա հարցազրույց անցկացնելու խնդրանք պարունակող հետընդունման դիմումները, Միգրացիոն պետական ծառայությանն ուղարկելուն զուգահեռ ուղարկել նաև տվյալ պետությունում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ: Դա հնարավորություն կտա տնտեսել այն ժամանակը որն անհրաժեշտ է դիմումը Միգրացիոն պետական ծառայությունից, տվյալ երկրի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն, կամ հյուպատոսական հիմնարկ հասնելու համար:

Հաջորդ մտահոգությունը կապված է նրա հետ, որ դեսպանատան, կամ հյուպատոսական հիմնարկի աշխատակիցները կարող են բավարար հմտություններ չունենալ անձանց նույնականացման հարցում, ինչը կարող է զգալի դժվարություններ առաջացնել այս գործընթացում: Հնարավոր լուծում կարող է լինել կամ ուսուցման անցկացումը, ինչը կարելի է կազմակերպել հեռակա՝ վիդեո-կոնֆերանսի ձևաչափով, կամ էլ տպագիր տարբերակով, այդ նպատակով մշակված փաստաթղթի տարածումը Համաձայնագիրը ստորագրած ԵՄ անդամ պետություններում տեղակայված ՀՀ դեսպանատների աշխատակիցների շրջանում:

4. ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՈՒՄԸ: ԱՅԴ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ինչպես վերևում նշվեց, ռեադմիսիոն համաձայնագրերի նպատակն է կարգավորել ոչ միայն Կողմերի քաղաքացիների, այլ նաև Կողմերի տարածքներում անօրինական գտնվող երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վերադարձի հետ կապված խնդիրները:

Այդ պատճառով ռեադմիսիոն համաձայնագրերը մանրամասն անդրադառնում են ինչպես սեփական քաղաքացիների, այնպես էլ երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց մասով ապացուցման միջոցներին: Հիշատակված երկու խումբ քաղաքացիների մասով տարբերությունը կայանում է միայն նրանում, որ սեփական քաղաքացիների դեպքում, հարցում ներկայացնող պետությունից պահանջվում է ապացույցներ ներկայացնել այդ անձանց քաղաքացիության վերաբերյալ, իսկ երրորդ դեպքում անհրաժեշտ է միայն հիմնավորել որ երրորդ երկրի քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք առնչություն են ունեցել հարցում ստացած երկրի հետ:

4.1 Ո՞ր դեպքերում է Հայաստանը պարտավորվում հետ ընդունել երրորդ երկրների քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց

«ՀՀ-ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Հայաստանը հետ է ընդունում, անդամ պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների՝ բացի այն պահանջներից, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով, երրորդ երկրի բոլոր քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում հարցում ներկայացրած անդամ պետության տարածք մուտք գործելու, այնտեղ ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝



պայմանով, որ ապացուցված է, կամ կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, տրամադրված առերևույթ (prima facie) փաստարկների հիման վրա, որ այդպիսի անձինք՝

ա) հետընդունման դիմումը ներկայացնելու պահին ունեն Հայաստանի կողմից տրված վավեր վիզա կամ բնակության թույլտվություն, կամ

բ) անօրինական կերպով և ուղղակիորեն մուտք են գործել անդամ պետության տարածք Հայաստանի տարածքում գտնվելուց կամ տարածքով անցնելուց հետո:

Հիշեցնենք, որ երրորդ երկրի քաղաքացին, կամ քաղաքացիություն չունեցող անձը կարող է խախտած լինել հարցում ներկայացրած պետությունում գործող պայմանները հետևյալ 3 գործողության վերաբերյալ

- տվյալ պետության տարածք մուտք գործելը,
- տվյալ երկրում ներկա գտնվելը
- տվյալ երկրում բնակվելը

Վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ Հայաստանը պարտավորվում է հետ ընդունել երրորդ երկրի այն քաղաքացիներին, կամ քաղաքացիություն չունեցող անձանց, ում Հայաստանը տրամադրել է **մուտքի արտոնագիր, կամ բնակության թույլտվություն:** Ընդ որում այդ երկու փաստաթղթերն էլ պետք է լինեն **վավեր հետընդունման դիմումը ներկայացնելու պահին:**

Մյուս դեպքը որը պարտավորեցնում է Հայաստանին ընդունել այս անձանց, դա վերջիններիս **անօրինական մուտքն է տվյալ պետության տարածք ուղղակիորեն Հայաստանի տարածքից:** Ընդ որում տարբերություն չի դրվում այն հանգամանքի մեջ, թե տվյալ անձը **բնակվել է Հայաստանի տարածքում, թե Հայաստանը հանդիսացել է միայն տարանցման երկիր:** Հետընդունման պարտավորությունը չի գործում միայն այն դեպքում, եթե երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը գտնվել է միայն **օդային տարանցման գոտում՝ Հայաստանի միջազգային օդանավակայանում:**

Այն բանից հետո, երբ Հայաստանը դրական է արձագանքում հետընդունման դիմումին, հարցում ներկայացրած պետությունը ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթուղթ է տրամադրում այն անձին, ում հետընդունման մասով դրական արձագանք է տրվել:

4.2 Ինչպե՞ս է ապացուցվում հետ ընդունման պայմանների առկայությունը

Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասով ապացուցման միջոցները սահմանված են համաձայնագրի հոդված 10-ում: Դրա առաջին և երկրորդ կետերի հիմքում ընկած է նույն սկզբունքը, ինչ-որ 9-րդ հոդվածի առաջին և երկրորդ կետերում է՝ առաջինը վերաբերում է ապացուցման միջոցներին, իսկ երկրորդը առերևույթ փաստարկներին: Իսկ 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում են երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինական բնույթի ապացուցման միջոցները: Դիտարկենք 10-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրն առավել մանրամասնորեն:

10-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է՝ «4(1) և 6(1) հոդվածներով սահմանված երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանների վերաբերյալ ապացույցները մասնավորապես ներկայացվում են սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածում թվարկված ապացուցման միջոցներով. այն չի կարող կատարվել կեղծ փաստաթղթերի միջոցով: Յուրաքանչյուր նման ապացույց փոխադարձաբար ճանաչվում է անդամ պետությունների և Հայաստանի կողմից՝ առանց հետագա քննության պահանջի»:



Այլ կերպ ասած, սա այն դեպքն է, երբ ինչպես քաղաքացիության պարագայում, խոսքը գնում է հետընդունման պայմանները ապացուցված լինելու մասին: Ինչը նշանակում է, որ եթե ներկայացվում են Համաձայնագրի Հավելված 3-ում թվարկված ապացուցման միջոցները՝

հարցում արացած պետության կողմից տրված վիզա և (կամ) բնակության թույլտվություն, համապատասխան անձի ճանփորդական փաստաթղթում մուտքի (ելքի) կնիքներ, կամ նմանատիպ հաստատում կամ մուտքի (ելքի) այլ ապացույց (օրինակ՝ լուսանկար)

ապա յուրաքանչյուր նման ապացույց փոխադարձաբար ճանաչվում է անդամ պետությունների և Հայաստանի կողմից՝ առանց հետագա քննության պահանջի:

Ինչպես արդեն վերևում նշեցինք, երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում ևս գործում է նույն սկզբունքը՝ ներկայացված ապացույցները պետք է ճանաչվեն առանց հետագա քննության պահանջի: Միաժամանակ ապացույցը չի կարող կատարվել կեղծ փաստաթղթերի միջոցով:

Ակնհայտ է, որ այս դեպքում ևս ապացուցման միջոցների հավաստիության ստուգումը պետք է իրականացվի այն մեխանիզմով որը նկարագրված է 3.2 մասի ա/ կետի 1-ին ենթակետում:

Այսինքն՝ եթե երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը հետ է վերադարձվում առանց ընդունող կողմին դիմում ներկայացնելու, վերը նշված ապացուցման միջոցների իսկության ստուգումն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ սահմանադրությամբ՝ սահմանափակ վերահսկողություն իրականացնող մարմնի աշխատակցի կողմից: Այստեղ կարևոր է հիշել, որ Համաձայնագրի 7-րդ հոդված 2-րդ կետի համաձայն առանց հետընդունման դիմումի ներկայացման կարող է հետ վերադարձվել միայն այն երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը ում մյուս կողմի պետության կողմից տրվել է վավեր վիզա կամ բնակության թույլտվություն: Միաժամանակ պետք է նաև նկատի ունենալ, որ Համաձայնագիրը հնարավորություն է տալիս հետ վերադարձնել տվյալ անձին, եթե պարզվի որ ապացուցման միջոցները այն է՝ վիզան կամ բնակության թույլտվությունը կեղծ են:

Իսկ եթե անձը հետ է վերադարձվում հետ ընդունման դիմումի հիման վրա, իսկ փաստորեն սա կարող է լինել այն դեպքը երբ երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը անօրինական կերպով և ուղղակիորեն մուտք է գործել անդամ պետության տարածք Հայաստանի տարածքում գտնվելուց կամ տարածքով անցնելուց հետո, հետընդունման դիմումը հիմք է հանդիսանում դիմումում նշված փաստերի իսկությունը ստուգելու համար:

4.3 Որ դեպքերում է «հիմնավորված ձևով ենթադրվում» ռեժիմը կիրառվում

Համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետը վերաբերում է հետևյալին՝ «4(1) և 6(1) հոդվածներով սահմանված երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանների վերաբերյալ առերևույթ փաստարկները մասնավորապես ներկայացվում են սույն Համաձայնագրի 4-րդ հավելվածում թվարկված ապացուցման միջոցներով. այն չի կարող կատարվել կեղծ փաստաթղթերի միջոցով: Եթե ներկայացված են այդպիսի առերևույթ փաստարկներ, ապա անդամ պետությունները և Հայաստանը համարում են պայմանները հաստատված, եթե նրանք հակառակը չեն ապացուցել»:

Կրկին, ինչպես և քաղաքացիության դեպքում, եթե ներկայացվում են Համաձայնագրի Հավելված 4-ում թվարկված ապացուցման միջոցները՝



հարցում ներկայացրած պետության համապատասխան մարմինների կողմից տրված նկարագրություն վայրի և հանգամանքների վերաբերյալ, որոնց ներքո համապատասխան անձը կանգնեցվել է այդ պետության տարածք մուտք գործելուց հետո,

միջազգային կազմակերպության (օրինակ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակարար) կողմից տրված տեղեկատվություն անձի ինքնության և (կամ) գտնվելու վերաբերյալ,

ընտանիքի անդամների, ճանաչողական ընկերությունների և այլոց կողմից տեղեկատվության հաստատում (զեկուցում),

համապատասխան անձի հայտարարություն,

մատնահետքեր,

ցանկացած տեսակի փաստաթղթեր, հավաստագրեր և հաշիվներ (օրինակ՝ հյուրանոցի հաշիվներ, բժշկի (սպասմանսրոյժի) մուր հաճախման քարտեր, պետական (մասնավոր) հաստատություններ մուտք գործելու քարտեր, մեքենայի վարձույթի պայմանագրեր, վարկային քարտերի անդորրագրեր և այլն), որոնք հարակցույց են տալիս, որ համապատասխան անձը գտնվել է հարցում սրացած պետության տարածքում,

օդային, երկաթուղային, ավիոբուսի կամ նավի անվանական տոմսեր և (կամ) ուղևորների ցուցակներ, որոնք ցույց են տալիս համապատասխան անձի ներկայությունը և երթուղին հարցում սրացած պետության տարածքում,

տեղեկատվություն, որը ցույց կտար, որ համապատասխան անձը օգտվել է սուրհանդակի կամ ճամփորդական գործակալության ծառայություններից,

պաշտոնական հայտարարություններ՝ արված մասնավորապես սահմանապահ մարմինների աշխատակիցների և այլ վկաների կողմից, որոնք կարող են հաստատել համապատասխան անձի կողմից սահմանը հատելու փաստը,

համապատասխան անձի կողմից դատական կամ վարչական վարույթում արված պաշտոնական հայտարարություն:

ապա անդամ պետությունները և Հայաստանը համարում են պայմանները հաստատված, եթե նրանք հակառակը չեն ապացուցել

Այստեղ ևս, հակառակը ապացուցելու պարտավորությունը դրված է հարցում ստացած պետության վրա:

Խնդիրը հանգում է նրան թե ինչպե՞ս պետք է ստուգվեն ներկայացված պայմանները, և ո՞րն է հակառակը ապացուցելու մեխանիզմը:

Ըստ էության, վերը բերված ապացուցման միջոցները վերաբերում են այն դեպքին, երբ անհրաժեշտ է առերևույթ փաստարկներ բերել այն մասին որ երրորդ երկրի քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք անօրինական կերպով և ուղղակիորեն մուտք են գործել անդամ պետության տարածք Հայաստանի տարածքում գտնվելուց կամ տարածքով անցնելուց հետո, քանի որ մյուս դեպքի՝ Հայաստանի կողմից վիզա կամ կացության թույլտվություն տրամադրելու փաստի վերաբերյալ հազիվ թե հնարավոր լինի եզրակացնել վերոհիշյալ հիմքերից:

«ՀՀ -ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի թիվ 300-Ն որոշումը¹ (Հավելված 2) պատասխանում է այն հարցերին, թե ինչպե՞ս պետք է ստուգվեն ներկայացված պայմանները, և ո՞րն է հակառակը ապացուցելու մեխանիզմը:

Այսպես, որոշմամբ սահմանված կարգի համաձայն, համաձայնագրի իրականացման համար իրավասու մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայությունը, երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձի հետընդունման վերաբերյալ դիմումը ստանալուն պես, ՀՀ ազգային անվտանգության

¹ Այս որոշման մասին առավել մանրամասն, տես՝ 8.3 կետում:



ծառայության Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ստուգում է տվյալ անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դիմումը ներկայացրած օտարերկրյա պետության տարածք ուղղակիորեն մուտք գործած լիներու փաստը: Եթե այդ փաստը հաստատվում է, մնում է հավաստիանալ որ տվյալ անձի մուտքը, ներկա գտնվելը կամ բնակությունը հարցում ներկայացրած պետությունում անօրինական են եղել: Վերջինիս մեխանիզմը սահմանված է Համաձայնագրի 10-րդ հոդվածի 3-րդ կետում:

4.4 Մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինական բնույթի հաստատումը

Հետաքրքիր է որ երրորդ երկրի քաղաքացիների դեպքում, համաձայնագիրն առանձին անդրադառնում է հարցում ներկայացրած պետության կողմից այդ անձանց մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինական բնույթի հաստատման խնդրին, ինչն առկա է սեփական քաղաքացիների համար:

10-րդ հոդվածի 3-րդ կետում ասվում է՝ «Մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինական բնույթը հաստատվում է համապատասխան անձի ճամփորդական փաստաթղթերի միջոցով, որում անհրաժեշտ վիզան կամ հարցում ներկայացրած պետության տարածքում բնակության անհրաժեշտ թույլտվությունը բացակայում է: Հարցում ներկայացրած պետության կողմից հայտարարությունն այն մասին, որ պարզվել է, որ համապատասխան անձը չունի անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթեր, վիզա կամ բնակության թույլտվություն, նմանապես համարվում է առերևույթ փաստարկ մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինականության փաստի վերաբերյալ»:

Ինչպես տեսնում ենք վերը նկարագրված մեխանիզմը հետևյալն է՝ եթե համապատասխան անձի ճամփորդական փաստաթղթերում բացակայում է վիզան կամ հարցում ներկայացրած պետության տարածքում բնակության թույլտվությունը, ապա դրանով հաստատվում է նրա մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինական բնույթը: Վերջինս հիմք է տալիս հարցում ներկայացրած պետությանը հայտարարություն ներկայացնել հարցում ստացած պետությանն այն մասին որ համապատասխան անձը չունի անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթեր, վիզա կամ բնակության թույլտվություն, ինչը Կողմերը պետք է ճանաչեն որպես առերևույթ փաստարկ մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինականության փաստի վերաբերյալ: Այստեղից հետևում է որ հարցում ստացած պետությանը՝ տվյալ դեպքում Հայաստանին անհրաժեշտ է ճշտել միայն երրորդ երկրի քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձաի կողմից ուղղակիորեն Հայաստանից մյուս Կողմի տարածք մուտք գործած լինելու փաստը, իսկ այդ մուտքի անօրինականության վերաբերյալ ապացույցը կամ առերևույթ փաստարկը ներկայացնում է հարցում ներկայացնող կողմը:

5. ՄԻԱԼՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՀԵՏԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Սովորաբար ռեադմիսիոն համաձայնագրերը պարունակում են դրույթ ըստ որի անձին հետ վերադարձրած պետությունը պարտավորվում է հետ ընդունել այդ անձին, եթե պարզվի որ համաձայնագրով սահմանված հետ ընդունման համար անհրաժեշտ պայմանները չեն կատարվել: Այլ կերպ ասած սա մի դրույթ է որի նպատակն է շտկել այն հնարավոր սխալը որը կարող է տեղի ունենալ ռեադմիսիոն համաձայնագրերի կիրարկման ընթացքում: Օրինակ, եթե անձը հետ է վերադարձվել, սակայն վերադարձից հետո պարզվել է որ նա բնավ էլ այն պետության քաղաքացին չէ ուր նա վերադարձվել է, կամ պարզվել է որ նա այդ պետության կողմից վիզա կամ կացության կարգավիճակ չի ստացել, նման



դեպքերում կազմակերպվում է անձի վերադարձը իրենց հետ ուղարկած երկիր: Կարևոր հանգամանք է այն, որ հետ ընդունումը կատարվում է անձին առաջին անգամ հետ վերադարձրած պետության հաշվին:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում, այս հարցը ներառված է 13-րդ հոդվածում, որի 1-ին կետում ասվում է՝ «Հարցում ներկայացրած պետությունը հետ է ընդունում հարցում ստացած պետության կողմից հետ ընդունված ցանկացած անձի, եթե տվյալ անձի փոխադրումից հետո վեց ամսվա ընթացքում հաստատվում է, որ սույն Համաձայնագրի 3-6-րդ հոդվածներով սահմանված պահանջները չեն կատարվել»:

Կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ հետ ընդունման համար առկա է ժամկետային սահմանափակում՝ բոլոր ապացույցները անհրաժեշտ է ներկայացնել անձի փոխադրումից հետո 6 ամսվա ընթացքում:

Այս գործընթացի իրականացման հետ կապված նույնպես մի շարք հարցեր են առաջանում, ինչպես օրինակ՝ ո՞վ պետք է նախաձեռնի հետընդունման գործընթացը, ո՞ր մարմինն պետք է դիմի անձը, եթե գտնում է որ իրեն Հայաստան վերադարձնելու հիմքերը բացակայում են, ի՞նչ միջոցներով կարող է ապացուցվել սահմանված պահանջները չկատարելու փաստը, որտե՞ղ պետք է բնակվի այդ անձը մինչև հանգամանքների պարզումը եթե նա բնակվելու տեղ չունի:

Վերոհիշյալ հարցերից կարծես թե ամենաակնհայտ պատասխանն ունի առաջին հարցը՝ գործընթացը պետք է նախաձեռնի հետ վերադարձած անձը, եթե նա գտնում է որ իր նկատմամբ սխալ են թույլ տվել և իրեն Հայաստան վերադարձնելու հիմքերը բացակայում են: Այդ դեպքում նա պետք է դիմի իրավասու մարմնին, բայց գործնականում ամեն ինչ կարող է այնքան էլ հարթ չընթանալ քանի որ այդ անձը ՀՀ մուտք գործելիս առաջինն առնչվում է սահմանապահ ծառայության աշխատակիցների հետ, և նրա կողմից ՀՀ մուտք գործելու հետ կապված անհամաձայնություն հայտնելու դեպքում, ըստ մինչ այժմ ընդունված պրակտիկայի, նրա մուտքը երկիր կարող է չթույլատրվել մինչև հանգամանքների վերջնական պարզումը: Դա էլ նշանակում է որ տվյալ անձը կարող է մնալ պասսիվ կարգավիճակում, չկարողանալով ինքը ներկայացնել և զբաղվել իր խնդրով: Կարծում ենք որ տվյալ դեպքում շատ կարևոր է որ սահմանային վերահսկողություն իրականացնող մարմինը և համաձայնագրի իրականացման համար իրավասու մարմինը աշխատեն համագործակցված: Դա նշանակում է որ ՀՀ սահմանապահ ծառայությունը նման դեպքերի վերաբերյալ պետք է անհապաղ տեղյակ պահի Միգրացոին պետական ծառայությանը և նրանք պետք է համատեղ աշխատեն տվյալ անձի խնդրի լուծման ուղղությամբ:

Այն հարցին թե ի՞նչ միջոցներով կարող է ապացուցվել Համաձայնագրով սահմանված պահանջները չկատարելու փաստը, այս պահին դժվար է միանշանակ պատասխան տալ: Օրինակ, կարող է լինել դեպք երբ անձը որևէ փաստաթուղթ չի ներկայացրել, նրա հետ անցկացված հարցազրույցի արդյունքում որոշվել է որ նա ՀՀ քաղաքացի է, նրան տրվել է վերադարձի վկայական, որով էլ նա վերադարձել է Հայաստան, սակայն նա պնդում է որ ինքը ՀՀ քաղաքացի չէ: Կարո՞ղ է արդյոք այդ անձը վերադարձի վկայականը հիմք ընդունելով հայց ներկայացնել դատարան: Կարծում ենք հարցը լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի:

Ինչ վերաբերում է անձին ժամանակավոր կացարանով ապահովելու խնդրին, սա վերոհիշյալներից ամենաբարդն է, քանի որ ներկայումս որևէ նման հնարավորություն



առկա չէ, իսկ դրա ստեղծումն էլ կապված է բավականին մեծ բարդությունների հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սա խիստ կարևոր խնդիր է, առաջարկում ենք որ «ՀՀ -ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» որոշմամբ նախատեսված՝ Համաձայնագրով ստանձնված հանձնառությունների կատարման ընթացքի նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու և ծագող խնդիրները քննարկելու նպատակով ստեղծվելիք միջգերատեսչական աշխատանքային խումբը ուղադրություն դարձնի այս խնդրի վրա և փորձի լուծում տալ դրան:

Վերադառնալով 13-րդ հոդվածին, անդրադառնանք դրա 2-րդ կետին որտեղ խոսվում է այն մասին որ՝ «Նման դեպքերում, սույն Համաձայնագրի ընթացակարգային դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով, և տրամադրվում է հետ ընդունվող անձի իրական ինքնությանը և քաղաքացիությանը վերաբերող հասանելի ողջ տեղեկատվությունը»: Սա նշանակում է որ եթե որևէ դեպք քննվում է որպես սխալմամբ իրականացված հետընդունում, անհրաժեշտ է ուսպեսզի հարցում ստացած պետությունը հարցում ներկայացրած պետությանը տրամադրի այդ անձի վերաբերյալ իրեն հասանելի ողջ տեղեկատվությունը:

6. ՏԱՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռեադմիսիոն համաձայնագրերում սովորաբար մի ամբողջ բաժին նվիրված է տարանցման հետ կապված հարցերին: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կողմերի տարածքներում կարող են անօրինական գտնվել երրորդ երկրի քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք որոնց ուղղակի վերադարձը իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկրներ հնարավոր չէ իրականացնել: Այդ իսկ պատճառով առաջանում է Կողմերի տարածքներով նրանց տարանցման կազմակերպման խնդիրը, ինչն էլ իր արտացոլումն է գտնում համաձայնագրերում:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում այս հարցերը ներկայացված են IV-րդ բաժնում որը կրում է «Տարանցման գործողությունները» անունը: Այդ բաժնում զետեղված են երկու հոդվածներ որոնք վերաբերում են տարանցման սկզբունքներին և տարանցման ընթացակարգին: Դիտարկենք դրանք առավել մանրամասնորեն:

6.1 Տարանցման սկզբունքները

14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է որ՝ «Անդամ պետությունները և Հայաստանը պետք է սահմանափակեն երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը՝ հասցնելով այն դեպքերին, երբ այդ անձինք չեն կարող ուղղակիորեն վերադարձվել նպատակակետ հանդիսացող պետություն»:

Սա նշանակում է որ անձանց տարանցումը պետք է հիմնավորված լինի և իրականացվի միայն այն դեպքերում երբ անձի ուղղակի վերադարձը նպատակակետ պետություն հնարավոր չէ իրականացնել:

14-րդ հոդվածի 2-րդ կետում խոսվում է այն մասին որ՝ «Հայաստանը թույլատրում է երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը, եթե անդամ պետությունը նման հարցում է ներկայացնում, և անդամ պետությունը թույլատրում է երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը,



եթե Հայաստանն է ներկայացնում նման հարցում, եթե հնարավոր այլ տարանցիկ պետությունում հետագա ճամփորդությունը և նպատակակետ հանդիսացող պետության կողմից հետընդունումը հաստատվել է»:

Այս կետով որոշակի տարբերակում է մտցրած դեպքերի մեջ: Այսպես՝ եթե Հայաստանը պետք է թույլատրի երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը, անհրաժեշտ է որպեսզի ամկա լինի անձանց տարանցման վերաբերյալ հարցումը և անդամ պետության թույլատվությունը այդ անձանց տարանցման վերաբերյալ, մինչդեռ եթե Հայաստանն է նման հայց ներկայացնում, պահանջվում է որպեսզի հարցմանը զուգահեռ ներկայացվի հաստատում այն բանի վերաբերյալ որ հնարավոր այլ տարանցիկ պետությունում հետագա ճամփորդությունը և նպատակակետ հանդիսացող պետության կողմից հետընդունումը երաշխավորված են: **Նման տարբերությունը ենթադրաբար կապված է ԵՄ-ում գործող ներքին կանոնակարգերի հետ և** ակնհայտ է որ ԵՄ անդամ պետության կողմից երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց տարանցման թույլատվության տրամադրումը պետք է նշանակի որ այլ տարանցիկ պետությունում հետագա ճամփորդությունը և նպատակակետ հանդիսացող պետության կողմից հետընդունումը համաձայնեցված է:

14-րդ հոդվածի 3-րդ կետում բերվում են այն հիմքերը որոնց ամկայության դեպքում տրանզիտը կարող է մերժվել, այդ հիմքերը երեքն են՝

1. եթե լուրջ վտանգ կա, որ երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը նպատակակետ հանդիսացող պետության կամ տարանցման այլ պետության սահմաններում կենթարկվի խոշտանգման կամ այլ անմարդկային, կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի կամ մահապատժի կամ կհետապնդվի ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների հիմքով,
2. եթե երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը հարցում ստացած պետության կամ տարանցիկ որևէ այլ պետության սահմաններում կարող է ենթարկվել քրեական պատժամիջոցների, կամ
3. հանրային առողջության, ազգային անվտանգության, հանրային կարգի հիմքերով կամ հարցում ստացած պետության ազգային այլ շահերից ելնելով:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել որ առաջին և երկրորդ դեպքերում տրանզիտի մերժման նպատակը մարդու միջազգայնորեն ճանաչված հիմնարար իրավունքների պաշտպանությունն է, իսկ երրորդում՝ հարցում ստացած պետության ազգային անվտանգության շահերի պաշտպանման անհրաժեշտությունը:

14-րդ հոդվածի 4-րդ կետով հնարավորություն է տրվում Կողմերին չեղյալ հայտարարել անձի տարանցման համար տրված ցանկացած թույլտվություն՝ «եթե առաջանան կամ պարզ դառնան սույն Հոդվածի 3-րդ պարբերությունում նշված հանգամանքները, որոնք խոչընդոտում են տարանցման գործողության իրականացմանը, կամ եթե հետագա ճամփորդությունը հնարավոր տարանցման պետություններում կամ հետ ընդունումը նպատակակետ հանդիսացող պետության կողմից այլևս ապահովված չէ: Այդ դեպքում, հարցում ներկայացրած պետությունը հետ է ընդունում երրորդ պետության քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին՝ ըստ անհրաժեշտության և առանց ուշացման»:

Սա կարևոր դրույթ է և հնարավորություն է տալիս ճկունություն դրսևորել հանգամանքների փոփոխության դեպքում և չվտանգել տարնացման ենթակա անձանց կյանքն ու անվտանգությունը:



6.2 Տարանցման ընթացակարգը

15-րդ հոդվածի 1-ին կետում սահմանվում է տարանցման վերաբերյալ դիմում ներկայացնելու ձևը և դրանում ներառվելիք տեղեկատվությունը, ինչպես նաև այն հանգամանքը որ տարանցման դիմումը կարող է ներկայացվել կապի ցանկացած միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային: Այսպես ասվում է որ՝ «Տարանցման գործողությունների վերաբերյալ դիմումը հարցում ստացած պետության իրավասու մարմնին պետք է ներկայացվի գրավոր և պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

ա) տարանցման տեսակը (օդային, ծովային կամ ցամաքային), տարանցման այլ հնարավոր պետություններ և նախատեսված վերջնական նպատակակետը հանդիսացող պետություն,

բ) համապատասխան անձի տվյալները (անունը, ազգանունը, օրիորդական ազգանունը, այլ անուններ, որով հայրնի է, կամ կեղծանունները, ծննդյան տարեթիվը, սեռը, և, ըստ անհրաժեշտության, ծննդյան վայրը, քաղաքացիությունը, լեզուն, ճամփորդական փաստաթղթերի տեսակն ու համարը,

գ) նախատեսված մուտքի անցակետը, տարանցման ժամկետը և ուղեկցման հավանականությունը,

դ) հայտարարություն այն մասին, որ հարցում ներկայացրած պետության կարծիքով 14(2) հոդվածում նշված պայմանները կատարվել են, և որ հայրնի չէ 14(3) հոդվածի համաձայն մերժման համար որևէ պարճառ»:

Նկատենք որ այստեղ նույնպես, հակառակը ապացուցելու, այսինքն մերժման պատճառ ներկայացնելու պարտականությունն ընկած է հարցում ստացած պետության վրա:

15-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանվում է դիմումին պատասխանելու ժամկետները և ձևը՝ «Հարցում ստացած պետությունը, դիմումն ստանալուց հետո երեք օրացուցային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնում է հետընդունման համար հարցում ներկայացրած պետությանը՝ հաստատելով հետընդունման անցակետը և ժամանակը, կամ էլ տեղեկացնում է հետընդունման մերժման և մերժման պատճառների մասին: Երեք աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չստանալու դեպքում, տարանցումը համարվում է համաձայնեցված: Տարանցման դիմումի պատասխանը կարող է ներկայացվել կապի ցանկացած միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային»:

Կարևոր է հիշել որ պատասխան չներկայացնելը չի խոչընդոտում տրանզիտի իրականացմանը և որ պատասխանի ներկայացման համար նախատեսված է երեք օրացույցային օր:

15-րդ հոդվածի 3-րդ կետում խոսվում է այն մասին որ «Եթե տարանցման գործողությունն իրականացվում է օդային ուղիներով, ապա հետ ընդունվող անձը և նրա հնարավոր ուղեկցողն ազատվում են օդանավակայանով տարանցման վիզա ձեռք բերելու պահանջից»:

15-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Հարցում ստացած պետության իրավասու մարմինները, փոխադարձ խորհրդակցությունների համաձայն, աջակցում են տարանցման գործողությունների իրականացմանը՝ մասնավորապես տվյալ անձանց վերահսկողության, ինչպես նաև այդ նպատակով անհրաժեշտ հարմարությունների ապահովման միջոցով»:

Վերջապես այս հոդվածի վերջին՝ **5-րդ կետով** սահմանվում է անձանց տարանցման ժամկետը՝ «Անձանց տարանցումն իրականացվում է տարանցման խնդրանքին համաձայնություն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում»:

Կարծում ենք որ համաձայնագրի կիրարկման գործընթացում ներառված ՀՀ համապատասխան պետական մարմինների աշխատակիցները պետք է ուշադրության կենտրոնում պահեն թե վերը նշված և թե Համաձայնագրում սահմանված մյուս բոլոր ժամկետները, քանի որ նաև դրանց պահպանումից է կախված լինելու այն, թե ինքսանով է հայկական կողմը կատարում Համաձայնագրով իր կողմից սրանձնաձ պարտավորությունները:



7. ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

7.1 ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից ռեադմիսիայի ենթակա անձին ՀՀ վերադարձի վկայականի տրամադրումը

Վերադարձի համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերի տրամադրումը ռեադմիսիոն համաձայնագրերի կիրարկումն ապահովող կարևոր մեխանիզմներից մեկն է: Այն առավել մեծ նշանակություն է ձեռք բերում այն դեպքերում, երբ վերադարձի ենթակա անձը հրաժարվում է որևէ փաստաթուղթ ներկայացնել, և նրա քաղաքացիությունը հնարավոր է լինում հաստատել միայն նրա ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչության կողմից անցկացված հարցազրույցի հիման վրա: Իսկ հայտնի է, որ ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում հաճախ հետ են վերադարձվում հենց նման անձինք:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում հետ ընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթղթի մասին խոսվում է 3-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերում:

Համաձայնագրի 4-րդ կետում կարդում ենք՝ «Այն բանից հետո, երբ Հայաստանը դրական է արձագանքում հետընդունման դիմումին, Հայաստանի իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը, անկախ հետ ընդունվող անձի ցանկությունից, միանգամից, անվճար և ոչ ավելի, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հետ ընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթը՝ 120 օր վավերականությամբ: Եթե Հայաստանը երեք օրվա ընթացքում չի տրամադրում փաստաթուղթ, ապա ենթադրվում է, որ այն ընդունում է ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը»:

ՀՀ քաղաքացիներին վերադարձի համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերի տրամադրման հետ կապված հարցերը կանոնակարգվում են ՀՀ կառավարության «ՀՀ վերադարձի վկայականի նկարագիրը և տալու կարգը հաստատելու մասին» 2011թ.-ի մարտի 24-ի թիվ 297-Ն որոշմամբ (Հավելված 3):

Այդ որոշման Հավելված 2-ի 1-ին կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականը միանգամյա օգտագործման ճամփորդական փաստաթուղթ է, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացուն, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող քաղաքացիություն չունեցող անձանց հնարավորություն է տալիս օտարերկրյա պետությունից շտապ վերադառնալ Հայաստանի Հանրապետություն՝ սահմանը հատելու իրավունք տվող օրինական փաստաթղթի բացակայության դեպքում:

Այժմ տեսնենք, թե որքանով են ՀՀ օրենսդրությամբ ապահովվում Համաձայնագրով ՀՀ կողմից ստանձնված վերոհիշյալ պարտավորությունները, և մատնանշենք, բացերը, եթե այդպիսիք առկա են: Այդ նպատակով մաս-մաս դիտարկենք Համաձայնագրի 4-րդ կետում շարադրված դրույթները դրանք համադրելով ՀՀ կառավարության որոշման մեջ առկա համապատասխան դրույթների հետ:

Համաձայնագրի համաձայն, վերադարձի համար անհրաժեշտ փաստաթղթի տրամադրման համար պետք է առկա լինի հետընդունման դիմումի վերաբերյալ դրական արձագանքը:



Կառավարության որոշման 2-րդ հավելվածով հաստատված Կարգի 4-րդ կետով սահմանված է որ՝ «Վերադարձի վկայական տրվում է նաև օտարերկրյա պետությունում ապօրինի գտնվող և օրինական փաստաթուղթ չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձն ապահովելու համար, օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ սահմանված կարգով ներկայացված հարցման հիման վրա, այդ թվում՝ համապատասխան պետության հետ կնքված՝ առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու և տարանցիկ փոխադրման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրով՝ նախատեսված կարգով ներկայացված հարցման կամ ռեադմիսիայի համաձայնագրով սահմանված հարցազրույցի արդյունքում կայացրած որոշման հիման վրա»:

Բերված մեջբերումից հետևում է որ որոշման մեջ, որպես վերադարձի վկայականի տրամադրման հիմք ներառված է նաև ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում ստացված հարցումը, կամ հարցազրույցի արդյունքում կայացված որոշումը:

Համաձայնագրի համաձայն, հետ ընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթղթի տրամադրման հարցում հետ ընդունվող անձի ցանկությունը հաշվի չի առնվում:

Կառավարության որոշման մեջ այդ մասին ասվում է հետևյալը՝ «Սույն կարգի 4-րդ կետում նշված դեպքում՝ անձին վերադարձի վկայական տրամադրելու խնդրանքով հյուպատոսական հիմնարկ կարող է դիմել նաև օտարերկրյա պետության իրավասու մարմինը: Եթե անձը հրաժարվել է լրացնել և ստորագրել դիմում-հարցաթերթիկը, նրա փոխարեն այն հայերենով կամ հայերեն թարգմանությամբ լրացնում և ստորագրում է օտարերկրյա իրավասու մարմնի պաշտոնյան»:

Վերոգրյալից հետևում է, որ այս հարցի վերաբերյալ Համաձայնագրի և Կառավարության որոշման միջև որևէ հակասություն չկա:

Համաձայնագրում նշված է որ փաստաթուղթը պետք է տրամադրվի միանգամից, անգլերեն տարբերակում (immediately), ինչի նպատակն այնքան էլ հասկանալի չէ քանի որ հենց նույն կետում փաստաթղթի տրամադրման համար սահմանված է ժամկետ՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայնագրում նշված է որ վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթը պետք է տրամադրվի անվճար: Կառավարության որոշման մեջ նման հիշատակում չկա: Ավելին՝ որոշման 2-րդ հավելվածով հաստատված Կարգի 5-րդ կետում թվարկված՝ վերադարձի վկայական ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի շարքում նշված է հետևյալը՝ «պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ կամ վճարման անհրաժեշտ վավերապայմաններ»:

Միևնույն ժամանակ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ՝ «Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը» հոդվածի 1-ին կետի թ) ենթակետում նշված է որ ՀՀ կառավարության կողմից սահմանված, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում ՀՀ վերադարձի վկայական տալու համար սահմանվում է պետական տուրքի 0 դրույքաչափ:

Ասվածից հետևում է որ ՀՀ օրենսդրությամբ ապահովվում է նաև վերադարձի վկայականի տրամադրման դիմաց վճար չգանձելու Համաձայնագրի պահանջը:

Համաձայնագրի համաձայն, փաստաթուղթը պետք է տրամադրվի ոչ ավել քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Այդ մասին ՀՀ կառավարության որոշման 2-րդ հավելվածով հաստատված Կարգի 22-րդ կետում ասվում է հետևյալը՝ «Հյուպատոսական հիմնարկն անձի ինքնությունը և քաղաքացիությունը պարզելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դիմողին է տրամադրում վերադարձի վկայականը»:



Իսկ ինչքան ժամանակ է հատկացված անձի ինքության և քաղաքացիության պարզման համար: **Որոշման 2-րդ հավելվածի 3-րդ և 4-րդ մասերը** նվիրված են այդ հարցերին: Դրանցում նախատեսված են հետևյալ դեպքերը՝

- եթե ներկայացվում են անվավեր (վավերականության ժամկետը լրացած) ՀՀ քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտ, կամ՝ օգտագործման համար ոչ պիտանի ՀՀ քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտ, կամ՝ ՀՀ իրավասու մարմնի կողմից տրված զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական, կամ՝ նախկին ՀԽՍՀ քաղաքացու անձնագիր և դիմումն ընդունած հյուպատոսական հիմնարկի նստավայր պետության կամ հյուպատոսական տարածաշրջանի պետության քաղաքացիություն ունենալը ժխտող փաստաթուղթ, կամ ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձի, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող քաղաքացիություն չունեցող անձի այդ կարգավիճակը հիմնավորող և ինքնությունը հաստատող փաստաթուղթ, ապա անձի ինքնությունը և քաղաքացիությունը պարզվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա, մեկ աշխատանքային օրվա ընթացքում,
- եթե չի ներկայացվում վերոհիշյալ փաստաթղթերից ոչ մեկը, ներկայացվող փաստաթուղթը կասկած է հարուցում (առկա են չհաստատված ջնջումներ կամ ուղղումներ, լուսանկարի փոխման հետքեր, կնիքները կամ դրոշմակնիքները հստակ չեն, փաստաթուղթն առավելապես մաշված է կամ առկա են այլ հիմնավոր փաստական հանգամանքներ), ապա անձի ինքնության և քաղաքացիության պարզումը կատարվում է ՀՀ բնակչության պետական ռեգիստրում պահվող տվյալների հիման վրա: Ընդ որում այդ ստուգումը կատարվում է հետևյալ եղանակներով՝
- «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգի միջոցով: Հյուպատոսական հիմնարկի կողմից համակարգի միջոցով անձի ինքնության և քաղաքացիության պարզումը կատարվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե բնակչության պետական ռեգիստրում առկա են անձի անհատական տվյալները և էլեկտրոնային լուսանկարը: Այդպիսի տվյալների բացակայության կամ դրանց որոշակի անհամապատասխանությունների դեպքում՝ նախարարության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից համակարգի միջոցով մեկօրյա ժամկետում հարցում է կատարվում ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: Վերջինս հարցումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տվյալ անձի լուսանկարով անձնագրային գործողությունների վերաբերյալ դիմումը թվայնացնում և համակարգի միջոցով ուղարկում է հարցումը կատարողին: Ոստիկանության կողմից լրացուցիչ ստուգումների, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման մարմիններին հարցումներ կատարելու անհրաժեշտության դեպքում՝ նշված ժամկետը ոստիկանության կողմից կարող է երկարաձգվել առավելագույնը տասն աշխատանքային օրով: Նախարարությունը ոստիկանության պատասխանն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատասխանն ուղարկում է հարցումը կատարած հյուպատոսական հիմնարկ:
- համակարգի բացակայության դեպքում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն հարցում կատարելու միջոցով: Հարցումը կատարվում է հյուպատոսական հիմնարկի կողմից դիմումն ընդունելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային եղանակով: Նախարարությունում հարցումն ստանալուց հետո համակարգի միջոցով կատարվում է անձի ինքնության և քաղաքացիության պարզում և պատասխանն էլեկտրոնային եղանակով ուղարկվում է հյուպատոսական հիմնարկ: Այս գործողությունը կատարվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում:



- վերադարձի վկայական հայցողի՝ ՀՀ անձնագիր ստացած չլինելու դեպքում՝ անձի քաղաքացիության պարզումը կատարվում է Կարգով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում,
- եթե անձը չի ներկայացնում իր ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող որևէ փաստաթուղթ կամ հանդես է գալիս կեղծ տվյալներով, ապա անձի ինքնության և քաղաքացիության պարզումը կարող է կատարվել նաև ռեադմիսիայի համաձայնագրով սահմանված հարցազրույցի արդյունքում կայացրած որոշման հիման վրա:

Հանրագումարի բերելով վերոգրյալ կետերը փաստենք որ Հյուպատոսական հիմնարկը վերադարձի վկայականը տրամադրում է անձի ինքնությունը և քաղաքացիությունը պարզելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Անձի ինքնության և քաղաքացիության պարզումը տևում է ևս մեկ աշխատանքային օր: Բացառություն են կազմում այն դեպքերը երբ անձի տվյալները բացակայում են բնակչության պետական ռեգիստրում կամ առկա է դրանց որոշակի անհամապատասխանություն: Այս դեպքում ոստիկանությանը հարցում կատարելու, պատասխանը ստանալու համար պահանջվում է մինչև 5 աշխատանքային օր, իսկ առանձին առավել բարդ դեպքերում՝ 12 օր:

Ինչպես արդեն վերևում նշեցինք ռեադմիսիոն համաձայնագրի շրջանակում վերադարձի համար անհրաժեշտ փաստաթղթի տրամադրման առաջին պայմանն այն էր որ հետընդունման դիմումի վերաբերյալ լինի դրական պատասխան: Ինչը կարող է լինել միայն մի դեպքում՝ երբ անձի ինքնությունն ու քաղաքացիությունը հաստատված են կամ առնվազն ենթադրվում են, ինչից էլ հետևում է որ ըստ կառավարության որոշմամբ հաստատված կարգի, այս անձանց վերադարձի վկայականը պետք է տրամադրվի մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Ամեն դեպքում համաձայնագրում նշված եռօրյա ժամկետը ամրագրված է նաև «ՀՀ -ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագծի 1-ին հավելվածի 21-րդ կետում:

Անհրաժեշտ է նշել որ մտահոգության տեղիք են տալիս ոչ այնքան փաստաթղթի տրամադրման ժամկետները, որքան այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են անձի ինքնության հաստատման համար:

Ըստ կառավարության որոշման 2-րդ հավելվածով հաստատված Կարգի 12-րդ և 13-րդ կետերի՝ «Անձի ինքնությունը պարզելու համար ներկայացված տվյալները՝ լուսանկարը և մյուս անհատական տվյալները, համեմատվում են ներկայացված փաստաթղթերում առկա կամ բնակչության պետական ռեգիստրում պահվող տվյալների հետ: Անձի ինքնությունը համարվում է պարզված, եթե համեմատվող բոլոր անհատական տվյալները համընկնում են: Անհատական տվյալների (լուսանկար, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ և այլն) անհամապատասխանության դեպքում վերադարձի վկայականի տրամադրումը մերժվում է»:

ՀՀ-ի համար ուժի մեջ մտած ռեադմիսիոն համաձայնագրերի կիրարկման պրակտիկան ցույց է տալիս որ այստեղ խնդիրներ են առաջանում: Դիտարկենք դա կոնկրետ օրինակով: «ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրի շրջանակում ռուսական կողմից ստացվել է հարցում՝ անձի քաղաքացիությունը պարզելու վերաբերյալ: Այդ նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ Ոստիկանության ԱՎՎ, որի արդյունքում պարզվել է, որ չնայած այդ անձին չի տրվել ՀՀ քաղաքացու անձնագիր, բայց նա հանդիսանում է ՀՀ քաղաքացի՝



իր ծնողների ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հիմքով: Սակայն ՀՀ համապատասխան հյուպատոսության կողմից անձին չի տրամադրվել վերադարձի վկայական, պահանջելով իրականացնել անձի լուսանկարային նույնականացում, իրենց կողմից ուղարկված վերոնշյալ անձի լուսանկարի հիման վրա: ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ի համար հնարավոր չի եղել այդ լուսանկարի հիման վրա իրականացնել նույնականացում, քանի որ, ինչպես նշել ենք վերևում, տվյալ անձը չի ստացել ՀՀ քաղաքացու անձնագիր և բնականաբար նրա կողմից ներկայացված թիվ 1 ձևի դիմումի նմուշը չէր կարող գոյություն ունենալ:

Սրանից բացի, պատահում են դեպքեր երբ ԱՎՎ-ում պահվող լուսնակարը կարող է լինել բավականին վաղ շրջանի և դրանով դժվար է նույնականացնել անձին: Այսպիսով ստեղծվում է կախարդական շրջան, որի պատճառով մարդիկ չեն կարողանում հայրենիք վերադառնալ:

Ստեղծված իրավիճակը ՄԴԾ պետը ներկայացրել է ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված իր նամակում, նշելով որ մեր քաղաքացիների շահերից ելնելով առաջարկում է քննարկել և վերանայել անձի փաստաթղթային նույնականացումից հետո հյուպատոսության կողմից լուսանկարային նույնականացման լրացուցիչ պահանջի ներկայացումը:

Մեր կարծիքով ևս անհրաժեշտ է քննարկել ՀՀ կառավարության 2011թ.-ի մարտի 24-ի թիվ 297-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ եթե ինչ-ինչ պատճառներով անգամ իրականացվի սխալ տեղափոխում և դա պարզվի հետագայում, ապա ռեադմիսիոն համաձայնագիրը թույլ է տալիս մյուս կողմի միջոցների հաշվին կազմակերպել տվյալ անձի վերադարձը դեպի այդ երկիր:

Վերադառնալով վերադարձի վկայականին ներկայացվող պահանջներին, փաստենք որ վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթղթի վավերականությունը պետք է կազմի 120 օր:

Կառավարության որոշման մեջ այդ մասին ասվում է հետևյալը « Վերադարձի վկայականը տրամադրվում է մեկ ամիս ժամկետով: Ռեադմիսիայի համաձայնագրով նախատեսված դեպքում այն կարող է տրամադրվել տվյալ համաձայնագրով սահմանված ժամկետով»:

Ինչպես տեսնում ենք այստեղ նույնպես ապահովված է համաձայնագրի պահանջը:

Հաջորդ պայմանը վերաբերում է հետևյալին՝ երեք օրվա ընթացքում Հայաստանի կողմից փաստաթուղթը չտրամադրելու դեպքում ԵՄ-ն իրեն իրավունք է վերապահում անձին հետ ուղարկել ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթով:

Այս փաստաթղթի հետ կապված հարցերը առավել մանրամասն խոսարկենք ստորև 7.2 կետում:

Վերադառնանք Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ կետին որը նույնպես վերաբերում էր ճամփորդական փաստաթղթին, այնտեղ ասվում է որ՝ «Եթե իրավական կամ փաստացի պատճառներով համապատասխան անձը չի կարող փոխադրվել սկզբնապես տրված ճամփորդական փաստաթղթի վավերականության ընթացքում, Հայաստանի իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը երեք օրվա ընթացքում և անվճար տրամադրում է նոր ճամփորդական փաստաթուղթ միևնույն վավերականության ժամանակահատվածով: Եթե Հայաստանը երեք օրվա ընթացքում չի տրամադրում նոր ճամփորդական փաստաթուղթը, ապա ենթադրվում է, որ այն ընդունում է ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը»:

Կառավարության վերոհիշյալ որոշման մեջ այս մասին բնականաբար որևէ խոսք չկա, փոխարենը այս դրույթն ամրագրված է «ՀՀ -ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող



անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագծի 1-ին հավելվածի 21-րդ կետում:

Կարծում ենք որ վերոհիշյալ որոշումը ընդունումից հետո բավարար հիմք կլինի նոր ճամփորդական փաստաթղթի տրամադրման համար:

7.2 ՀՀ կողմից հետընդունման կամ տարանցման ենթակա անձանց տեղափոխման երթուղու և օրվա մասին իրավասու մարմնին տեղեկացնելը

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Չխախտելով 7(2) հոդվածի դրույթները՝ մինչև անձի վերադարձը, հարցում ներկայացրած պետության իրավասու մարմինները երկու աշխատանքային օրվա ընթացքում հարցում ստացած պետության իրավասու մարմիններին նախապես գրավոր ծանուցում են փոխադրման ժամկետների, մուտքի անցակետի, հնարավոր ուղեկցողների և փոխադրմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին»:

ՀՀ-ի համար ուժի մեջ մտած ռեադմիսիոն համաձայնագրերի փորձը ցույց է տալիս որ այս ժամկետները երբեմն խախտվում են հարցում ուղարկող պետության կողմից և անգամ լինում են դեպքեր երբ անձի վերադարձի մասին ծանուցումը ստացվում է անձի վերադարձի համար նշանակված օրից հետո: Սա անշուշտ խնդիր է և առանձին քննարկման կարիք ունի համաձայնագրի կողմ հանդիսացող պետությունների իրավասու մարմինների հետ:

Մնացած բոլոր դեպքերում այս հարցը հանգում է համակարգման ապահովմանը համաձայնագրի կիրարկման գործընթացում ներառված ՀՀ պետական մարմինների միջև, և անհրաժեշտ է այն պատահառով որ վերադարձող անձանց անմիջականորեն ընդունող և Համաձայնագրի իրականացման համար իրավասու մարմինները տարբեր են: Առաջին դեպքում դա ՀՀ Ազգային անվտանգության ծառայության Սահմանապահ զորքերն են, իսկ երկրորդում՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը:

Վերոհիշյալ խնդրի հետ կապված ինչ հարցեր են այսօր տեսանելի

- Ինչպես հետևում է Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետից, անձի փոխադրման մասին հարցում ստացած պետության իրավասու մարմինը տեղեկացվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև անձի վերադարձը: Սա նշանակում է որ այս տեղեկատվությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում, իրավասու մարմնից՝ Միգրացիոն պետական ծառայությունից պետք է հասնի Սահմանապահ զորքերին: Ներկայումս ՄԳԾ-ն այդ տեղեկատվությունն ուղարկում է ԱԱԾ-ին, խնդրելով իրազեկել սահմանապահ զորքերին:

Մեր կարծիքով նման ձևը վերանայման կարիք ունի: Անհրաժեշտ է որպեսզի ուղիղ հաղորդակցություն սահմանվի այս երկու մարմինների՝ ՄԳԾ-ի և Սահմանապահ զորքերի միջև, միաժամանակ տեղեկացնելով նաև Ազգային անվտանգության ծառայությանը: Հաղորդակցության նման ձևը հնարավորություն կտա որ վերադարձվող անձի վերաբերյալ տեղեկատվությունը Սահմանապահ զորքերի համար հասանելի լինի ժամանակին և առանց ուշացումների:

- Հնարավոր է որ անձի փոխադրման հետ կապված ինչ-ինչ աջակցության անհրաժեշտություն լինի հայկական կողմից: Անհրաժեշտ է որ սահմանային ծառայության



աշխատակիցները տեղյակ լինեն այդ մասին և պատրաստ լինեն ցուցաբերելու իրենց աջակցությունը:

- Ցանկալի է որ վերադարձված անձանց վերաբերյալ հավաքվի ամբողջական տեղեկատվություն, ինչը օգտակար կլինի ինչպես այդ անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքման տեսանկյունից, այնպես էլ կօգնի հետևել կոնկրետ դեպքերի ընթացքին (ռեադմիսիայի վերաբերյալ դիմումը ընդունվեց, թե մերժվեց, անձը վերադարձվեց թե ոչ, խնդիրներ առաջացան թե ոչ և այլն):

7.3 ԵՄ-ի՝ վտարման նպատակով տրվող ստանդարտ ճամփորդական փաստաթուղթը:

Պետք է նշել որ մինչ այժմ ՀՀ-ի կողմից ստորագրված ռեադմիսիոն ոչ մի համաձայնագրում այս փաստաթղթի մասին չի հիշատակվում, այլ կերպ ասած, սա առաջին անգամն է որ Հայաստանն ընդունում է որ անձը կարող է վերադարձվել նաև այս փաստաթղթով:

Ի՞նչ է իրենից ներկայացնում ԵՄ-ի՝ վտարման նպատակով տրվող ստանդարտ ճամփորդական փաստաթուղթը (Հավելված 4) և ե՞րբ է այն դրվել շրջանառության մեջ:

«Երրորդ երկրի քաղաքացիների վտարման նպատակով ստանդարտ ճամփորդական փաստաթղթի ընդունման վերաբերյալ» երաշխավորությունը (recommendation) ընդունվել է 1994թ. նոյեմբերի 30-ին: Կարելի է ենթադրել որ նման փաստաթղթի ընդունման համար պատճառներից մեկը կարող էր լինել ԽՍՀՄ փլուզման հետևանքով դեպի եվրոպական երկրներ ուղղված մեծածավալ միգրացիոն հոսքերի դեմ պայքարելու անհրաժեշտությունը:

Երաշխավորության բովանդակությունը հետևյալն է՝

- դիտարկելով անդամ-պետությունների տարածքում երրորդ երկրների քաղաքացիների չարտոնված իմմիգրացիայի, կացության և աշխատանքի դեմ պայքարը որպես ընդհանուր հետաքրքրության առարկա,
- հաշվի առնելով որ 1994թ. աշխատանքային ծրագրում վտարման չափանիշների իրագործման վերաբերյալ համագործակցությունը համարվել է գերակա ուղղություն,
- նկատի ունենալով որ անդամ պետությունների մեծամասնությունը դժվարություններ է ունենում ճամփորդական փաստաթղթեր չունեցող իրենց երկրներից վտարման ենթակա երրորդ երկրների քաղաքացիների հետ
- ցանկություն ունենալով բարելավել վտարման չափանիշների իրագործման արդյունավետությունը

Երաշխավորվում է որ՝

1995թ. հունվարի 1-ից սկսած, ստանդարտ ճամփորդական փաստաթուղթը որը վավերական է մեկանգամյա ճամփորդության համար, կօգտագործվի բոլոր անդամ պետությունների կողմից երրորդ երկրների քաղաքացիների վտարման դեպքում:

Փաստաթուղթը կընդունվի վտարումն իրականացնող անդամ պետության լեզվով:

Փաստաթուղթը որտեղ անհրաժեշտ է կթարգմանվի երկու լեզվով՝ անգլերեն և ֆրանսերեն:

Ինչպես նշեցինք փաստաթուղթը մինչ այժմ չի կիրառվել ՀՀ-ում, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է որպեսզի փաստաթուղթը՝ որպես ՀՀ մուտք գործելու իրավունք տվող փաստաթուղթ պաշտոնապես տրամադրվի ՀՀ ԱԱԾ սահմանապահ ծառայությանը, իսկ վերջինս էլ այն տրամադրի ՀՀ սահմանային անցման բոլոր կետերին:

Այդ նպատակով «ՀՀ -ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների



մասին» որոշման նախագծի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենին հանձնարարվում է ապահովել վտարման նպատակով Եվրոպական Միության կողմից տրվող ճամփորդական փաստաթղթի օգտագործումը՝ որպես ՀՀ մուտք գործելու հնարավորություն տվող ստանդարտ փաստաթուղթ:

Գործնականում, այդ փաստաթղթի օգտագործման ապահովումը պետք է տեղի ունենա հետևյալ մեխանիզմով՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո, համաձայնագրի իրականացման համար իրավասու մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը պետք է դիմի համաձայնագրի կիրարկման համար ԵՄ կողմից պատասխանատու մարմնին՝ խնդրելով պաշտոնապես տրամադրել «Երրորդ երկրի քաղաքացիների վտարման նպատակով ստանդարտ ճամփորդական փաստաթուղթը՝ այն ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը տրամադրելու նպատակով:

7.4 Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման մոնիթորինգը

Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման մոնիթորինգի ապահովման և ծագող խնդիրները քննարկելու նպատակով «ՀՀ -ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման 5-րդ կետով նախատեսված է ստեղծել Միջգերատեսչական աշխատանքային խումբ:

- Որոշման 2-րդ հավելվածով հաստատվում է աշխատանքային խմբի կազմը, այն է՝
 - ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ (աշխատանքային խմբի ղեկավար)
 - ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ
 - ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ
 - ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ներկայացուցիչ

Ի՞նչ հարցեր են այսօր տեսանելի կապված աշխատանքային խմբի ձևավորման և գործունեության հետ.

- ի՞նչ լիազորություններ է ունենալու աշխատանքային խումբը: Արդյոք խումբը կարող է իրավասություն ունենալ քննարկելու և որոշում ընդունելու կոնկրետ ռեադմիսիոն հայցի վերաբերյալ: Մեր կարծիքով ճիշտ կլիներ աշխատանքային խմբին օժտել նման լիազորությամբ, քանի որ հատկապես արագացված ընթացակարգով ստացվող դիմումների դեպքում, երբ անհրաժեշտ է 2 օրվա ընթացքում պատասխանել հայցադիմումին, աշխատանքները հնարավոր կլինի առավել արդյունավետ կազմակերպել եթե խմբի անդամները օպերատիվ կերպով համատեղ քննարկեն և որոշում ընդունեն կոնկրետ դեպքի վերաբերյալ:
- արդյոք անհրաժեշտ է աշխատանքային խմբի աշխատակարգի ընդունումը մինչև խմբի կողմից իր աշխատանքները սկսելը: Մեր կարծիքով նպատակահարմար է որ խումբը սկսի աշխատել, և աշխատանքների ընթացքից ելնելով ավելի ուշ, օրինակ 6 ամիս հետո ընդունվի խմբի աշխատակարգը: Նման մոտեցումը հնարավորություն կտա աշխատակարգը հնարավորինս մոտեցնել



իրականությանը և դրանում ներառել այն գործառույթները որոնք խումբն ի գործու է և պետք է իրականացնի;

- ինչպես, ինչ մեխանիզմներով պետք է իրականացվի համաձայնագրի իրականացման մոնիթորինգը: Քանի որ խմբում ներգրավված են լինելու այն պետական մարմինների պաշտոնյաները որոնք պատասխանատու են համաձայնագրի կիրարկման համար, ստացվում է որ իրենք պետք է մոնիթորինգի ենթարկեն իրենց իսկ գործունեությունը, ինչը կարող է լինել ոչ լիարժեք և ամբողջությամբ չարտացոլել իրականությունը: Գործընթացի նկատմամբ առավել լիարժեք մոնիթորինգ իրականացնելու նպատակով, առաջարկում ենք խմբի աշխատանքներում ներգրավել միջազգային և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

8. ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՅՎՈՂ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

8.1 ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22–N 1360–Ն որոշումը

ՀՀ-ի կողմից ստորագրված երկկողմ ռեադմիսիոն համաձայնագրերի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի սեպտեմբերի 22–ին ընդունվել է «Օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագրերի շրջանակներում օտարերկրյա պետություններից ստացվող դիմումները ՀՀ պետական մարմինների կողմից քննարկելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17–ի N 1073–Ն և 2005թ. հոկտեմբերի 20–ի N 1795–Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1360–Ն որոշումը (Հավելված 5):

Հիշյալ որոշմամբ, օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագրերի շրջանակներում՝ ՀՀ համար լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը: Միաժամանակ, որոշման դրույթները չեն տարածվել ուժի մեջ մտած այն միջազգային պայմանագրերի վրա, որոնցով նախատեսված են պայմանագրի իրականացման համար պատասխանատու այլ իրավասու մարմիններ /օրինակ՝ Բենիլյուքսի պետությունների, Գերմանիայի Բուլղարիայի հետ համաձայնագրերի դեպքում՝ դա Արտաքին գործերի նախարարությունն է, Դանիայի դեպքում՝ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունը/:

Անհրաժեշտ է նկատել «ՀՀ-ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի ստորագրումից հետո, անհրաժեշտություն առաջացավ որոշման մեջ ամրագրել այն դրույթը որ որոշումը չի տարածվում ՀՀ-ի և ԵՄ-ի միջև ռեադմիսիոն համաձայնագրի կիրառման վրա: Հիշատակված փոփոխությունն ընդունվեց ՀՀ կառավարության 19.03.14 N 289–Ն որոշմամբ, որով որոշման մեջ ավելացվեց նոր 5.1 կետ հետևյալ բովանդակությամբ՝ «Մույն որոշման դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրի կիրառման հետ կապված հարաբերությունների վրա»:



8.2 ՀՀ Վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 1228-Ա որոշումը

«ՀՀ-ի և ԵՄ-ի միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովելու նպատակով 2012 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունվել է ՀՀ Վարչապետի թիվ 1228-Ա որոշումը «Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական Միություն հետընդունման /ռեադմիսիայի/ մասին համաձայնագրից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» (Հավելված 4):

Այդ որոշմամբ սահմանված են այսպես ասած նախապատրաստական բնույթի միջոցառումներ որոնք միտված են համաձայնագրի կիրարկումը ՀՀ-ում պատշաճ մակարդակով ապահովմանը: Մասնավորապես նախատեսվում է՝

- ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության աշխատակազմի աշխատողների թիվն ավելացնել մեկով՝ համաձայնագրի իրականացման համար իրավասու մարմնի պարտականությունների կատարման ապահովման նպատակով;
- կազմակերպել ուսուցում հետընդունման գործընթացում ներառված մարմինների (ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ ծառայություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն) աշխատողների համար;
- Ապահովել հետընդունման արագացված ընթացակարգով ստացված հայցերին 2 աշխատանքային օրվա, իսկ սովորական ընթացակարգով՝ 12 օրացուցային օրվա ընթացքում պատասխանելու հնարավորությունը, այդ նպատակով՝
 - ՀՀ քաղաքացիների անձնագրերի տեղեկատվական բազայից օգտվելու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը հասանելիության ապահովում;
 - ՄԷԿՏ համակարգից՝ օդային ճանապարհով կատարված ելքերի մասին տվյալների՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը հասանելիության ապահովում
- ապահովել հետընդունման ենթակա անձին 6 ամսվա վավերականության ժամկետով վերադարձի վկայականի անվճար տրամադրումը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում;
- Ապահովել անձի նույնականացման նպատակով հարցազրույցի կազմակերպումը համապատասխան պետությունում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից

Պետք է նշել որ վերը նախատեսված աշխատանքները գրեթե ամբողջությամբ կատարվել են, անհրաժեշտ պայմաններ ստեղծելով համաձայնագրի կիրարկման համար:

8.3 ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի N 300 -Ն որոշումը

ՀՀ կառավարության կողմից 2014թ. մարտի 19-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 300-Ն որոշումը:

Որոշումից հետևում է որ ռեադմիսիոն գործընթացում ներառված են հետևյալ մարմինները՝

- ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն (ՀՀ ՏԿՆ ՄՊԾ)
- ՀՀ արտաքին գործերի նախարարություն (ՀՀ ԱԳՆ)



- ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն (ՀՀ ոստիկանության ԱՎՎ)
- ՀՀ ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ)


Որոշմամբ ՀՀ-ի համար լիազոր մարմին է ճանաչվում ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը:

Որոշման համապատասխան, Համաձայնագրով ստանձնած հանձնառությունների կատարման ընթացքի նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու և ծագող խնդիրները քննարկելու նպատակով նախատեսվում է ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ:

Որոշման համաձայն, Եվրոպական Միության անդամ պետության տարածքում առանց թույլտվության բնակվող ՀՀ, երրորդ պետությունների քաղաքացիների հետընդունման, ինչպես նաև ՀՀ տարածքով երրորդ պետությունների քաղաքացիների տարանցման մասին դիմումները ստացվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում: Վերջինս իրականացնում է ստացված դիմումների հաշվառումը թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

Որոշմամբ սահմանվում է հետընդունման 3 տեսակի (ՀՀ քաղաքացիների հետընդունման, երրորդ պետությունների քաղաքացիների հետընդունման, երրորդ պետությունների քաղաքացիների տարանցման վերաբերյալ) դիմումներից յուրաքանչյուրին պատասխանելու կարգն ու ժամկետները որի սխեմատիկ պատկերը բերված է ստորև՝

ՀՀ քաղաքացիների հետընդունման դիմումներ



Երրորդ պետությունների քաղաքացիների հետընդունման դիմումներ

ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն դիմումները ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է ՀՀ ոստիկանություն

ՀՀ ոստիկանությունը դիմումների վերաբերյալ կարծիք է հայտնում 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաստատելով կամ ժխտելով դիմումում նշված անձի՝ ՀՀ-ում բնակության իրավունք տվող կացության կարգավիճակ ունենալու կամ ՀՀ կողմից տրված մուտքի թույլտվության փաստը

ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն դիմումների պատասխանը օտարերկրյա պետության իրավասու մարմնին է ուղարկում դիմումը ստանալուց հետո 12 օրացույցային օրվա ընթացքում

Երրորդ պետությունների քաղաքացիների տարանցման մասին դիմումներ

ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն դիմումները ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, դրանք ուղարկում է ՀՀ ոստիկանություն և ՀՀ ԱԱԾ

ՀՀ ոստիկանությունը դիմումների վերաբերյալ իրենց կարծիքը ուղարկում է 1 աշխատանքային օրվա ընթացքում, անհամաձայնության դեպքում ներկայացնելով հիմնավորում մերժման հիմքերի վերաբերյալ:

ՀՀ ԱԱԾ-ն դիմումների վերաբերյալ իրենց կարծիքը ուղարկում է 1 աշխատանքային օրվա ընթացքում, անհամաձայնության դեպքում ներկայացնելով հիմնավորում մերժման հիմքերի վերաբերյալ:

ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն դիմումների պատասխանը օտարերկրյա պետության իրավասու մարմնին է ուղարկում դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում

Կառավարության որոշման նախագծով սահմանվում է նաև արագացված ընթացակարգով ստացվող դիմումներին պատասխանելու կարգն ու ժամկետները:



Արագացված ընթացակարգով ստացվող դիմումներ

ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն դիմումները ստանալուն պես, ՀՀ ԱԱԾ Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ստուգում է տվյալ անձի կողմից ՀՀ տարածքից դիմումը ներկայացրած օտարերկրյա պետության տարածք ուղղակիորեն մուտք գործած լինելու փաստը
Ուղղակիորեն մուտք գործած լինելու փաստը հաստատվելու դեպքում, եթե դիմումում նշված են ՀՀ քաղաքացու վերաբերյալ տվյալներ, ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն ՀՀ ոստիկանության տեղեկատվական գերատեսչական համացանցի միջոցով, դիմումում նշված տվյալները համեմատում է ՀՀ քաղաքացիների անձնագրերի տեղեկատվական բազայի հետ

ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն դիմումների պատասխանը օտարերկրյա պետության իրավասու մարմնին է ուղարկում դիմումը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում

Ուղղակիորեն մուտք գործած լինելու փաստը հաստատվելու դեպքում, եթե դիմումում նշված են երրորդ պետության քաղաքացու տվյալներ, ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն, դիմումը ստանալու օրը, ՀՀ ոստիկանության տեղեկատվական գերատեսչական համացանցի միջոցով այն ուղարկում է ՀՀ ոստիկանության ԱՎՎ, անձի՝ ՀՀ-ում բնակության իրավունք տվող կացության կարգավիճակ ունենալու կամ ՀՀ կողմից տրված մուտքի թույլտվության փաստը ճշտելու նպատակով

ՀՀ ոստիկանությունը արագացված ընթացակարգով ներկայացված դիմումներին պատասխանում է 1 աշխատանքային օրվա ընթացքում

ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն դիմումների պատասխանը օտարերկրյա պետության իրավասու մարմնին է ուղարկում դիմումը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև
առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԸ՝

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝ Միություն,
և

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝ Հայաստան,

ՎՃՌԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՎ, ամրապնդել իրենց համագործակցությունը անօրինական միգրացիայի դեմ առավել արդյունավետ պայքարելու համար,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ, սույն Համաձայնագրի միջոցով և փոխադարձության հիման վրա ստեղծել արագ և արդյունավետ ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի կամ Եվրոպական միության անդամ պետություններից մեկի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար պահանջներին, և դյուրացնելու այդպիսի անձանց տարանցումը՝ համագործակցության ոգով,

ՇԵՇՏԵԼՈՎ, որ սույն Համաձայնագիրը չպետք է սահմանափակի Միության, դրա անդամ պետությունների և Հայաստանի իրավունքները, պարտավորությունները և պարտականությունները, որոնք բխում են միջազգային իրավունքից, և, մասնավորապես «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի հուլիսի 28-ի կոնվենցիայից՝ փոփոխված 1967 թվականի հունվարի 31-ի արձանագրությամբ, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ի կոնվենցիայից,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ «Եվրոպական միության մասին» պայմանագրին և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրին կից ներկայացված՝ Ազատության, անվտանգության և արդարադատության տարածքի վերաբերյալ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման մասին 21-րդ արձանագրության համաձայն՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունն ու Իռլանդիան չեն մասնակցի այս Համաձայնագրի աշխատանքներին, եթե նրանք չտեղեկացնեն հակառակի մասին իրենց ցանկության վերաբերյալ՝ այդ Արձանագրությանը համապատասխան,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ սույն Համաձայնագրի դրույթները, որոնք գտնվում են «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի V գլխի երրորդ մասի գործողության ոլորտում, չեն կիրառվում Դանիայի Թագավորության նկատմամբ՝ համաձայն «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրին և «Եվրոպական միության մասին» պայմանագրին կից ներկայացված՝ Դանիայի Թագավորության դիրքորոշման մասին 22-րդ արձանագրության,



ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1 Սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակով՝

- ա) «Պայմանավորվող կողմեր» նշանակում է Հայաստանը և Միությունը.
- բ) «Հայաստանի քաղաքացի» նշանակում է ցանկացած անձ, ով ունի Հայաստանի քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան,
- գ) «անդամ պետության քաղաքացի» նշանակում է ցանկացած անձ, ով ունի անդամ պետության քաղաքացիություն, ինչպես սահմանված է Միության նպատակներով.
- դ) «անդամ պետություն» նշանակում է Եվրոպական միության ցանկացած անդամ պետություն, որի համար սույն Համաձայնագիրը պարտադիր բնույթ ունի.
- ե) «երրորդ երկրի քաղաքացի» նշանակում է ցանկացած անձ, ով ունի Հայաստանի կամ անդամ պետություններից մեկի քաղաքացիությունից բացի այլ քաղաքացիություն.
- զ) «քաղաքացիություն չունեցող անձ» նշանակում է ցանկացած անձ, ով չունի քաղաքացիություն.
- է) «բնակության թույլտվություն» նշանակում է իր տարածքում բնակվելու թույլտվություն՝ տրված Հայաստանի կամ անդամ պետություններից մեկի կողմից: Դա չի ներառում ապաստանի դիմումի կամ բնակության թույլտվության դիմումի ուսումնասիրման պարագայում իր տարածքում մնալու ժամանակավոր թույլտվությունները.
- ը) «վիզա» նշանակում է Հայաստանի կամ անդամ պետություններից մեկի կողմից տրված թույլտվություն կամ ընդունված որոշում, որը պահանջվում է իր տարածք մուտք գործելու կամ տարածքով անցնելու համար: Սա չի ներառում օդանավակայանով տարանցման վիզան.
- թ) «հարցում ներկայացրած պետություն» նշանակում է այն պետությունը (Հայաստանը կամ անդամ պետություններից մեկը), որը ներկայացնում է հետընդունման դիմում՝ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի կամ տարանցման դիմում՝ 15-րդ հոդվածի համաձայն.
- ժ) «հարցում ստացած պետություն» նշանակում է այն պետությունը (Հայաստանը կամ անդամ պետություններից մեկը), որին հասցեագրված է հետընդունման դիմումը՝ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի կամ տարանցման դիմում՝ 15-րդ հոդվածի համաձայն.
- ժա) «իրավասու մարմին» նշանակում է Հայաստանի կամ անդամ պետություններից մեկի ցանկացած ազգային մարմին, որին վերապահված է սույն Համաձայնագրի կիրարկումը՝ դրա 20(1)(ա) հոդվածին համապատասխան.
- ժբ) «տարանցում» նշանակում է երրորդ երկրի քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի անցումը հարցում ստացած պետության տարածքով՝ հարցում ներկայացրած պետությունից նշանակման երկիր ճանապարհորդելիս.
- ժգ) «սահմանային տարածք» նշանակում է գոտի, որը ձգվում է 15 կիլոմետր անդամ պետությունների և Հայաստանի նավահանգիստների՝ ներառյալ մաքսային գոտիների և միջազգային օդանավակայանների տարածքներից:



Հոդված 2 Հիմնարար սկզբունքները

Անկանոն միգրացիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի շուրջ համագործակցությունն ամրապնդելիս հարցում ստացած պետությունը և հարցում ներկայացրած պետությունը, սույն Համաձայնագիրը դրա գործողության ոլորտի ներքո գտնվող անձանց նկատմամբ կիրառելիս, ապահովում են մարդու իրավունքների և պարտավորությունների ու պարտականությունների նկատմամբ հարգանքը, որ բխում է նրանց նկատմամբ կիրառելի միջազգային փաստաթղթերից, մասնավորապես.

- 1948 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից
- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ի կոնվենցիայից
- 1966 թվականի դեկտեմբերի 16-ի՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրից
- «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին» ՄԱԿ-ի 1984 թվականի դեկտեմբերի 10-ի կոնվենցիայից
- «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի հուլիսի 28-ի կոնվենցիայից և դրա՝ 1967 թվականի հունվարի 31-ի՝ փախստականների կարգավիճակի վերաբերյալ արձանագրությունից:

Հարցում ստացած պետությունը մասնավորապես ապահովում է, վերը թվարկված միջազգային փաստաթղթերի ներքո ստանձնած իր պարտավորություններին համապատասխան, իր տարածք հետ ընդունված անձանց իրավունքների պաշտպանությունը:

Հարցում ներկայացրած պետությունը պետք է նախապատվություն տա կամավոր, այլ ոչ թե պարտադրված վերադարձին, եթե պատճառներ չկան հավատալու, որ այն կխոչընդոտի անձի վերադարձին հարցում ստացած պետություն:



ԲԱԺԻՆ I
ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3
Սեփական քաղաքացիների հետընդունումը

1. Հայաստանը հետ է ընդունում, անդամ պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական (ֆորմալ) պահանջների, բացառությամբ այն պահանջների, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով, բոլոր անձանց, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում հարցում ներկայացրած անդամ պետության տարածք մուտք գործելու, ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝ պայմանով, որ ապացուցված է կամ կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, ներկայացված առերևույթ (prima facie) փաստարկների հիման վրա, որ նրանք Հայաստանի քաղաքացիներ են:
2. Հայաստանը հետ է ընդունում նաև
 - 1-ին պարբերությունում նշված անձանց անչափահաս չամուսնացած երեխաներին՝ անկախ նրանց ծննդյան վայրից կամ քաղաքացիությունից՝ բացի այն դեպքերից, երբ նրանք ունեն հարցում ներկայացրած պետությունում բնակության անկախ իրավունք կամ ունեն այլ անդամ պետության կողմից տրված վավեր բնակության թույլտվություն և
 - 1-ին պարբերությունում նշված անձանց ամուսիններին, ովքեր ունեն այլ քաղաքացիություն կամ չունեն քաղաքացիություն՝ պայմանով, որ նրանք ունենան Հայաստանի տարածք մուտք գործելու և այնտեղ գտնվելու իրավունք կամ ստանալու մուտք գործելու և այնտեղ գտնվելու իրավունք՝ բացի այն դեպքերից, երբ նրանք ունեն հարցում ներկայացրած պետությունում բնակության անկախ իրավունք կամ ունեն այլ անդամ պետության կողմից տրված վավեր բնակության թույլտվություն:
3. Հայաստանը հետ է ընդունում նաև անձանց, ովքեր հրաժարվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից անդամ պետության տարածք մուտք գործելուց հետո՝ բացի այն դեպքերից, երբ այդ անձանց առնվազն խոստացվել է հպատակագրում (նստուրալիզացիա) անդամ պետության կողմից:
4. Այն բանից հետո, երբ Հայաստանը դրական է արձագանքում հետընդունման դիմումին, Հայաստանի իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը, անկախ հետ ընդունվող անձի ցանկությունից, միանգամից, անվճար և ոչ ավելի, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հետ ընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթը՝ 120 օր վավերականությամբ: Եթե Հայաստանը երեք օրվա ընթացքում չի տրամադրում փաստաթուղթ, ապա ենթադրվում է, որ այն ընդունում է ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը²:
5. Եթե իրավական կամ փաստացի պատճառներով համապատասխան անձը չի կարող փոխադրվել սկզբնապես տրված ճամփորդական փաստաթղթի վավերականության ընթացքում, Հայաստանի իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը երեք օրվա ընթացքում և անվճար տրամադրում է նոր ճամփորդական փաստաթուղթ միննույն վավերականության ժամանակահատվածով: Եթե Հայաստանը երեք օրվա ընթացքում չի տրամադրում նոր ճամփորդական

² ԵՄ Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 30-ի առաջարկությունում ամրագրված ձևին համապատասխան:



փաստաթուղթը, ապա ենթադրվում է, որ այն ընդունում է ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը³:

Հոդված 4

Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունումը

1. Հայաստանը հետ է ընդունում, անդամ պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների՝ բացի այն պահանջներից, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով, երրորդ երկրի բոլոր քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում հարցում ներկայացրած անդամ պետության տարածք մուտք գործելու, այնտեղ ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝ պայմանով, որ ապացուցված է, կամ կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, տրամադրված առերևույթ (*prima facie*) փաստարկների հիման վրա, որ այդպիսի անձինք
ա) հետընդունման դիմումը ներկայացնելու պահին ունեն Հայաստանի կողմից տրված վավեր վիզա կամ բնակության թույլտվություն, կամ
բ) անօրինական կերպով և ուղղակիորեն մուտք են գործել անդամ պետության տարածք Հայաստանի տարածքում գտնվելուց կամ տարածքով անցնելուց հետո:
2. 1-ին պարբերությունում նշված հետընդունման պարտավորությունը չի գործում, եթե երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը գտնվել է միայն օդային տարանցման գոտում՝ Հայաստանի միջազգային օդանավակայանով:
3. Չխախտելով 7(2) հոդվածը՝ այն բանից հետո, երբ Հայաստանը դրական է արձագանքել հետընդունման դիմումին, հարցում ներկայացրած պետությունը ԵՄ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթուղթ⁴ է տրամադրում այն անձին, ում հետընդունման մասով դրական արձագանք է տրվել:

ԲԱԺԻՆ II

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍՈՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 5

Սեփական քաղաքացիների հետընդունումը

1. Անդամ պետությունը հետ է ընդունում, Հայաստանի դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների՝ բացառությամբ այն պահանջների, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով, բոլոր անձանց, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի տարածք մուտք գործելու, այնտեղ ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝ պայմանով, որ ապացուցված է կամ կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, ներկայացված առերևույթ (*prima facie*) փաստարկների հիման վրա, որ նրանք այդ անդամ պետության քաղաքացիներ են:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:



2. Անդամ պետությունը հետ է ընդունում նաև
 - 1-ին պարբերությունում նշված անձանց անչափահաս չամուսնացած երեխաներին՝ անկախ նրանց ծննդյան վայրից կամ քաղաքացիությունից՝ բացի այն դեպքերից, երբ նրանք ունեն Հայաստանում բնակության անկախ իրավունք և
 - 1-ին պարբերությունում նշված անձանց ամուսիններին, ովքեր ունեն այլ քաղաքացիություն կամ չունեն քաղաքացիություն՝ պայմանով, որ նրանք ունենան հարցում ստացած անդամ պետության տարածք մուտք գործելու և այնտեղ գտնվելու իրավունք կամ ստանան մուտք գործելու և այնտեղ գտնվելու իրավունք՝ բացի այն դեպքերից, երբ նրանք ունեն Հայաստանում բնակության անկախ իրավունք:
3. Անդամ պետությունը հետ է ընդունում նաև անձանց, ովքեր հրաժարվել են անդամ պետության քաղաքացիությունից Հայաստանի տարածք մուտք գործելուց հետո՝ բացի այն դեպքերից, երբ այդ անձանց առնվազն խոստացվել է հպատակագրում (նատուրալիզացիա) Հայաստանի կողմից:
4. Այն բանից հետո, երբ հարցում ստացած անդամ պետությունը դրական է արձագանքում հետընդունման դիմումին, այդ անդամ պետության իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը, անկախ հետ ընդունվող անձի ցանկությունից, միանգամից, անվճար և ոչ ավելի, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հետ ընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթը՝ 120 օր վավերականությամբ:
5. Եթե իրավական կամ փաստացի պատճառներով համապատասխան անձը չի կարող փոխադրվել սկզբնապես տրված ճամփորդական փաստաթղթի վավերականության ընթացքում, անդամ պետության իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը երեք օրվա ընթացքում և անվճար տրամադրում է նոր ճամփորդական փաստաթուղթ միևնույն վավերականության ժամանակահատվածով:

Հոդված 6

Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունումը

1. Անդամ պետությունը հետ է ընդունում, Հայաստանի դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների՝ բացի այն պահանջներից, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով, երրորդ երկրի բոլոր քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի տարածք մուտք գործելու, ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝ պայմանով, որ ապացուցված է, կամ կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, տրամադրված առերևույթ (prima facie) փաստարկների հիման վրա, որ այդպիսի անձինք
 - ա) հետընդունման դիմումը ներկայացնելու պահին ունեն հարցում ստացած անդամ պետության կողմից տրված վավեր վիզա կամ բնակության թույլտվություն, կամ
 - բ) անօրինական կերպով և ուղղակիորեն մուտք են գործել Հայաստանի տարածք հարցում ստացած անդամ պետության տարածքում գտնվելուց կամ տարածքով անցնելուց հետո:
2. 1-ին պարբերությունում նշված հետընդունման պարտավորությունը չի գործում, եթե երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը գտնվել է միայն



օդային տարանցման գոտում՝ հարցում ստացած անդամ պետության միջազգային օդանավակայանով:

3. 1-ին պարբերությունում նշված հետընդունման պարտավորությունը այն անդամ պետությանն է վերաբերում, որը տրամադրել է վիզա կամ բնակության թույլտվություն: Եթե երկու կամ ավելի անդամ պետություններ են տրամադրել վիզա կամ բնակության թույլտվություն, ապա 1-ին պարբերությունում նշված հետընդունման պարտավորությունը վերաբերում է այն անդամ պետությանը, որը տրամադրել է ավելի երկար վավերականության ժամկետով փաստաթուղթ, կամ եթե այդ փաստաթղթերից մեկի կամ մի քանիսի վավերականության ժամկետը ավարտվել է՝ այն փաստաթուղթը, որը դեռ վավերական է: Եթե բոլոր փաստաթղթերի վավերականության ժամկետներն արդեն ավարտվել են, 1-ին պարբերությունում նշված հետընդունման պարտավորությունը վերաբերում է այն անդամ պետությանը, որի տրամադրած փաստաթղթի վավերականության ժամկետն ամենաուշն է լրացել: Եթե ոչ մի նման փաստաթուղթ չի կարող ներկայացվել, 1-ին պարբերությունում նշված հետընդունման պարտավորությունը վերաբերում է վերջին ելքի անդամ պետությանը:
4. Չխախտելով 7(2) հոդվածը՝ այն բանից հետո, երբ անդամ պետությունը դրական է արձագանքել հետընդունման դիմումին, Հայաստանը տրամադրում է այն անձի վերադարձի համար անհրաժեշտ փաստաթղթեր, ում հետընդունման մասով դրական արձագանք է տրվել:

ԲԱԺԻՆ III ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ

Հոդված 7 Սկզբունքները

1. Պահպանելով 2-րդ պարբերության դրույթները՝ հետ ընդունվող անձի ցանկացած փոխանցման համար, որն իրականացվում է 3-6-րդ հոդվածներում նշված պարտավորություններից որևէ մեկի հիման վրա, պահանջվում է հետընդունման դիմումի ներկայացում հարցում ստացած պետության իրավասու մարմնին:
2. Եթե հետ ընդունվող անձն ունի վավեր ճամփորդական փաստաթուղթ կամ անձը հաստատող փաստաթուղթ, իսկ երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ հարցում ստացած պետության վավեր վիզա կամ բնակության թույլտվություն, ապա տվյալ անձի փոխադրումը կարելի է իրականացնել առանց հարցում ներկայացրած պետության կողմից հարցում ստացած պետության իրավասու մարմնին հասցեագրված՝ 12(1) հոդվածում նշված հետընդունման դիմում կամ գրավոր ծանուցում ներկայացնելու պահանջի:
3. Չխախտելով 2-րդ պարբերության դրույթները՝ եթե անձը արգելանքի է վերցվել հարցում ներկայացրած պետության սահմանային տարածքում՝ ներառյալ օդանավակայաններում, սահմանն անօրինական հատելուց հետո՝ ուղևորվելով անմիջապես հարցում ստացած պետության տարածքից, ապա հարցում ներկայացրած պետությունը հետընդունման դիմումը կարող է ներկայացնել տվյալ անձին արգելանքի վերցնելուց հետո երկու օրվա ընթացքում (արագացված ընթացակարգ):



Հոդված 8 Հետընդունման դիմումը

1. Հնարավորության սահմաններում, հետընդունման դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝
 - ա) հետ ընդունվող անձի տվյալները (անունները, ազգանունները, ծննդյան տարեթիվը, եթե հնարավոր է՝ ծննդյան վայրը և բնակության վերջին վայրը) և, եթե կիրառելի է, անչափահաս չամուսնացած երեխաների և (կամ) ամուսինների տվյալները,
 - բ) սեփական քաղաքացիների պարագայում՝ կնշվեն այն միջոցները, որոնց միջոցով քաղաքացիության մասով ապացույց կամ առերևույթ փաստարկներ կներկայացվեն, ինչպես սահմանված է համապատասխանաբար 1-ին և 2-րդ հավելվածներով,
 - գ) երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց պարագայում՝ կնշվեն այն միջոցները, որոնց միջոցով երրորդ երկրի քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանների մասով ապացույց կամ առերևույթ փաստարկներ կներկայացվեն, ինչպես սահմանված է համապատասխանաբար 3-րդ և 4-րդ հավելվածներով,
 - դ) հետ ընդունվող անձի լուսանկարը:
2. Հնարավորության սահմաններում, հետընդունման դիմումը պարունակում է նաև հետևյալ տեղեկությունները՝
 - ա) հայտարարություն այն մասին, որ հետ ընդունվող անձն ունի օգնության կամ խնամքի կարիք՝ պայմանով, որ այդ անձը հստակ կերպով տվել է հայտարարության վերաբերյալ իր համաձայնությունը,
 - բ) տվյալ անձի առողջությանն առնչվող պաշտպանության, անվտանգության միջոց կամ այլ տեղեկատվություն, որ կարող է անհրաժեշտ լինել անհատական փոխադրման պարագայում:
3. Հետընդունման դիմումի համար կիրառելի ընդհանուր ձևը ներկայացված է սույն Համաձայնագրին կից՝ որպես հավելված 5:
4. Հետընդունման դիմումը կարող է ներկայացվել կապի ցանկացած միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով:

Հոդված 9 Քաղաքացիության մասով ապացուցման միջոցները

1. 3(1) և 5(1) հոդվածների համաձայն քաղաքացիության մասով ապացույցը կարող է ներկայացվել մասնավորապես սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում թվարկված փաստաթղթերի միջոցով՝ ներառյալ այնպիսի փաստաթղթերով, որոնց վավերականության ժամկետն ավարտվել է մինչև վեց ամիս: Եթե ներկայացվում են այդպիսի փաստաթղթեր, ապա անդամ պետությունները և Հայաստանը փոխադարձաբար ճանաչում են քաղաքացիությունը՝ առանց հետագա քննության պահանջի: Քաղաքացիության մասով ապացույցը չի կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով:
2. 3(1) և 5(1) հոդվածների համաձայն քաղաքացիության մասով առերևույթ փաստարկները կարող են տրամադրվել մասնավորապես սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածում թվարկված փաստաթղթերի միջոցով, անգամ եթե դրանց վավերականության



Ժամկետն ավարտվել է: Եթե ներկայացվում են այդպիսի փաստաթղթեր, ապա անհամ պետությունները և Հայաստանը քաղաքացիությունը փոխադարձաբար հաստատված են համարում, եթե հակառակը չեն կարող ապացուցել: Քաղաքացիության մասով առերևույթ փաստարկները չեն կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով:

3. Եթե 1-ին և 2-րդ հավելվածում թվարկված փաստաթղթերից ոչ մեկը չի կարող ներկայացվել, ապա հարցում ստացած պետության իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները, հարցում ներկայացրած պետության դիմումի հիման վրա, որը ներառվում է հետընդունման դիմումի մեջ, հարցազրույց են անցկացնում այն անձի հետ, ում հետընդունումը պետք է իրականացվի առանց անհիմն ձգձգումների՝ 11(2) հոդվածին համապատասխան հետընդունման դիմումը ստանալուց հետո ամենաուշը հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ նրա քաղաքացիությունը հաստատելու համար: Նման հարցազրույցների կազմակերպման կարգը կարող է սահմանվել սույն Համաձայնագրի 20-րդ հոդվածում նշված կիրառական արձանագրություններով:

Հոդված 10

Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասով ապացուցման միջոցները

1. 4(1) և 6(1) հոդվածներով սահմանված երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանների վերաբերյալ ապացույցները մասնավորապես ներկայացվում են սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածում թվարկված ապացուցման միջոցներով. այն չի կարող կատարվել կեղծ փաստաթղթերի միջոցով: Յուրաքանչյուր նման ապացույց փոխադարձաբար ճանաչվում է անհամ պետությունների և Հայաստանի կողմից՝ առանց հետագա քննության պահանջի:
2. 4(1) և 6(1) հոդվածներով սահմանված երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանների վերաբերյալ առերևույթ փաստարկները մասնավորապես ներկայացվում են սույն Համաձայնագրի 4-րդ հավելվածում թվարկված ապացուցման միջոցներով. այն չի կարող կատարվել կեղծ փաստաթղթերի միջոցով: Եթե ներկայացված են այդպիսի առերևույթ փաստարկներ, ապա անհամ պետությունները և Հայաստանը համարում են պայմանները հաստատված, եթե նրանք հակառակը չեն ապացուցել:
3. Մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինական բնույթը հաստատվում է համապատասխան անձի ճամփորդական փաստաթղթերի միջոցով, որում անհրաժեշտ վիզան կամ հարցում ներկայացրած պետության տարածքում բնակության անհրաժեշտ թույլտվությունը բացակայում է: Հարցում ներկայացրած պետության կողմից հայտարարությունն այն մասին, որ պարզվել է, որ համապատասխան անձը չունի անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթեր, վիզա կամ բնակության թույլտվություն, նմանապես համարվում է առերևույթ փաստարկ մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության անօրինականության փաստի վերաբերյալ:



Հոդված 11 Ժամկետները

1. Հետընդունման դիմումը ներկայացվում է հարցում ստացած պետության իրավասու մարմնին առավելագույնը ինն ամսվա ընթացքում այն պահից հետո, երբ հարցում ներկայացրած պետության իրավասու մարմինը տեղեկանում է, որ երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի բավարարում կամ այլևս չի բավարարում մուտքի, ներկա գտնվելու կամ բնակության համար անհրաժեշտ պայմանները: Եթե կան իրավական կամ փաստացի խոչընդոտներ դիմումը սահմանված ժամկետում ներկայացնելու համար, ապա այդ ժամկետը, հարցում ներկայացրած պետության դիմումի հիման վրա, կարող է երկարաձգվել, բայց մինչև այն պահը, երբ խոչընդոտները դադարեն գոյություն ունենալ:
2. Հետընդունման դիմումին անհրաժեշտ է պատասխանել գրավոր.
 - ա) երկու աշխատանքային օրվա ընթացքում, եթե դիմումն արագացված ընթացակարգով է տրվել (հոդված 7(3)) կամ
 - բ) տասներկու օրացուցային օրվա ընթացքում՝ մյուս բոլոր դեպքերում:
Ժամկետն սկսում է հաշվարկվել հետընդունման դիմումի ստացման օրվանից: Եթե այդ ժամանակահատվածում պատասխան չի ստացվում, ապա համարվում է, որ փոխադրման շուրջ համաձայնություն է ձեռք բերվել:
Հետընդունման դիմումի պատասխանը կարող է ներկայացվել հաղորդակցության ցանկացած միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային:
3. Հետընդունումը մերժելու պատճառները ներկայացվում են գրավոր:
4. Համաձայնությունը տալուց հետո կամ, անհրաժեշտության դեպքում, 2-րդ պարբերությունով սահմանված ժամկետների ավարտից հետո համապատասխան անձը փոխադրվում է երեք ամսվա ընթացքում: Հարցում ներկայացրած պետության դիմումի հիման վրա՝ ժամկետները կարող են երկարաձգվել՝ իրավական կամ գործնական խոչընդոտները վերացնելու ժամանակահատվածով:

Հոդված 12 Փոխադրման ձևերը և տրանսպորտի միջոցները

1. Չխախտելով 7(2) հոդվածի դրույթները՝ մինչև անձի վերադարձը, հարցում ներկայացրած պետության իրավասու մարմինները երկու աշխատանքային օրվա ընթացքում հարցում ստացած պետության իրավասու մարմիններին նախապես գրավոր ծանուցում են փոխադրման ժամկետների, մուտքի անցակետի, հնարավոր ուղեկցողների և փոխադրմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:
2. Տեղափոխումը կարող է իրականացվել ցանկացած միջոցով, այդ թվում օդային ուղիներով: Օդային ուղիների միջոցով վերադարձը չի սահմանափակվում Հայաստանի կամ անդամ պետության ազգային փոխադրողների օգտագործմամբ և կարող է իրականացվել սահմանված կամ չարտերային չվերթով: Եթե վերադարձողն ունի ուղեկցող, ապա ուղեկցումը չի կարող սահմանափակվել հարցում ներկայացրած պետության լիազորված անձանցով՝ պայմանով, որ նրանք Հայաստանի կամ որևէ անդամ պետության լիազորված անձինք են:
3. Եթե փոխանցումն իրականացվում է օդային ուղիներով, ապա ուղեկցողները ազատվում են վիզա ստանալու պահանջից:



Հոդված 13
Միալմամբ իրականացված հետընդունումը

Հարցում ներկայացրած պետությունը հետ է ընդունում հարցում ստացած պետության կողմից հետ ընդունված ցանկացած անձի, եթե տվյալ անձի փոխադրումից հետո վեց ամսվա ընթացքում հաստատվում է, որ սույն Համաձայնագրի 3-6-րդ հոդվածներով սահմանված պահանջները չեն կատարվել:

Նման դեպքերում, սույն Համաձայնագրի ընթացակարգային դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով, և տրամադրվում է հետ ընդունվող անձի իրական ինքնությանը և քաղաքացիությանը վերաբերող հասանելի ողջ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ IV
ՏԱՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 14
Սկզբունքները

1. Անդամ պետությունները և Հայաստանը պետք է սահմանափակեն երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը՝ հասցնելով այն դեպքերին, երբ այդ անձինք չեն կարող ուղղակիորեն վերադարձվել նպատակակետ հանդիսացող պետություն:
2. Հայաստանը թույլատրում է երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը, եթե անդամ պետությունը նման հարցում է ներկայացնում, և անդամ պետությունը թույլատրում է երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը, եթե Հայաստանն է ներկայացնում նման հարցում, եթե հնարավոր այլ տարանցիկ պետությունում հետագա ճամփորդությունը և նպատակակետ հանդիսացող պետության կողմից հետընդունումը հաստատվել է:
3. Տարանցումը Հայաստանի կամ անդամ պետության կողմից կարող է մերժվել՝
 - ա) եթե լուրջ վտանգ կա, որ երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը նպատակակետ հանդիսացող պետության կամ տարանցման այլ պետության սահմաններում կենթարկվի խոշտանգման կամ այլ անմարդկային, կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի կամ մահապատժի կամ կհետապնդվի ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների հիմքով,
 - բ) եթե երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը հարցում ստացած պետության կամ տարանցիկ որևէ այլ պետության սահմաններում կարող է ենթարկվել քրեական պատժամիջոցների, կամ
 - գ) հանրային առողջության, ազգային անվտանգության, հանրային կարգի հիմքերով կամ հարցում ստացած պետության ազգային այլ շահերից ելնելով:
4. Հայաստանը կամ անդամ պետությունը կարող է չեղյալ հայտարարել տրված ցանկացած թույլտվություն, եթե առաջանան կամ պարզ դառնան սույն Համաձայնագրի 3-րդ պարբերությունում նշված հանգամանքները, որոնք խոչընդոտում են տարանցման գործողության իրականացմանը, կամ եթե հետագա ճամփորդությունը



հնարավոր տարանցման պետություններում կամ հետ ընդունումը նպատակակետ հանդիսացող պետության կողմից այլևս ապահովված չէ: Այդ դեպքում, հարցում ներկայացրած պետությունը հետ է ընդունում երրորդ պետության քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին՝ ըստ անհրաժեշտության և առանց ուշացման:

Հոդված 15 Տարանցման ընթացակարգը

1. Տարանցման գործողությունների վերաբերյալ դիմումը հարցում ստացած պետության իրավասու մարմնին պետք է ներկայացվի գրավոր և պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.
ա) տարանցման տեսակը (օդային, ծովային կամ ցամաքային), տարանցման այլ հնարավոր պետություններ և նախատեսված վերջնական նպատակակետ հանդիսացող պետություն,
բ) համապատասխան անձի տվյալները (անունը, ազգանունը, օրիորդական ազգանունը, այլ անուններ, որով հայտնի է, կամ կեղծանունները, ծննդյան տարեթիվը, սեռը, և, ըստ անհրաժեշտության, ծննդյան վայրը, քաղաքացիությունը, լեզուն, ճամփորդական փաստաթղթերի տեսակն ու համարը,
գ) նախատեսված մուտքի անցակետը, տարանցման ժամկետը և ուղեկցման հավանականությունը,
դ) հայտարարություն այն մասին, որ հարցում ներկայացրած պետության կարծիքով 14(2) հոդվածում նշված պայմանները կատարվել են, և որ հայտնի չէ 14(3) հոդվածի համաձայն մերժման համար որևէ պատճառ:
Տարանցման դիմումի ընդհանուր ձևը ներկայացված է սույն Համաձայնագրին կից՝ որպես հավելված 6:
Տարանցման դիմումը կարող է ներկայացվել կապի ցանկացած միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային:
2. Հարցում ստացած պետությունը, դիմումն ստանալուց հետո երեք օրացուցային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնում է հետընդունման համար հարցում ներկայացրած պետությանը՝ հաստատելով հետընդունման անցակետը և ժամանակը, կամ էլ տեղեկացնում է հետընդունման մերժման և մերժման պատճառների մասին: Երեք աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չստանալու դեպքում, տարանցումը համարվում է համաձայնեցված:
Տարանցման դիմումի պատասխանը կարող է ներկայացվել կապի ցանկացած միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային:
3. Եթե տարանցման գործողությունն իրականացվում է օդային ուղիներով, ապա հետ ընդունվող անձը և նրա հնարավոր ուղեկցողն ազատվում են օդանավակայանով տարանցման վիզա ձեռք բերելու պահանջից:
4. Հարցում ստացած պետության իրավասու մարմինները, փոխադարձ խորհրդակցությունների համաձայն, աջակցում են տարանցման գործողությունների իրականացմանը՝ մասնավորապես տվյալ անձանց վերափոխողության, ինչպես նաև այդ նպատակով անհրաժեշտ հարմարությունների ապահովման միջոցով:
5. Անձանց տարանցումն իրականացվում է տարանցման խնդրանքին համաձայնություն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:



ԲԱԺԻՆ V ԾԱԽՍԵՐԸ

Հոդված 16 Տրանսպորտային և տարանցման ծախսերը

Չսահմանափակելով իրավասու մարմինների՝ հետ ընդունվող անձի կամ երրորդ կողմի հետընդունման հետ կապված ծախսերի փոխհատուցման իրավասությունը՝ տրանսպորտային բոլոր ծախսերը, կապված հետընդունման և տարանցման գործողությունների հետ՝ համաձայն սույն Համաձայնագրի, մինչև նպատակակետ հանդիսացող պետության սահման կատարում է հարցում ներկայացրած պետությունը:

ԲԱԺԻՆ VI ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հոդված 17 Տվյալների պաշտպանությունը

Անձնական տվյալները հաղորդվում են միայն այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի կամ անդամ պետության իրավասու մարմինների կողմից, ըստ դեպքի, սույն Համաձայնագրի կիրարկման համար: Անձնական տվյալների մշակումը և դրանց հետ աշխատանքը, կոնկրետ դեպքում, կարգավորվում է Հայաստանի ներպետական օրենքներով, իսկ այն դեպքերում, երբ վերահսկողը անդամ պետության իրավասու մարմինն է՝ 95/46/ԵՀ հրահանգով և այդ հրահանգի համաձայն ընդունված՝ անդամ պետության օրենսդրությամբ:

Բացի դրանից՝ կիրառվում են նաև հետևյալ սկզբունքները՝

- ա) անձնական տվյալները պետք է մշակվեն անաչառ և օրինական.
- բ) անձնական տվյալները պետք է հավաքվեն սույն Համաձայնագրի սահմանված, հստակ և օրինական կիրարկման նպատակով, և դրանք հետագայում չպետք է մշակվեն դրա նպատակին անհամատեղելի եղանակով ոչ փոխանցող մարմնի, ոչ էլ ստացող մարմնի կողմից,
- գ) անձնական տվյալները պետք է իրենց բովանդակությամբ և ճշտության ու մանրամասնության աստիճանով համապատասխանեն այն նպատակին, որի համար դրանք հավաքվում և (կամ) հետագայում մշակվում են. մասնավորապես, հաղորդվող անձնական տվյալները կարող են վերաբերել հետևյալին.
 - փոխադրվող անձի մասին տվյալներ (անունները, ազգանունները, նախկին անունները, որևէ այլ անուն, որով վերջինս հայտնի է, կամ կեղծանունները, սեռը, ընտանեկան կարգավիճակը, ծննդյան տարեթիվը և վայրը, ներկայիս, ինչպես նաև նախկինում ունեցած քաղաքացիությունը),
 - անձնագիր, նույնականացման քարտ, վարորդական իրավունք (համարը, վավերականության ժամկետը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրվել և տրման վայրը),



- տարանցման կանգառներ և երթուղին,
 - այլ տեղեկություն, որն անհրաժեշտ է փոխադրվող անձի նույնականացման կամ սույն Համաձայնագրի համաձայն հետընդունման պահանջները ստուգելու համար.
- դ) անձնական տվյալները պետք է լինեն ճշգրիտ և, անհրաժեշտության դեպքում, թարմ.
- ե) անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպիսի եղանակով, որ թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտներին՝ ոչ ավելի ժամկետով, որն անհրաժեշտ է դրանք հավաքելու կամ հետագայում մշակելու նպատակներով.
- զ) թե փոխանցող, և թե ստացող իրավասու մարմինները ձեռնարկում են ցանկացած ողջամիտ քայլ՝ անձնական տվյալները ճշտելու, ջնջելու կամ արգելափակելու համար, եթե մշակումը չի համապատասխանում այս հոդվածի դրույթներին՝ մասնավորապես, եթե այդ տվյալները բովանդակությամբ և ճշտության ու մանրամասնության աստիճանով չեն համապատասխանում մշակման նպատակին: Դա ներառում է ճշտելու, ջնջելու կամ արգելափակելու վերաբերյալ մյուս Կողմին ուղղված ցանկացած ծանուցում.
- է) դիմումի հիման վրա՝ ստացող մարմինը փոխանցող մարմնին տեղեկացնում է հաղորդվող տվյալների օգտագործման, ինչպես նաև դրանցից ստացված արդյունքների մասին.
- ը) անձնական տվյալները կարող են փոխանցվել միայն իրավասու մարմիններին: Հետագայում այլ մարմիններին այդ տվյալների տրամադրման համար պահանջվում է փոխանցող կողմի նախնական համաձայնությունը.
- թ) փոխանցող և ստացող մարմինները պարտավոր են ներկայացնել գրավոր արձանագրություն անձնական տվյալների փոխանցման և ստացման մասին:

Հոդված 18

Առնչությունը այլ միջազգային պարտավորություններին

1. Սույն Համաձայնագիրը չի սահմանափակում Միության, անդամ պետությունների և Հայաստանի այն իրավունքները, պարտավորությունները և պարտականությունները, որոնք բխում են միջազգային իրավունքից, այդ թվում՝ այն միջազգային կոնվենցիաներից, որոնց նրանք Կողմ են հանդիսանում, և, մասնավորապես, 2-րդ հոդվածում թվարկված միջազգային փաստաթղթերից, ինչպես նաև
 - միջազգային կոնվենցիաներից, որոնք սահմանում են այն պետությունը, որը պատասխանատու է ապաստանի համար ներկայացված դիմումների քննության համար,
 - հանձնման (էքստրադիցիայի) և տարանցման մասին միջազգային կոնվենցիաներից,
 - օտարերկրյա քաղաքացիների հետընդունման մասին միջազգային բազմակողմ կոնվենցիաներից և համաձայնագրերից:
2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում անձի վերադարձը՝ պաշտոնական և ոչ պաշտոնական այլ պայմանավորվածությունների շրջանակներում:



ԲԱԺԻՆ VII ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 19 Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեն

1. Պայմանավորվող կողմերը միմյանց տրամադրում են փոխադարձ օգնություն սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման հարցում: Այդ նպատակով նրանք ստեղծում են հետընդունման հարցերով համատեղ կոմիտե (այսուհետ՝ կոմիտե), որը, մասնավորապես ունենալու է հետևյալ խնդիրները.
 - ա) դիտանցել և փոխանակել սույն Համաձայնագրի կիրառմանն առնչվող տեղեկատվություն՝ բացառությամբ անձնական տվյալների,
 - բ) լուծել սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանումից կամ կիրառումից բխող խնդիրներ,
 - գ) որոշում կայացնել այն կիրարկման մեխանիզմների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրի միօրինակ կիրառման համար,
 - դ) իրականացնել տեղեկատվության կանոնավոր փոխանակում կիրարկող արձանագրությունների վերաբերյալ՝ կազմված առանձին անդամ պետությունների և Հայաստանի կողմից սույն Համաձայնագրի 20-րդ հոդվածի համաձայն,
 - ե) առաջարկություններ ներկայացնել սույն Համաձայնագրում և դրա հավելվածներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
2. Կոմիտեի որոշումները պարտադիր են Պայմանավորվող կողմերի համար:
3. Կոմիտեն կազմված է Միության և Հայաստանի ներկայացուցիչներից:
4. Կոմիտեի նիստերը տեղի են ունենում ըստ անհրաժեշտության՝ Պայմանավորվող կողմերից որևէ մեկի դիմումով:
5. Կոմիտեն ընդունում է իր աշխատակարգը:

Հոդված 20 Կիրարկող արձանագրությունները

1. Չխախտելով սույն Համաձայնագրի ուղղակի կիրառելիությունը՝ անդամ պետության կամ Հայաստանի դիմումի հիման վրա՝ Հայաստանը և անդամ պետությունը կազմում են կիրարկող արձանագրություն, որը նաև կարգավորում է, ի թիվս այլ հարցերի, հետևյալը.
 - ա) իրավասու մարմինների նշանակումը, սահմանային անցակետերին և կոնտակտային անձանց վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը,
 - բ) ուղեկցությամբ վերադարձի պայմանները՝ ներառյալ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ուղեկցությամբ տարանցումը,
 - գ) միջոցները և փաստաթղթերը՝ ի հավելումն սույն Համաձայնագրի 1-4-րդ հավելվածներում թվարկվածների,
 - դ) հետընդունման ձևերը՝ արագացված ընթացակարգերի ներքո,
 - ե) հարցազրույցների ընթացակարգը:
2. 1-ին պարբերությունում նշված կիրարկող արձանագրություններն ուժի մեջ են մտնում միայն 19-րդ հոդվածում նշված հետընդունման հարցերով համատեղ կոմիտեին ծանուցելուց հետո:



3. Հայաստանը համաձայնում է անդամ պետության հետ կազմված կիրարկող արձանագրության ցանկացած դրույթ կիրառել նաև այլ անդամ պետության հետ իր հարաբերություններում՝ վերջինիս դիմումի հիման վրա: Անդամ պետությունները համաձայնում են կիրառել անդամ պետություններից որևէ մեկի կողմից կազմված կիրարկող արձանագրության ցանկացած դրույթ նաև Հայաստանի հետ իրենց հարաբերություններում՝ վերջինիս դիմումի հիման վրա, եթե այլ անդամ պետությունների նկատմամբ այդպիսի կիրառումը գործնականում հնարավոր է:

Հոդված 21

Հետընդունման վերաբերյալ անդամ պետությունների երկկողմ համաձայնագրերին կամ պայմանավորվածություններին առնչությունը

Սույն Համաձայնագրի դրույթները գերակայում են ցանկացած այլ՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման վերաբերյալ երկկողմ համաձայնագրի կամ պայմանավորվածության դրույթների նկատմամբ, որոնք 20-րդ հոդվածի համաձայն կնքվել կամ կարող են կնքվել առանձին անդամ պետությունների և Հայաստանի միջև՝ այնքանով, որքանով վերջինիս դրույթներն անհամատեղելի են սույն Համաձայնագրի դրույթների հետ:

ԲԱԺԻՆ VIII ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 22

Տարածքային կիրառելիությունը

1. Պահպանելով 2-րդ պարբերության դրույթները՝ սույն Համաձայնագիրը կիրառվում է այն տարածքի նկատմամբ, որի նկատմամբ կիրառելի են «Եվրոպական միության մասին» պայմանագիրը և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը, ինչպես նաև կիրառվում է Հայաստանի տարածքի նկատմամբ:
2. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության և Իռլանդիայի տարածքի նկատմամբ միայն Եվրոպական միության կողմից՝ Հայաստանին հասցեագրված ծանուցմամբ: Համաձայնագիրը չի կիրառվում Դանիայի Թագավորության տարածքի նկատմամբ:

Հոդված 23

Ուժի մեջ մտնելը, տևողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրը վավերացվում կամ հաստատվում է Պայմանավորվող կողմերի կողմից՝ իրենց համապատասխան ընթացակարգերի համաձայն:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկրորդ ամսվա առաջին օրը այն ամսաթվից հետո, երբ վերջին Պայմանավորվող կողմը ծանուցել է մյուս Կողմին, որ պարբերություն 1-ում նշված ընթացակարգերը կատարվել են:
3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության և Իռլանդիայի նկատմամբ 22(2) հոդվածում նշված ծանուցման ամսաթվին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:



4. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:
5. Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխությունները կազմվում են առանձին արձանագրությունների տեսքով, որոնք կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրով սահմանված կարգով:
6. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է, մյուս Պայմանավորվող կողմին պաշտոնապես ծանուցելով և 19-րդ հոդվածում նշված կոմիտեի նախնական խորհրդակցությունից հետո, ամբողջությամբ կամ մասնակիորեն ժամանակավորապես կասեցնել սույն Համաձայնագրի կիրարկումը: Կասեցումն ուժի մեջ է մտնում այդպիսի ծանուցման ամսաթվից հետո երկրորդ օրը:
7. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Պայմանավորվող կողմին պաշտոնապես ծանուցելով այդ մասին: Սույն Համաձայնագիրը դադարում է կիրառվել նման ծանուցումից վեց ամիս հետո:

Հոդված 24

Հավելվածները

1-6-րդ հավելվածները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Կատարված է քաղաք Բրյուսելում, 2013 թվականի ապրիլի 19-ին բուլղարերեն, չեխերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, էստոներեն, ֆինլանդերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իտալերեն, լատվիերեն, լիտվերեն, մալթերեն, լեհերեն, պորտուգալերեն, ռումիներեն, սլովակերեն, սլովեններեն, իսպաներեն, շվեդերեն և հայերեն կրկնօրինակով, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Եվրոպական միության կողմից՝

Հայաստանի Հանրապետության կողմից՝



Հավելված 1

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԱՊԱՑՈՒՅՑ

(ՀՈԴՎԱԾՆԵՐ 3(1), 5(1) ԵՎ 9(1))

- Ցանկացած տեսակի անձնագիր (ազգային անձնագրեր, դիվանագիտական անձնագրեր, ծառայողական անձնագրեր, հավաքական անձնագրեր, փոխարինող անձնագրեր՝ ներառյալ երեխաների անձնագրերը),
- ցանկացած տեսակի նույնականացման քարտ (ներառյալ ժամանակավոր և պայմանական),
- քաղաքացիության հավաստագրեր և այլ պաշտոնական փաստաթղթեր, որոնք նշում կամ հստակ մատնանշում են քաղաքացիությունը:

Հավելված 2

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՓԱՍՏԱՐԿ

(ՀՈԴՎԱԾՆԵՐ 3(1), 5(1) ԵՎ 9(2))

- 1-ին հավելվածում թվարկված փաստաթղթերը, որոնց վավերականության ժամկետը ավարտվել է վեց ամսից ավելի,
- սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում թվարկված փաստաթղթերից որևէ մեկի պատճենները,
- վարորդական իրավունքի վկայականներ կամ դրանց պատճեններ,
- ծննդյան վկայականներ կամ դրանց պատճեններ,
- կազմակերպության նույնականացման քարտեր կամ դրանց պատճենները,
- վկաների հայտարարություններ,
- համապատասխան անձի հայտարարություններ, լեզուն, որով նա խոսում է, ինչպես նաև պաշտոնական քննության արդյունքներ,
- ցանկացած այլ փաստաթուղթ, որը կարող է օգնել հաստատել տվյալ անձի քաղաքացիությունը,
- մատնահետքեր,
- հարցում ստացած պետության կողմից տրված անցագիր (laissez-passer),
- ծառայողական գրքույկ և նույնականացման ռազմական քարտեր,
- նավագնացության հաշվառման քարտեր և հրամանատարական ծառայության քարտեր,
- Վիզայի տեղեկատվական համակարգում⁵ կատարված որոնման արդյունքում ինքնության հաստատում,
- Վիզայի տեղեկատվական համակարգ չկիրառող անդամ պետությունների դեպքում՝ այդ անդամ պետությունների վիզայի համար դիմումների գրառումների միջոցով ինքնության դրական հաստատում:

⁵ «Վիզայի տեղեկատվական համակարգի (ՎՏՀ) և անդամ պետությունների միջև կարճաժամկետ վիզաների վերաբերյալ տվյալների փոխանակման մասին» 2008 թվականի հուլիսի 9-ի Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 767/2008 (ԵՀ) կանոնակարգ, ՊՏ L 218, 13.08.2008, էջ 60.



Հավելված 3

ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՅՈՒՅՑ ՀԱՄԱՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

(ՀՈԴՎԱԾՆԵՐ 4(1), 6(1) ԵՎ 10(1))

- Հարցում ստացած պետության կողմից տրված վիզա և (կամ) բնակության թույլտվություն,
- համապատասխան անձի ճամփորդական փաստաթղթում մուտքի (ելքի) կնիքներ կամ նմանատիպ հաստատում կամ մուտքի (ելքի) այլ ապացույց (օրինակ՝ լուսանկար):

Հավելված 4

ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՓԱՍՏԱՐԿ ՀԱՄԱՐՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

(ՀՈԴՎԱԾՆԵՐ 4(1), 6(1) ԵՎ 10(2))

- Հարցում ներկայացրած պետության համապատասխան մարմինների կողմից տրված նկարագրություն վայրի և հանգամանքների վերաբերյալ, որոնց ներքո համապատասխան անձը կանգնեցվել է այդ պետության տարածք մուտք գործելուց հետո,
- միջազգային կազմակերպության (օրինակ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զբաղվող հանձնակատար) կողմից տրված տեղեկատվություն անձի ինքնության և (կամ) գտնվելու վերաբերյալ,
- ընտանիքի անդամների, ճամփորդական ընկերությունների և այլոց կողմից տեղեկատվության հաստատում (զեկուցում),
- համապատասխան անձի հայտարարություն,
- մատնահետքեր,
- ցանկացած տեսակի փաստաթղթեր, հավաստագրեր և հաշիվներ (օրինակ՝ հյուրանոցի հաշիվներ, բժշկի (ատամնաբույժի) մոտ հաճախման քարտեր, պետական (մասնավոր) հաստատություններ մուտք գործելու քարտեր, մեքենայի վարձույթի պայմանագրեր, վարկային քարտերի անդորրագրեր և այլն), որոնք հստակ ցույց են տալիս, որ համապատասխան անձը գտնվել է հարցում ստացած պետության տարածքում,
- օդային, երկաթուղային, ավտոբուսի կամ նավի անվանական տոմսեր և (կամ) ուղևորների ցուցակներ, որոնք ցույց են տալիս համապատասխան անձի ներկայությունը և երթուղին հարցում ստացած պետության տարածքում,
- տեղեկատվություն, որը ցույց կտար, որ համապատասխան անձը օգտվել է սուրհանդակի կամ ճամփորդական գործակալության ծառայություններից,
- պաշտոնական հայտարարություններ՝ արված մասնավորապես սահմանապահ մարմինների աշխատակիցների և այլ վկաների կողմից, որոնք կարող են հաստատել համապատասխան անձի կողմից սահմանը հատելու փաստը,
- համապատասխան անձի կողմից դատական կամ վարչական վարույթում արված պաշտոնական հայտարարություն:



Հավելված 5



Հայաստանի Հանրապետության զինանշան

..... (Հարցում ներկայացնող մարմնի նշանակում)	 (Վայրը և ամսաթիվը)
Ուղղված՝	
Ում՝	
.....	
..... (Հարցում ստացող մարմնի նշանակում)	

- o ԱՐԱԳԱՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ (Հոդված 7(3))
- o ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՐՑՈՒՄ (Հոդված 9(3))

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Համաձայն «Առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին»
Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև
Համաձայնագրի 8-րդ հոդվածի

Ա. Անձնական տվյալներ

1. Լրիվ անունը (ընդգծել ազգանունը)

2. Օրիորդական ազգանունը

3. Ծննդյան ամսաթիվը և վայրը

4. Սեռը և ֆիզիկական նկարագիրը (հասակը, աչքերի գույնը, առանձնահատուկ նշաններ և այլն)

5. Հայտնի է նաև որպես (նախկին անունները, այլ օգտագործվող անուններ կամ կեղծանուններ)

6 Քաղաքացիությունը և լեզուն

7. Ընտանեկան դրությունը

- o ամուսնացած,
- o չամուսնացած
- o ամուսնալուծված
- o այրի (ամուրի)

Լուսանկար



Եթե ամուսնացած է՝

ամուսնու անունը

երեխաների (եթե առկա են) անունները և տարիքը

.....

8. Հարցում ստացած պետությունում վերջին հասցեն

.....

Բ. ԱՄՈՒՄՆՈՒ (ԵԹԵ ԱՌԿԱ Է) ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Լրիվ անունը (ընդգծել ազգանունը).....

2. Օրիորդական ազգանունը.....

3. Ծննդյան ամսաթիվը և վայրը.....

4. Սեռը և ֆիզիկական նկարագիրը (հասակը, աչքերի գույնը, առանձնահատուկ նշաններ և այլն)

5. Հայտնի է նաև որպես (ավելի վաղ անունները, այլ օգտագործվող անուններ կամ կեղծանուններ)

.....

6 Քաղաքացիությունը և լեզուն

.....

Գ. ԵՐԵՒԱՆԵՐԻ (ԵԹԵ ԱՌԿԱ ԵՆ) ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Լրիվ անունը (նշել ազգանունը).....

2. Ծննդյան վայրը և ամսաթիվը

.....

3. Սեռը և ֆիզիկական նկարագիրը (հասակը, աչքերի գույնը, առանձնահատուկ նշաններ և այլն)

.....

4. Քաղաքացիությունը և լեզուն

.....

Դ. ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱՆՁԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

1. Առողջական վիճակը (օրինակ՝ հնարավոր նշում հատուկ բուժօգնության մասով. վարակիչ հիվանդության լատինական անվանումը)

.....

Առանձնապես վտանգավոր անձ հանդիսանալու մասին նշում (օրինակ ծանր իրավախախտման մեջ կասկածվող, ագրեսիվ պահվածք)

.....

Ե. ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԱՊԱՅՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. (Անձնագրի համար)	 (տրման ամսաթիվը և վայրը)
..... (ում կողմից)	 (վավերական է մինչև)



2. (նույնականացման քարտ թիվ)	 (տրման ամսաթիվը և վայրը)
..... (ում կողմից)	 (վավերական է մինչև)
3. (Վարորդական վկայական թիվ.....)	 (տրման ամսաթիվը և վայրը)
..... (ում կողմից)	 (վավերական է մինչև)
4. (Այլ պաշտոնական փաստաթուղթ թիվ)	 (տրման ամսաթիվը և վայրը)
..... (ում կողմից)	 (վավերական է մինչև)

Զ. ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

.....
.....

.....
(Ստորագրություն) (Կնիք, դրոշմակնիք)

Հավելված 6



Հայաստանի Հանրապետության զինանշան

..... (Հարցում ներկայացնող մարմնի նշանակում)	 (Վայրը և ամսաթիվը)
Ուղղված՝	
Ում՝	
.....	
..... (Հարցում ստացող մարմնի նշանակում)	



ՏԱՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ
Համաձայն «Առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին»
Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև
Համաձայնագրի 15-րդ հոդվածի

Ա. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Լրիվ անունը (ընդգծել ազգանունը)
2. Օրիորդական ազգանունը
3. Ծննդյան ամսաթիվը և վայրը

4. Սեռը և ֆիզիկական նկարագիրը (հասակը, աչքերի գույնը, առանձնահատուկ նշաններ և այլն)
5. Հայտնի է նաև որպես (նախկին անունները, այլ օգտագործվող անուններ կամ կեղծանուններ)
- 6 Քաղաքացիությունը և լեզուն

7. Ճամփորդական փաստաթղթի տեսակը և համարը

Լուսանկար

Բ. ՏԱՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Տարանցման ձև
 - o օդով
 - o ցամաքով
 - o ծովով
2. Վերջնական նպատակակետ հանդիսացող պետություն

3. Տարանցման հնարավոր այլ պետություններ

4. Առաջարկվող սահմանային անցակետերը, ժամկետը, տարանցման ժամը և հնարավոր ուղեկցող անձինք

5. Ցանկացած այլ տարանցման պետությունում և ժամանման պետությունում ընդունման երաշխավորում (Հոդված 13, պարբերություն 2)
 - այո
 - ոչ
6. Տարանցման մերժման համար որևէ պատճառի մասին իմացություն (Հոդված 13, պարբերություն 3)
 - այո
 - ոչ



Դ. ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

.....
.....
.....
.....

.....
(Ստորագրություն) (Կնիք, դրոշմակնիք)

Համատեղ հայտարարություն 3(3) և 5(3) հոդվածների վերաբերյալ

Պայմանավորվող կողմերը հաշվի են առնում, որ Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների քաղաքացիության վերաբերյալ օրենքների համաձայն, հնարավոր չէ Հայաստանի Հանրապետության կամ Եվրոպական միության քաղաքացուն զրկել իր քաղաքացիությունից:

Կողմերը համաձայնում են ժամանակին խորհրդակցել միմյանց հետ, եթե նման իրավական վիճակը փոփոխվի:

Իսլանդիայի Հանրապետության վերաբերյալ համատեղ հայտարարություն

Պայմանավորվող կողմերը հաշվի են առնում Եվրոպական միության և Իսլանդիայի Հանրապետության միջև սերտ հարաբերությունները՝ հատկապես Շենգենյան կանոնագրի (Shengen acquis) կիրարկման, կիրառման և մշակման հետ այդ երկրի ասոցիացման վերաբերյալ 1999 թվականի մայիսի 18-ի համաձայնագրի ուժով: Նման հանգամանքներում նպատակահարմար կլինի, եթե Հայաստանը և Իսլանդիայի Հանրապետությունը կնքեն հետընդունման համաձայնագիր սույն Համաձայնագրի նույն պայմաններով:



ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2014 թվականի N 300-Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի շրջանակներում ստացվող դիմումները Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից քննարկելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմին ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետին՝ կազմակերպել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ ռեադմիսիոն գործընթացում ներառված աշխատողների ուսուցման հետ կապված աշխատանքները:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ ապահովել վտարման նպատակով Եվրոպական միության կողմից տրվող ճամփորդական փաստաթղթի օգտագործումը՝ որպես Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու հնարավորություն տվող ստանդարտ փաստաթուղթ:

5. Համաձայնագրով ստանձնած հանձնառությունների կատարման ընթացքի նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու և ծագող խնդիրները քննարկելու նպատակով ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

6. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20-օրյա ժամկետում միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավարին ներկայացնել իրենց մարմնի ներկայացուցչի տվյալները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ
2014թ. մարտի 26
Երևան

Տ. Սարգսյան



Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 19-ի N 300-Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻՍԻՅԻ)
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՍՏԱՆԶՆԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՏԱՄԲ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԵՎ ԾԱԳՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՁԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի շրջանակներում ստացվող դիմումները Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից քննարկելու կարգի և ժամկետների հետ կապված հարաբերությունները:

2. Եվրոպական միության անդամ պետության (այսուհետ՝ օտարերկրյա պետություն) տարածքում առանց թույլտվության բնակվող Հայաստանի Հանրապետության, երրորդ պետությունների քաղաքացիների հետընդունման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ պետությունների քաղաքացիների տարանցման մասին դիմումներն ստացվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում (այսուհետ՝ միգրացիոն պետական ծառայություն):

3. Միգրացիոն պետական ծառայությունը կատարում է ստացված դիմումների հաշվառումը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով, հատուկ գրանցամատյանում՝ համաձայն ձևի:

II. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼԸ

4. Միգրացիոն պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետընդունման մասին դիմումներն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) տեղեկատվական գերատեսչական համացանցի միջոցով դիմումում նշված տվյալները համեմատում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերի տեղեկատվական բազայի հետ:

5. Հետընդունման մասին դիմումում նշված տվյալները չհայտնաբերելու դեպքում, նույն օրը, միգրացիոն պետական ծառայությունը հետընդունման մասին դիմումը ոստիկանության տեղեկատվական գերատեսչական համացանցի միջոցով ուղարկում է ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:



6. Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետընդունման մասին դիմումների վերաբերյալ կարծիք է հայտնում 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաստատելով կամ ժխտելով դիմումում նշված անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու փաստը: Նույն ժամկետներում ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը տեղեկացնում է լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության և դրանց ցանկի մասին:

7. Միգրացիոն պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետընդունման մասին դիմումների պատասխանն օտարերկրյա պետության իրավասու մարմինն է ուղարկում դիմումն ստանալուց հետո 12 օրացուցային օրվա ընթացքում:

8. Միգրացիոն պետական ծառայությունը դիմումի պատասխանի մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը (այսուհետ՝ արտաքին գործերի նախարարություն):

III. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼԸ

9. Միգրացիոն պետական ծառայությունը երրորդ պետությունների քաղաքացիների հետընդունման մասին դիմումներն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է ոստիկանություն:

10. Ոստիկանությունը երրորդ պետությունների քաղաքացիների հետընդունման մասին դիմումների վերաբերյալ կարծիք է հայտնում 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաստատելով կամ ժխտելով դիմումում նշված անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք տվող կացության վավերական կարգավիճակ ունենալու կամ Հայաստանի Հանրապետության կողմից տրված վավերական մուտքի թույլտվության փաստը:

11. Միգրացիոն պետական ծառայությունը երրորդ պետությունների քաղաքացիների հետընդունման մասին դիմումների պատասխանն օտարերկրյա պետության իրավասու մարմինն է ուղարկում դիմումն ստանալուց հետո 12 օրացուցային օրվա ընթացքում:

IV. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ՝ ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼԸ

12. Միգրացիոն պետական ծառայությունն օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող՝ երրորդ պետությունների քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցման մասին դիմումներն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է ոստիկանություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն (այսուհետ՝ ազգային անվտանգության ծառայություն):

13. Ոստիկանությունն ու ազգային անվտանգության ծառայությունը տարանցման մասին դիմումների վերաբերյալ իրենց կարծիքն ուղարկում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ անհամաձայնության դեպքում ներկայացնելով հիմնավորում մերժման հիմքերի վերաբերյալ:

14. Միգրացիոն պետական ծառայությունը երրորդ պետությունների քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցման մասին դիմումների



պատասխանն օտարերկրյա պետության իրավասու մարմին է ուղարկում դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

V. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼԸ

15. Միգրացիոն պետական ծառայությունը, օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին արագացված ընթացակարգով ստացված դիմումներն ստանալուն պես, ազգային անվտանգության ծառայության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ստուգում է տվյալ անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դիմումը ներկայացրած օտարերկրյա պետության տարածք ուղղակիորեն մուտք գործած լինելու փաստը:

16. Տվյալ անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դիմումը ներկայացրած օտարերկրյա պետության տարածք ուղղակիորեն մուտք գործած լինելու փաստը հաստատվելու դեպքում, եթե դիմումում նշված են Հայաստանի Հանրապետության քաղաքացու մասին տվյալներ, միգրացիոն պետական ծառայությունը, ոստիկանության տեղեկատվական գերատեսչական համացանցի միջոցով, դիմումում նշված տվյալները համեմատում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերի տեղեկատվական բազայի հետ:

17. Տվյալ անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դիմումը ներկայացրած օտարերկրյա պետության տարածք ուղղակիորեն մուտք գործելու փաստը հաստատվելու դեպքում, եթե դիմումում նշված են երրորդ պետության քաղաքացու տվյալներ, միգրացիոն պետական ծառայությունը դիմումն ստանալու օրը ոստիկանության տեղեկատվական գերատեսչական համացանցի միջոցով այն ուղարկում է ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք տվող վավերական կացության կարգավիճակ ունենալու կամ Հայաստանի Հանրապետության կողմից տրված վավերական մուտքի թույլտվության փաստը ճշտելու նպատակով:

18. Ոստիկանությունն արագացված ընթացակարգով ներկայացված դիմումներին պատասխանում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

19. Միգրացիոն պետական ծառայությունն օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին արագացված ընթացակարգով ստացված դիմումների պատասխանն օտարերկրյա պետության իրավասու մարմնին է ուղարկում դիմումն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

VI. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձի քաղաքացիությունը և ինքնությունը հաստատելու դժվարության դեպքում՝ համապատասխան պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է հարցազրույց՝ այդ անձանց նույնականացման նպատակով:

21. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը Հայաստանի Հանրապետության կողմից հետընդունման ենթակա



այն անձանց, ովքեր չունեն ճամփորդական փաստաթղթեր, օտարերկրյա պետության իրավասու մարմնի դիմումի հիման վրա՝ դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում անվճար տրամադրում է վերադարձի վկայական՝ 120 օր վավերականության ժամկետով: Եթե այդ ընթացքում հնարավոր չի լինում անձին փոխադրել, ապա 3 աշխատանքային օրվա ընթացքում անձին տրամադրվում է նոր վերադարձի վկայական՝ նույն վավերականության ժամկետով:

22. Հայաստանի Հանրապետության կողմից հետընդունման կամ տարանցման ենթակա անձանց տեղափոխման երթուղու և օրվա մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնից տեղեկություններն ստանալուն պես միգրացիոն պետական ծառայությունը դրանք տրամադրում է ազգային անվտանգության ծառայությանը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Վ. Գաբրիելյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 19-ի N 300-Ն որոշման

Կ Ա Զ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԾԱԳՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ (աշխատանքային խմբի ղեկավար)

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Վ. Գաբրիելյան



ᠬᠢ ᠷᠣ ᠤ ᠨᠢ ᠰᠤ ᠮᠤ ᠰᠤ ᠰᠤ ᠮᠤ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՅ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ, ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ

[illegible]

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2011 թվականի N 297-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականը տալու ընթացակարգը կարգավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

- 1) Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականի նկարագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականը տալու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հնգօրյա ժամկետում նշանակել սույն որոշումից բխող միջոցառումների իրականացման պատասխանատու ստորաբաժանումներ:

3. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հնգօրյա ժամկետում սահմանել այն դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, որոնք վերադարձի վկայականներ են տրամադրում այն օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող անձանց, որտեղ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները կամ հյուպատոսական հիմնարկները բացակայում են:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

S. Սարգսյան

2011 թ. մարտի 28

Երևան



Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 24-ի N 297-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականը (այսուհետ՝ վերադարձի վկայական) Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար ժամանակավոր միանգամյա օգտագործման ճամփորդական փաստաթուղթ է:

2. Վերադարձի վկայականը 21 x 14 սմ չափսերով ուղղանկյուն ձևաթուղթ է:

3. Ձևաթղթի դիմերեսի վերևի մասում գլխատառերով տպագրվում է հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն՝ «REPUBLIC OF ARMENIA» (ԲԸՓԱԲԼԻԿ ՕՖ ԱՐՄԵՆԻԱ) բառակապակցությունը՝

1) կենտրոնում ուլտրամանուշակագույն լույսի տակ արտացոլվող գունավոր ներկերով պատկերվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը.

2) Հայաստանի Հանրապետության զինանշանից ներքև գլխատառերով տպագրվում է հայերեն՝ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ» և անգլերեն՝ «CERTIFICATE OF RETURN» (ՍԵՐՏԻՖԻԿեՅԹ ՕՖ ՐԻԹԸՐՆ) բառակապակցությունը, իսկ դրանից ներքև դրվում է վկայականի անհատական համարը, որն ուլտրամանուշակագույն լույսի տակ արտացոլվում է կանաչ գույնով:

4. Ձևաթղթի դարձերեսի վրա հայերեն, ռուսերեն և անգլերեն՝ ստորև ներկայացվող հաջորդականությամբ, հատկացված են տեղեր՝ նշելու համար հետևյալ տեղեկությունները՝

1) Հայաստանի Հանրապետության դեսպանություն/հյուպատոսություն – քաղաք.

2) տրված է (վկայականը տալու օրը, ամիսը, տարեթիվը):

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված գրառումներից հետո յուրաքանչյուր մասում համապատասխան լեզուներով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ/ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ» և «Վկայականը տալիս է Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք» բառակապակցությունները: Այսուհետև, վերստին հատկացված են տեղեր՝ նշելու համար հետևյալ անհրաժեշտ տեղեկությունները՝ ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թվականը (օրը, ամիսը, տարեթիվը), ծննդյան վայրը, վկայականն ուժի մեջ է մինչև (օրը, ամիսը, տարեթիվը):

6. Ձևաթղթում տեղ է հատկացվում նաև վկայականի անվանատիրոջ՝ 35 x 45 մմ չափսի լուսանկարի և վկայականը տրամադրող պաշտոնյայի ստորագրության համար:

7. Վկայականի ձևաթուղթը պատրաստվում է պաշտպանված թղթից, որը պատված է տարբեր գույների՝ ուլտրամանուշակագույն լույսի տակ արտացոլվող մանրաթելերով: Վկայականի տպագրության համար օգտագործվում են հետևյալ պաշտպանիչ միջոցները՝

1) իրիս տպագրություն. գույնից գույն սահուն անցում.

2) պաշտպանված հետնապատկեր. մանրագծերով կառուցված նախշեր.

3) գելեռոտիլային տարր. չընդհատվող գծերից բաղկացած գծանկար.

4) միկրոգրություն. ընթեռնելի է դառնում միայն խոշորացման դեպքում.

5) անհատական համարակալում.

6) ուլտրամանուշակագույն ներկ. այս ներկով տպված բոլոր օբյեկտներն ուլտրամանուշակագույն լույսի ներքո արտացոլվում են կանաչ գույնով:

(հավելվածը խմբ. 10.01.13 N 114-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան



Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 24-ի N 297-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականը (այսուհետ՝ վերադարձի վկայական) միանգամյա օգտագործման ճամփորդական փաստաթուղթ է, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացուն, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող՝ քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ վերադարձի վկայական հայցող) հնարավորություն է տալիս օտարերկրյա պետությունից շտապ վերադառնալ Հայաստանի Հանրապետություն՝ սահմանը հատելու իրավունք տվող օրինական փաստաթղթի բացակայության դեպքում:

2. Սույն կարգի իմաստով սահմանը հատելու իրավունք տվող օրինական փաստաթուղթ է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը (այդ թվում՝ դիվանագիտական անձնագիրը), փախստականի կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության կողմից տրված ճամփորդական փաստաթղթերը (այսուհետ՝ օրինական փաստաթուղթ), որոնք վավերական են և պիտանի են օգտագործման համար:

3. Վերադարձի վկայական տրվում է սույն կարգի 1-ին կետում նշված անձանց՝ օրինական փաստաթղթի անվավեր (ժամկետանց) լինելու, բացակայության, ընդհանրապես տրամադրված չլինելու, օգտագործման համար ոչ պիտանի լինելու և շտապ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտության դեպքում: Օգտագործման համար ոչ պիտանի են համարվում այն օրինական փաստաթղթերը, որոնք առավելապես մաշված են, վնասված են, բացակայում են կամ հստակ տեսանելի չեն անձի անհատական տվյալները (լուսանկարը), վիզաները, սահմանահատումների դրոշմակնիքները կամ դրանք պարունակող էջերը, ինչպես նաև առկա են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ կատարված նշումներ:

4. Վերադարձի վկայական տրվում է նաև օտարերկրյա պետությունում ապօրինի գտնվող և օրինական փաստաթուղթ չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձն ապահովելու համար, օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ սահմանված կարգով ներկայացված հարցման հիման վրա, այդ թվում՝ համապատասխան պետության հետ կնքված՝ առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու և տարանցիկ փոխադրման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրով (այսուհետ՝ ռեադմիսիայի համաձայնագիր)՝ նախատեսված կարգով ներկայացված հարցման կամ ռեադմիսիայի համաձայնագրով սահմանված հարցազրույցի արդյունքում կայացրած որոշման հիման վրա:



II. ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

5. Վերադարձի վկայական հայցողն անձամբ (նաև՝ փոստով) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմում է օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ (այսուհետ՝ հյուպատոսական հիմնարկ)՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն ձևի, լրացված (պարտադիր լրացման ենթակա են 1-7-րդ կետերը) և ստորագրված դիմողի կողմից.
- 2) 35 x 45 մմ չափսի երկու նույնական գունավոր լուսանկար (առավելագույնը 6 ամիս վաղեմության).
- 3) պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ կամ վճարման անհրաժեշտ վավերապայմանները և՝
- 4) Ժամկետանց կամ օգտագործման համար ոչ պիտանի անձնագրի (այլ օրինական փաստաթղթի) կամ նախկին ՀԽՍՀ քաղաքացու անձնագրի առկայության դեպքում՝ տվյալ փաստաթղթի բնօրինակը: Նախկին ՀԽՍՀ քաղաքացու անձնագիր ներկայացնելու դեպքում ներկայացվում է նաև դիմումն ընդունող հյուպատոսական հիմնարկի նստավայր պետության կամ հյուպատոսական տարածաշրջանի համապատասխան պետության քաղաքացիությունը ժխտող տեղեկանք, կամ՝
- 5) օրինական փաստաթղթի բացակայության դեպքում՝
 - ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը և (կամ) անձը հաստատող այլ փաստաթղթերի բնօրինակները (նույնականացման քարտ, Հայաստանի Հանրապետության (նաև նախկին ՀԽՍՀ) իրավասու մարմնի կողմից տրված զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական) կամ դրանց նոտարական կարգով հաստատված լուսապատճենները (առկայության դեպքում),
 - բ. տեղեկանք տվյալ բնակավայրի ոստիկանությունից (այլ իրավասու մարմնից)՝ անձնագրի կորստի կամ գողության, կողոպուտի կամ այլ հանցագործության կամ բնական կամ տեխնածին աղետի հետևանքով անձնագիրը կորցնելու մասին (առկայության դեպքում),
 - գ. վարորդական վկայականի բնօրինակը (առկայության դեպքում),
 - դ. բացակայող օրինական փաստաթղթի լուսապատճենը (առկայության դեպքում).
- 6) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխաների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստացած չլինելու դեպքում՝
 - ա. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված ծննդյան վկայականի բնօրինակը կամ օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից տրված ծննդյան վկայականի բնօրինակը կամ դրանց լուսապատճենները՝ հաստատված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
 - բ. ծնողի (ծնողների) անձնագրերի կամ նույնականացման քարտերի բնօրինակները:

6. Եթե դիմումը ներկայացնում է վերադարձի վկայական հայցողի լիազորված անձ հանդիսացող ծնողը, եղբայրը, քույրը, ամուսինը, զավակը կամ այլ լիազոր անձինք կամ օրինական ներկայացուցիչները, ապա պետք է ներկայացվեն նաև հետևյալ փաստաթղթերը՝

- 1) ծնողի դեպքում՝ ծնողի անձնագրի (նույնականացման քարտի) բնօրինակը և պատճենը, վերադարձի վկայական հայցողի անձնագրի (նույնականացման քարտի) ու ծննդյան վկայականի պատճենը, լիազորագրի բնօրինակը.



- 2) եղբոր և քրոջ դեպքում՝ նրանց անձնագրի (նույնականացման քարտի) բնօրինակը և պատճենը, ծննդյան վկայականի բնօրինակը, վերադարձի վկայական հայցողի ծննդյան վկայականի և անձնագրի (նույնականացման քարտի) պատճենները, լիազորագրի բնօրինակը.
 - 3) ամուսնու դեպքում՝ ամուսնու անձնագրի (նույնականացման քարտի) բնօրինակը և պատճենը, վերադարձի վկայական հայցողի անձնագրի (նույնականացման քարտի) և ամուսնության վկայականի պատճենները, լիազորագրի բնօրինակը.
 - 4) զավակի դեպքում՝ զավակի անձնագրի (նույնականացման քարտի) բնօրինակը և պատճենը, ծննդյան վկայականի և վերադարձի վկայական հայցողի անձնագրի (նույնականացման քարտի) պատճենները, լիազորագրի բնօրինակը.
 - 5) այլ լիազոր անձի դեպքում՝ լիազորված անձի անձնագիրը (նույնականացման քարտը), լիազորագրի բնօրինակը և վերադարձի վկայական հայցողի անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը: Այս դեպքում լիազորագիրը պետք է հաստատված լինի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
 - 6) օրինական ներկայացուցչի դեպքում՝ օրինական ներկայացուցչի անձնագիրը (նույնականացման քարտը), օրինական ներկայացուցիչ լինելը հաստատող փաստաթուղթ և վերադարձի վկայական հայցողի անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը:
7. Սույն կարգի 4-րդ կետում նշված դեպքում՝ անձին վերադարձի վկայական տրամադրելու խնդրանքով հյուպատոսական հիմնարկ կարող է դիմել նաև օտարերկրյա պետության իրավասու մարմինը: Եթե անձը հրաժարվել է լրացնել և ստորագրել դիմում-հարցաթերթիկը, նրա փոխարեն այն հայերենով կամ հայերեն թարգմանությամբ լրացնում և ստորագրում է օտարերկրյա իրավասու մարմնի պաշտոնյան:

III. ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՐԶՈՒՄԸ

8. Անձի ինքնությունը և քաղաքացիությունը պարզվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե՝
- 1) ներկայացվում է անվավեր (վավերականության ժամկետը լրացած) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտ, կամ՝
 - 2) ներկայացվում է օգտագործման համար ոչ պիտանի Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտ, կամ՝
 - 3) ներկայացվում է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական, կամ՝
 - 4) ներկայացվում է նախկին ՀԽՍՀ քաղաքացու անձնագիր և դիմումն ընդունած հյուպատոսական հիմնարկի նստավայր պետության կամ հյուպատոսական տարածաշրջանի պետության քաղաքացիություն ունենալը ժխտող փաստաթուղթ, կամ՝
 - 5) ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձի, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող քաղաքացիություն չունեցող անձի այդ կարգավիճակը հիմնավորող և ինքնությունը հաստատող փաստաթուղթ:
9. Անձի ինքնության և քաղաքացիության պարզումը կատարվում է Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում (այսուհետ՝ բնակչության պետական ռեգիստր) պահվող տվյալների հիման վրա, եթե՝
- 1) չի ներկայացվում սույն կարգի 8-րդ կետում թվարկված փաստաթղթերից ոչ մեկը.



- 2) ներկայացվող փաստաթուղթը կասկած է հարուցում (առկա են չհաստատված ջնջումներ կամ ուղղումներ, լուսանկարի փոխման հետքեր, կնիքները կամ դրոշմակնիքները հստակ չեն, փաստաթուղթն առավելապես մաշված է կամ առկա են այլ հիմնավոր փաստական հանգամանքներ):

10. Անձի քաղաքացիության պարզումը կատարվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ վերադարձի վկայական հայցողի՝ Հայաստանի Հանրապետության անձնագիր ստացած չլինելու դեպքում՝ սույն կարգով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

11. Անձի ինքնության և քաղաքացիության պարզումը կարող է կատարվել նաև ռեադմիսիայի համաձայնագրով սահմանված հարցազրույցի արդյունքում կայացրած որոշման հիման վրա, եթե անձը չի ներկայացնում իր ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող որևէ փաստաթուղթ կամ հանդես է գալիս կեղծ տվյալներով:

12. Անձի ինքնությունը պարզելու համար ներկայացված տվյալները՝ լուսանկարը և մյուս անհատական տվյալները, համեմատվում են ներկայացված փաստաթղթերում առկա կամ բնակչության պետական ռեգիստրում պահվող տվյալների հետ: Անձի ինքնությունը համարվում է պարզված, եթե համեմատվող բոլոր անհատական տվյալները համընկնում են:

13. Անհատական տվյալների (լուսանկար, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ և այլն) անհամապատասխանության դեպքում վերադարձի վկայականի տրամադրումը մերժվում է:

IV. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

14. Անձի վերաբերյալ բնակչության պետական ռեգիստրում պահվող տվյալների ստուգումը կատարվում է հետևյալ եղանակներով՝

- 1) «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգի (այսուհետ՝ համակարգ) միջոցով.
- 2) համակարգի բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) հարցում կատարելու միջոցով:

15. Նախարարություն հարցում կատարվում է հյուպատոսական հիմնարկի կողմից դիմումն ընդունելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ Էլեկտրոնային եղանակով: Հարցմանը կցվում են ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ բացառությամբ պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի կամ անհրաժեշտ վավերապայմանների:

16. Նախարարությունում հարցումն ստանալուց հետո համակարգի միջոցով կատարվում է անձի ինքնության և քաղաքացիության պարզում և պատասխանն էլեկտրոնային եղանակով ուղարկվում է հյուպատոսական հիմնարկ: Այս գործողությունը կատարվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

17. Հյուպատոսական հիմնարկի կողմից համակարգի միջոցով անձի ինքնության և քաղաքացիության պարզումը կատարվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե բնակչության պետական ռեգիստրում առկա են անձի անհատական տվյալները և Էլեկտրոնային լուսանկարը:

18. Բնակչության պետական ռեգիստրում անձի անհատական տվյալների և Էլեկտրոնային լուսանկարի բացակայության կամ դրանց դրոշակի անհամապատասխանությունների դեպքում՝ նախարարության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից համակարգի միջոցով մեկօրյա ժամկետում հարցում է կատարվում Հայաստանի Հանրապետության



կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն (այսուհետ՝ ոստիկանություն):

19. Ոստիկանությունը հարցումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տվյալ անձի լուսանկարով անձնագրային գործողությունների վերաբերյալ դիմումը թվայնացնում և համակարգի միջոցով ուղարկում է հարցումը կատարողին:

20. Ոստիկանության կողմից լրացուցիչ ստուգումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին հարցումներ կատարելու անհրաժեշտության դեպքում սույն կարգի 19-րդ կետում նշված ժամկետը ոստիկանության կողմից կարող է երկարաձգվել առավելագույնը տասն աշխատանքային օրով:

21. Նախարարությունը ոստիկանության պատասխանն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատասխանն ուղարկում է հարցումը կատարած հյուպատոսական հիմնարկ:

V. ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Հյուպատոսական հիմնարկն անձի ինքնությունը և քաղաքացիությունը պարզելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դիմողին է տրամադրում վերադարձի վկայականը:

23. Վերադարձի վկայականը հայցողի կողմից դիմումն անձամբ ներկայացնելու դեպքում վերադարձի վկայականը վերջինիս ցանկությամբ և իր հաշվին կարող է տրամադրվել նաև փոստով՝ պատվիրված նամակով: Եթե դիմումը ներկայացվել է փոստով կամ օրինական ներկայացուցչի կամ լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա վերադարձի վկայականը կարող է հանձնվել միայն վերադարձի վկայականը հայցողի անձամբ ներկայանալու դեպքում, վերջինիս ինքնությունը պարզելուց հետո, բացառությամբ սույն կարգի 27-րդ կետի:

24. Փոստով դիմելու իրավունք ունի վերադարձի վկայական հայցողը, իսկ վերջինիս օրինական ներկայացուցիչը կամ լիազոր անձը դիմումը ներկայացնում են անձամբ:

25. Վերադարձի վկայականը տրամադրվում է մեկ ամիս ժամկետով: Ռեադմիսիայի համաձայնագրով նախատեսված դեպքում այն կարող է տրամադրվել տվյալ համաձայնագրով սահմանված ժամկետով:

26. Ռեադմիսիայի համաձայնագրերով սահմանված դեպքերում վերադարձի վկայականը կարող է տրվել նաև ոչ ճիշտ տվյալներով, եթե հարցազրույցի արդյունքում բացահայտվում են տվյալ անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող տվյալներ: Այս դեպքում վերադարձի վկայականի դիմերեսի ձախ վերևի անկյունում կատարվում է «Ռ.Ճ.Տ.» (ոչ ճիշտ տվյալներ) նշումը:

27. Առանձին դեպքերում, երբ անձը գտնվում է այնպիսի պետությունում կամ վայրում, որտեղից հնարավոր չէ կամ դժվար է դիմել հյուպատոսական հիմնարկ, ապա վերադարձի վկայականը կարող է տրամադրվել անձի օրինական ներկայացուցչի կամ լիազոր անձի միջոցով՝ նախարարության կողմից: Նախարարությունն անձի ինքնությունը և քաղաքացիությունը պարզելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դիմողին է տրամադրում վերադարձի վկայականը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ
ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ – ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ**

(լրացնել պարզ և ընթերցելի, 1-7-րդ կետերը ենթակա են պարտադիր լրացման)

Անձնագրի (այլ փաստաթղթի)

- ☐ բացակայության (կորած, գողացված և այլն)
- ☐ անվավեր (ժամկետանց) լինելու
- ☐ օգտագործման համար ոչ պիտանի լինելու
- ☐ ընդհանրապես տրամադրված չլինելու

(նշել V-ով)

լուսանկարի
համար
35 X 45 մմ

պատճառով խնդրում եմ տրամադրել Հայաստանի Հանրապետության
վերադարձի վկայական:

1*	Ազգանուն	
2*	Անուն	
3*	Հայրանուն	
4*	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	
5*	Ծննդյան վայրը (երկիրը, քաղաք/գյուղ)	
6*	Քաղաքացիությունը	
7*	Այլ պետության քաղաքացիության առկայությունը	
8	ՀՀ-ում հաշվառման հասցեն (մարզ, քաղաք/գյուղ, փողոց, տուն/բն.) և հեռախոսահամարը	_____ _____
9	Որտեղ, երբ, և որ մարմնի կողմից էր ձևակերպված կորած անձնագիրը, այլ փաստաթուղթը	
10	Տեղեկություններ ինձ հետ գտնվող ընտանիքի անդամների մասին (նշել նրանց վերաբերյալ 1-6-րդ կետերով սահմանված տվյալները)	_____ _____ _____
11	ՀՀ-ից ելքի օրը, ամիսը, տարեթիվը (կամ մոտավոր)	
12	ՀՀ-ից մեկնման նպատակը	
13	Տվյալ երկրում փաստացի բնակության հասցեն և հեռախոսահամարը	
14	Էլեկտրոնային փոստի հասցեն (ըստ ցանկության)	
15	ՀՀ-ում բնակվող մերձավոր ազգականների կամ այլ ազգականների անունները, ազգանունները և հասցեները, որոնց հետ կարելի է կապվել անհրաժեշտության դեպքում	



16	ՀՀ վերադառնալու օրը, ամիսը, տարեթիվը	_____ 20__ թ.
17	ՀՀ վերադառնալու երթուղին և տրանսպորտի միջոց (հայտնի լինելու դեպքում)	
18	Լրացման օրը, ամիսը, տարեթիվը	_____ 20__ թ.

Հավաստում եմ իմ կողմից ներկայացված բոլոր տվյալների և լուսանկարի իսկությունը, ինչի համար ստորագրում եմ:

☐ Խնդրում եմ ՀՀ վերադարձի վկայականն իմ հաշվին ուղարկել _____

(նշել փոստային ծառայությունը)

փոստային ծառայության միջոցով, հետևյալ հասցեով _____

(երկիր, մարզ /ժեգիոն, քաղաք/գյուղ, փողոց, տուն/շենք, բն., փոստային ինդեքս,

ստացոլի անունը, հեռախոսահամարը)

Դիմումը ներկայացվում է վերադարձի վկայական հայցողի _____ -ի կողմից:
(Լրացնել, եթե դիմումը ներկայացվում է հայցողի օրինական ներկայացուցչի կամ լիազոր
անձի կողմից)

Դիմող _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ

Տվյալները ստուգված են

(հյուպատոսի ստորագրությունը)

_____ 20 թ.

(*ձևը խմբ. 10.01.13 N 114-Ն*)

(*հավելվածը լրաց. 15.03.12 N 288-Ն, խմբ. 10.01.13 N 114-Ն*)



ՀԱՎԵԼՎԱԾ 4

ԵՄ-Ի՝ ՎՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ
ԵՄ Խորհրդի 1994թ. նոյեմբերի 30-ի առաջարկությունում ամրագրված ձև

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

.....

Գրանցման համարը Փաստաթղթի համարը

Վավերական է մեկանգամյա ճանապարհորդության համար

սկսած..... մինչև.....

Անուն.....

Ազգանուն.....

Ծննդյան ամսաթիվ

Հասակ.....

Տարբերակիչ հատկանիշներ.....

Ազգություն.....

Բնակության երկրի հասցեն (եթե հայտնի է).....

.....

Տրամադրող մարմին.....

Կնիք/Դրոշմ Տրման վայրը

Տրման ժամկետը.....

Ստորագրություն.....

.....

Նշումներ/Դիտարկումներ

.....

.....

.....

ԼՈՒՍԱՆԿԱՐ



ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2011 թվականի N 1360-Ն

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ
ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՅՎՈՂ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 1073-Ն ԵՎ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N
1795-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հա-
յաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող
անձանց հետընդունման մասին համաձայնագրերի շրջանակներում օտարերկրյա պետու-
թյուններից ստացվող դիմումները Հայաստանի Հանրապետության պետական մարմիննե-
րի կողմից քննարկվելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձանց հե-
տընդունման մասին համաձայնագրերի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության
համար լիազոր մարմին ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառա-
վարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրա-
պետության ոստիկանության պետին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության բնակ-
չության ռեգիստրից համապատասխան տվյալների տրամադրումը Հայաստանի Հանրա-
պետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառա-
յությանը:

4. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի
17-ի «2008 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան և Շվեդիայի Թագավորության կառավարության միջև առանց թույլտվության
բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրի շրջանակներում շվե-
դական կողմից ստացվող դիմումները Հայաստանի Հանրապետության պետական
մարմինների կողմից քննարկվելու կարգը հաստատելու մասին» N 1073-Ն որոշումը:

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի
20-ի «Առանց թույլտվության գտնվող անձանց հետընդունման մասին» համաձայ-
նագրի իրականացման գործում իրավասու մարմնի մասին» N 1795-Ն որոշումը:

5. Սույն որոշման դրույթները չեն տարածվում ուժի մեջ մտած այն միջազգային պայմա-
նագրերի վրա, որոնցով նախատեսված են պայմանագրի իրականացման համար պատաս-
խանատու այլ իրավասու մարմիններ:



5.1. Սույն որոշման դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրի կիրառման հետ կապված հարաբերությունների վրա: (5.1-ին կետը լրաց. 19.03.14 N 289-Ն)

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ
2011թ. սեպտեմբերի 28
Երևան

Տ. Սարգսյան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 22-ի N 1360-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՅ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՎԵԼՈՒ

1. Օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա քաղաքացիների հետընդունման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ պետությունների քաղաքացիների տարանցման մասին դիմումները (այսուհետ՝ դիմումներ) ստացվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում (այսուհետ՝ միգրացիոն պետական ծառայություն):

2. Միգրացիոն պետական ծառայությունն ստացված դիմումները հաշվառում է հատուկ գրանցամատյանում՝ համաձայն ձևի:

3. Միգրացիոն պետական ծառայությունը դիմումներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն (այսուհետ՝ ոստիկանություն):

4. Ոստիկանությունը՝

- 1) օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետընդունման դիմումների վերաբերյալ կարծիք է հայտնում 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաստատելով կամ ժխտելով դիմումում նշված անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու փաստը.
- 2) օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող օտարերկրյա քաղաքացիների հետընդունման դիմումների վերաբերյալ կարծիք է հայտնում 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաստատելով կամ ժխտելով դիմումում նշված անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք տվող կացության կարգավիճակ ունենալու կամ Հայաստանի Հանրապետության կողմից տրված մուտքի թույլտվության փաստը:



5. Միգրացիոն պետական ծառայությունը սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված անձանց հետընդունման մասին դիմումներն անհրաժեշտության դեպքում միաժամանակ ուղարկում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն (այսուհետ՝ ազգային անվտանգության ծառայություն) և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն (այսուհետ՝ արտաքին գործերի նախարարություն), որոնք 15 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում են դիմումների վերաբերյալ իրենց կարծիքները:

6. Միգրացիոն պետական ծառայությունն օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող երրորդ պետությունների քաղաքացիների Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցման վերաբերյալ դիմումներն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն: Վերջիններս դիմումների վերաբերյալ իրենց կարծիքն ուղարկում են 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհամաձայնության դեպքում ներկայացնելով հիմնավորում մերժման հիմքերի վերաբերյալ:

7. Միգրացիոն պետական ծառայությունը, հիմք ընդունելով ստացված պատասխանները, սույն կարգի 4-րդ և 5-րդ կետերում նշված դեպքերում՝ 5 աշխատանքային օրվա, իսկ 6-րդ կետում նշված դեպքում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում և օտարերկրյա պետության իրավասու մարմին է ուղարկում դիմումների պատասխանները:

8. Հայաստանի Հանրապետության կողմից հետընդունման ենթակա անձանց տեղափոխման երթուղու և օրվա մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնից տեղեկություններն ստանալուն պես միգրացիոն պետական ծառայությունը դրանք տրամադրում է ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերին:

9. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը Հայաստանի Հանրապետության կողմից հետընդունման ենթակա այն անձանց, ովքեր չունեն ճամփորդական փաստաթղթեր, օտարերկրյա պետության իրավասու մարմնի դիմումի հիման վրա, դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականի նկարագիրը և տալու կարգը հաստատելու մասին» N 297-Ն որոշմամբ հաստատված ձևի վերադարձի վկայական՝ առնվազն 60 օր վավերականության ժամկետով: Եթե այդ ընթացքում հնարավոր չի լինում անձին փոխադրել, ապա առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում անձին տրամադրվում է նոր վերադարձի վկայական՝ նույն վավերականության ժամկետով:

10. Անձի քաղաքացիությունը և ինքնությունը հաստատելու դժվարության և օտարերկրյա պետության կողմից խնդրանքի առկայության դեպքում միգրացիոն պետական ծառայությունը, ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը և արտաքին գործերի նախարարությունը համապատասխան օտարերկրյա պետություն կարող են գործողել իրենց աշխատողներին անձի հետ հարցազրույց անցկացնելու նպատակով: Նման դեպքերում հարցազրույցներ կարող են անցկացվել նաև օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների ներկայացուցիչների միջոցով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար

Դ. Սարգսյան



ՀԱՎԵԼՎԱԾ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 Դեկտեմբեր 2012, 1228 - Ա.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ
(ՌԵԱԴԱԻՄԵՆՏԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐՑ ԲԻՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 5-րդ կետի պահանջներով՝ Հաստատել «Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական միություն հետընդունման (ռեադափսիայի) մասին» համաձայնագրից բխող գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:



Հավելված
ՀՀ վարչապետի 2012 թ.
դեկտեմբերի 12 -ի N 1228 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ
(ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻԻՑ ԲԻՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումները	Գործողությունը	Պատասխանատու կատարողը	Ժամկետը
1.	Հ ա մ ա ձ ա յ ն ա գ ը ղ ստանձնած հանձ- նառությունների կա- տարման ընթացքի նկատմամբ մոնիթո- րինգ իրականացնելու և ծագող խնդիրները քննարկելու նպատա- կով ձևավորել միջգե- րատեսչական աշխա- տանքային խումբ և հաստատել դրա կազ- մը	«Հայաստանի Հանրա- պետություն - Եվրոպա- կան միություն հետըն- դունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշա- կում	ՀՀ տարածքային կ ա ռ ա վ ա ղ ա ղ ա ղ նախարարության միգրացիոն պե- տական ծառայու- թյուն ՀՀ արտաքին գոր- ծերի նախարարու- թյուն ՀՀ կառավարու- թյանն առընթեր ՀՀ ոստիկանու- թյուն ՀՀ կառավարու- թյանն առընթեր ազգային ան- վտանգության ծա- ռայություն	2013թ. հունվարի 3-րդ տաս- նօրյակ
2.	ՀՀ տարածքային կա- ռավարման նախարա- րության միգրացիոն պետական ծառայու- թյան աշխատակազմի աշխատողների թիվն ավելացնել մեկով հա- մաձայնագրի իրակա- նացման համար իրա- վասու մարմնի պար- տականությունների կատարման ապահով- ման նպատակով	«Հայաստանի Հանրա- պետության վարչապետի 1998 թվականի նոյեմբե- րի 6-ի «Պետական կա- ռավարման մարմինների աշխատողների առավե- լագույն թվաքանակ և ղե- կավարների տեղակալ- ների թվաքանակ սահ- մանելու մասին» N 620 որոշման մեջ փոփոխու- թյուն կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում	ՀՀ տարածքային կ ա ռ ա վ ա ղ ա ղ ա ղ նախարարության միգրացիոն պե- տական ծառայու- թյուն	2012թ. դ ե կ տ ե մ - բերի 2-րդ տաս- նօրյակ



3.	Կազմակերպել ուսուցում հետընդունման գործընթացում ներառված մարմինների (ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ ծառայություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն) աշխատողների համար	«Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական միություն հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում համապատասխան հանձնարարականի նախատեսում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն	2013թ. հունվարի 3-րդ տասնօրյակ
4.	Ապահովել ԵՄ-ի՝ վտարման նպատակով տրվող ստանդարտ ճամփորդական փաստաթղթի օգտագործումը՝ որպես ՀՀ մուտք գործելու հնարավորություն տվող փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական միություն հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում համապատասխան դրույթի ներառում	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն	2013թ. հունվարի 3-րդ տասնօրյակ



5.	Ապահովել հետընդունման արագացված ընթացակարգով ստացված հայցերին 2 աշխատանքային օրվա, իսկ սովորական ընթացակարգով՝ 12 օրացուցային օրվա ընթացքում պատասխանելու հնարավորությունը	5.1. ՀՀ քաղաքացիների անձնագրերի տեղեկատվական բազայից օգտվելու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը հասանելիության ապահովում: Այդ նպատակով՝ ա. «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում բ. ֆինանսավորման խնդրի լուծումից հետո սարքի ձեռք- բերում և տեղադրում գ. համակարգչային կապի հաստատումից հետո ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության առանձնացված համակարգչում համապատասխան ծրագրերի տեղադրում 5.2. ՄԷԿՏ համակարգից՝ օդային ճանապարհով կատարված ելքերի մասին տվյալների ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը հասանելիության ապահովում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ կառավարությանն առնչվող ՀՀ ոստիկանություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ՀՀ կառավարությանն առնչվող ավտանցության ծառայություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն	2012թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ 2012թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2013թ. հունվարի 3-րդ տասնօրյակ 2013 թ. առաջին կիսամյակ
----	--	--	---	---



6.	Ապահովել հետընդունման ենթակա անձին 6 ամսվա վավերականության ժամկետով վերադարձի վկայականի անվճար տրամադրումը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականի նկարագիրը և տալու կարգը հաստատելու մասին» N 297-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի «Օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագրերի շրջանակներում օտարերկրյա պետություններից ստացվող դիմումները Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից քննարկվելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1073-Ն և 2005 թվականի հոկտեմբերի 20-ի N 1795-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1360-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2013թ. հունվարի 3-րդ տասնօրյակ
7.	Ապահովել անձի նույնականացման նպատակով հարցազրույցի կազմակերպումը համապատասխան պետությունում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից	«Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական միություն հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում համապատասխան հանձնարարականի նախատեսում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2013թ. հունվարի 3-րդ տասնօրյակ



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Halibronner Kay «Readmission agreements and the obligation on states under Public International Law to readmit their own and foreign nationals» ZaoRV57 (1997) pp. 1-49
2. И. В. Плюгина «Проблемы заключения и реализации соглашений о реадмиссии: международно-правовой аспект» // ж-л Российское право 2010 N 4
3. European Commission (2002) Communication from the Commission to the Council and the European Parliament on a Community return Policy on illegal residents, COM (2002) 504 final
4. Директива Европарламента и Совета об общих стандартах и процедурах применяемых в государствах-членах ЕС, по вопросам возвращения незаконно пребывающих граждан третьих государств (одобрено 18 июня 2008г.) Council of the European Union, 8499/2/03/ REV
5. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լատվիայի Հանրապետության Կառավարության միջև անձանց հանձնման և ընդունման մասին
6. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Դանիայի Թագավորության Կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու մասին
7. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լիտվայի Հանրապետության Կառավարության միջև առանց թույլտվության ապրող անձանց հետ ընդունման (ռեադմիսիայի) մասին
8. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Շվեյցարիայի Դաշնային Խորհրդի Կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունման մասին
9. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու և տարանցիկ փոխադրելու մասին
10. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բուլղարիայի Հանրապետության Կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունման մասին
11. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Շվեդիայի Թագավորության Կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց մասին
12. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության) միջև անօրինական բնակություն հաստատած անձանց վերադառնալու մասին
13. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Նորվեգիայի Թագավորության Կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունման մասին
14. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետ ընդունման մասին
15. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև ռեադմիսիայի մասին



16. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց մասին հետընդունման (ռեադմիսիայի) մասին
17. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք
18. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք
19. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք
20. ՀՀ կառավարության 2011թ. մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականի նկարագիրը և տալու կարգը հաստատելու մասին «թիվ 297-Ն որոշում
21. ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի «Օտարերկրյա պետության տարածքում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագրերի շրջանակներում օտարերկրյա պետություններից ստացվող դիմումները Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից քննարկելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1073 և 2005թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1975-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1360-Ն որոշում
22. ՀՀ վարչապետի 2012թ. դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին թիվ 1228-Ա որոշում
23. ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 300-Ն որոշում
24. MOM и ФМС России, “Руководство по реадмиссии для экспертов и специалистов практиков. Том 1. Опыт избранных стран по вопросам реадмиссии и возвращения.” MOM (2009).
25. MOM и ФМС России, “Руководство по реадмиссии для экспертов и специалистов практиков. Том 2. Практика реализации соглашений о реадмиссии в Российской Федерации” MOM (2009).





International Organization for Migration (IOM)
Organisation Internationale pour les Migrations (OIM)
Organización Internacional para las Migraciones (OIM)

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)

Հայաստանում ռեադմիսիոն (հետընդունման) գործերի վարույթը
Ուղեցույց և ուսուցողական նյութեր հետընդունման գործընթացում ներառված պետական
մարմինների պաշտոնյաների համար

Հրատարակության պատրաստեց՝ ՄՄԿ-ի Հայաստանում
ծրագրերի մշակման և իրականացման բաժինը

Հեղինակներ՝

Թարգմանիչ՝
Տեխնիկական խմբագիր՝
Էջադրող՝
Շապիկի ձևավորումը՝

Դ. Թումասյան (խմբագիր)
Վ. Բախշեցյան, Ռ. Եզանյան
Ա. Ղալամքարյան, Ա. Այվազյան
Ա. Թովմասյան
Գ. Սահակյան
Վ. Ասրինի



Էջադրվել և տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
ք. Երևան, 0009, Մաշտոցի պողոտա 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 581059; 561526
Հեռապատճեն՝ (+374 10) 587669
antares@antares.am
<http://www.antares.am>

